

26.635

թիւ 16 — Հրատ. Ս. Դ. Հեղ. Կառ. Ստեբ. Շրջանի Գործ. Յան է

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

# ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

ՊՐԱԿ II



Տ Պ Ա Ր Ա Ն  
ԿԵՐԻՏԱՍԱՐԻ ՀԱՅՍՏԱՆԻ  
ՓՐԱՎԻՏԷՆՍ  
1916

335

Մ-78



335  
U-72

304  
13 APR 2011  
-h

Թիւ 16.— Հրատ. Ս. Դ. Հիւշ. Կառ. Ամեր. Շրջանի Բարձ. Յան. է

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

# ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

ՊՐԱԿ II



ՍՈՒՐԵ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ST. NERSES SHNORHALI  
LIBRARY

Տ Պ Ա Ր Ա Ն  
«ՆԵՐՍԵՍԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ», Ի  
ՓՐԱԿԻՏԷՆՍ  
1916



1/9 9P

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

---

1. — Նախաբան.
2. — Ներածութիւն.
3. — «Սօցիալիստ Կեանք»ի հարցաւորանք.
4. — Էդուարդ Բերնսայն.
5. — Էդուարդ Վայեան.
6. — Էմիլ Վանդերվելդ.
7. — Ա. Բէքէլ.
8. — Էմրիկօ Ֆերրի.
9. — Ալգերնուն Լի.
10. — Գիւսաւ Շերվէ.
11. — Գ. Պլեխանով.
12. — Յաւելուած. — Կոմունիստական Մանիֆէստ. գրքոյկի բովանդակութեան մասին. Հէրվէ. Գ. Պլեխանով.
13. — Մեր վերջին խօսքը.

# Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Սօցիալիզմի և Հայրենիքի, Սօցիալիզմի և Ազգութեան մասին՝ այսօր էլ, մեր գրածներինց մի տող անգամ չնշելու, սրբագրելու հարկի տակը չենք գտնուում, բարեբախտաբար, թէև երկար տարիներ են անցել և շատ ծանրակշիռ, պատմական խոշոր անցքեր տեղի ունեցել։ Դէպքերը մէկը միւսի յետևից եկան՝ ամէն տեսակէտով, մեզ ու մեր Կուսակցութեան դիրքը, գաղափարաբանութիւնը արդարացրին, աւելի պայծառ, յստակ դարձրին։

Դեռ 1907-ին, մեր Կուսակցութեան դիրքը աւելի որոշ կերպով արտացոլացնելու և նրա՝ շատ տարիներ առաջ՝ պաշտպանած թէզերը է՛լ աւելի ամրապնդելու և նոր օրինակներով ցոյց տալու համար՝ հրատարակեցինք «ՍՕՅԻԱԼԻԶՄ և ՀԱՅՐԵՆԻՔ» գրքոյկը։ Դա՝ այդ ուղղութեամբ եղած մեր ձեռնարկների առաջին պրակն էր։ այժմեանը նրա շարունակութիւնն է, կազմում է ԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿԸ։ Եւ դրանք իրարու հետ սերտ առնչութիւն ունին։ Յոյս ունինք, որ մեզ պիտի յաջողուի հրատարակել՝ այդ հարցը սպառելու համար, մէկ կամ երկու ուրիշ Պրակներ էլ։

Այս գրքոյկը լաւ հասկանալու համար, ընթերցողին յանձնարարում ենք՝ նախ՝ ուշի ուշով կարդալ Առաջին Պրակի մեր Յառաջաբանը, և Ժօրէսի,



1916-2011



Հէրվէի և Լիբերտադի պաշտպանած թէզերն ու եզրակացութիւնները՝

Ինչպէս յայտնի է, Կլիյնանկուրի Սօցիալիստ Հասարակապետական Կօմիտէի նախաձեռնութեամբ, Մայիս 27-ին, 1905, հրապարակային ընդդիմախօսական վիճաբանութիւն տեղի ունեցաւ Ժօրէսի, Հէրվէի և Լիբերտադի միջև։ Նիւթն էր «Սօցիալիզմ և Հայրենիք»։

Այդ հակաճառութիւնից յետոյ, կրքերը աւելի բորբոքուեցան և սուր վիճաբանութիւն սկսեց ծայր առնել թէ՛ մայրաքաղաքի և թէ՛ դաւառական մամուլի մէջ։ Անմասն չը մնաց և՛ միւս երկրների մամուլը։ Խնդիրը ընդհանրական, համաեւրոպական հանդամանք առաւ։ Միջազգայնականը մասնաւորապէս դրանով զբաղուեցաւ։

Տրուած խնդրի լուրջ և բազմակողմանի կերպով պարզաբանութեան համար՝ Պարիզում, հանգուցեալ Յրանսիա դը Պրեսանսէի և Պիէռ Ռիւսօտէլի խմբագրութեամբ հրատարակուած «Սօցիալիստ Կեանք»ի (La Vie Socialiste) խմբագրութիւնը չորս բանաձև կազմեց և հարց ու փորձի դրեց՝ բոլոր երկրների յայտնի սօցիալիստներին դիմելով։

Հարցուփորձի պատասխանները սկսուած են ցրելուիլ 1905-ի Մայիս ամսից։

Այս ՊՐԱԿով տալիս ենք Էտուարդ Բերնշտայնի, Է. Վայեանի, Է. Վանդերվիլդի, Ա. Թէրէլի, Էնրիկօ Յերրիի, Ալգերնուն Լիի, Գիւստաւ Հերվէի և Գ. Պլեխանովի պատասխանները։

Տրուած պատասխանները կարդալուց յետոյ, ընթերցողի մասնաւոր ուշադրութեանն ենք յանձնարարում՝ գրքայկիս վերջին մասում ամփոփուած

ՅԱԼԵԼՈՒԱՆՆԵՐ, որ գալիս է շատ մութ և հակասական կէտեր աւելի պայծառ կերպով լուսաբանելու։

Ի՞նչ է մեր մասնաւոր նպատակը։ Ինչո՞ւ այս հրատարակութիւնը արեան այս օրերի մէջ, երբ խօսքից աւելի դուրս է պէտք, բառից աւելի զէնք՝ թշնամու դէմ շողացնելու համար։— Մեր նպատակը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ մեր ցուած ոյժերի միջեւ մտքի եւ գործի համագործակցութիւն առաջ բերել, որքան կարելի է՝ լայն սահմանների մէջ։ Այդ կը լինի, երբ բոլոր թիւրիմացութիւնները կը բարձուին։

Այս օրերումս, երբ ընդհանուր գործակցութիւն է պահանջուում, երբ ներկայացուած խնդիրները ամենակենսական նշանակութիւն ունին հայ բոլոր դասակարգերի եւ կուսակցութիւնների համար, — անհրաժեշտ է, եւ համագործակցութեան ուժեղ պայմաններից մէկը, որ մեր ժողովուրդը, որքան կարելի է, ի մօտ լաւ համաչէ իր մէջ գործող Կուսակցութիւնների գաղափարաբանութիւնը եւ նրանց ներկայ ու անցեալ գործունէութիւնը։

Շատ չարիքներ, բազմաթիւ տկարութիւններ յառաջացան՝ իրարու պէտք եղածին պէս լաւ չը ճանաչելուց։ Այդ բոլորը պէտք է վերանան։

Մեր ոյժերի սահմանների մէջ՝ այդ ուղղութեամբ ջանք չը պիտի խնայենք։

Մենք քննադատութիւնից փախչողը չենք, ընդհակառակը՝ մեր սրտին աւելի քան մօտիկ է և օգտակար, որ մեր Կուսակցութեան իւրաքանչիւր քայլը, խօսքը ամենախիստ քննադատութեան ենթարկուի։ Կուսակցութիւնների կեանքը ամէնքի առաջ բաց պիտի լինի, նա փակ դուռ չը պիտի ունենայ։



կուսակցապայքարը լոկ հասարակական շահի տեսակէտից պիտի մշուի:

Վստահ մեր կուսակցական գաղափարաբանութեան և գործելակերպի ճշմարտութեան վրայ, մենք շարունակում ենք մեր փշոտ, մեր արիւնոտ ուղին: Բայց ինչ որ պահանջում ենք, այդ այն է՝ որ մեր հակառակորդները նախ մեզ ճանաչեն և մեզ դատեն՝ մեր գործքերով, մեր խօսքերով:



## Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հայ կեանքը մեզնից առաջ էլ գործ է ունեցել Միջազգային գաղափարների հետ, որոնցից նա ծծել, առել, իւրացրել է պէտք եղածը և իր օրգանականութեանը պատշաճ հընելով՝ ինքնուրոյնացրել է, իր մասնայատուկ դրոշմն է նրանց վրայ դրել. և այդպիսով՝ նոր խթաններով, աւելի կենսունակ ազդեակներով զինուած, ամրապնդուած՝ շարունակել է իր յառաջխաղացումը պատմութեան անծայրածիր ջրջաններում:

Նազովրեցի Յիսուսի քարոզածները գերազանցօրէն Միջազգայնական սկզբունքներ էին. նրանք Հայ կեանքի, Հայ Մշակոյթի, Հայ Իմացականութեան առաջը դրուեցան, մեր պատմական աւանդութեան համեմատ, նոյն իսկ Յիսուսի Առաքելների կողմից:

Միջազգային այդ գաղափարների մեծ և գլխաւոր մասերը. աւելի կորով և ուժգնութիւն, թարմութիւն ու վերանորոգչութիւն բերողները, ներկայացող նիւթական ու հոգեկան այրող պահանջներին բաւականութիւն տուողները՝ կըլաւուեցան, մարսուեցան. և կազմուեցաւ Հայ ուրոյն կեանքի արդիւնքն եղող՝ հոգեկան, բարոյական, մշակութական այն անհատականութիւնը, որ կոչոււմ է Եկեղեցի՝ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅԵ, որ Միջազգայնական լինելով հանգերձ՝ Հայկական է, ընդհանրական, տիեզերական մնալով միատեղ՝ մասնաւոր է, ազգային է. պատմա-անհատական մի գոյութիւն է:

Հակառակ իր քաղաքական բաժանումներին և աննպաստ պայմաններին՝ Հայ կեանքը ո՛չ բեկորներ էր, ո՛չ էլ անգիտակից մարգագանգուածներ՝ այս ու այն կողմ հրուած. — ո՛չ Այդ կեանքը՝ պատմական ոյժերի գասաւորութեան համեմատ՝ իր միջավայրի բնական տարբերութիւնները ունենալով հանդերձ, կազմում էր միաձուլութիւն, մի ամբողջութիւն,



մի պատմա-անհատականութիւն,— այն ինչ որ քաղաքագիտական բառով կոչուում է Ազգութիւն: Կար Հայ Հայրենիք՝ թէ՛ և Նուաճուած. կար Հայ Ազգ՝ թէ՛ և ենթակայ:

Մեր ժամանակակից պատմութեան մէջ՝ Հայ կեանքը նորից իր առաջը տեսաւ Միջազգային գաղափարներ: Քանի որ այդ կեանքը ամուլ չէր, օրգանականութիւն էր ներկայացնում, հետեւաբար Միջազգայնական այդ Նոր Ազգութիւններին հետ յարաբերութեան մէջ մտնելը իր համար հրամայական էր, — դա պատմութեան անյետաձգելի պահանջն էր. իսկ կենդանի, առողջ, ապրելու ընդունակութիւն և օրգաններ ունեցող մի ազգ չէր կարող խուսափել պատմութեան երեւան դրած խնդիրների լուծումից, — հակառակը կը լինէր անկում, մահ: Հայը կենսունակ մի ազգ էր, հէնց դրա համար էլ՝ պատմութեան այդ պահանջին ընդառաջեց:

Գիտական սօցիալիզմը, Կարլ Մարքսի և Էնգելսի պաշտպանած սկզբունքները, արդիւնք մարդկային բարձր իմացականութեան, կեանքի և քաղաքակրթութեան — կեանք ինքնին, կեանք գերազանց — դրանք էլ դրուեցան Հայ կեանքի, Հայ Ազգի առաջ:

Եւ պատմական այդ դերը, այս անգամ, վիճակուեցաւ Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան: Նրա գաղափարաբանները, առաքելները, գործիչներն էին, որ ԳիՏԱ-ԿԱՆ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ, առաջին անգամ, Հայ կեանքին, Հայ Ազգին ներկայացրին և վերանորոգչի պատմական կոչման մէջ մտան: Ու նրանք էլ հալածուեցան, տանջուեցան, դառնութեան ամէն մրուր քամեցին, և սակայն, հին առաքելներին նման, մինչև վերջ մնացին անյողդողդ. ամենայն արիութեամբ դէմ դրեցին ներքին և արտաքին ամէն փոթորիկների:

Ու Հայ կեանքը, այս անգամ էլ, իրեն քարոզուած Միջազգային սկզբունքները ծծեց, իր օրգանական կեանքի հալոցի մէջն առաւ և արտադրեց մի որոշ ինֆլուդնոսիւն, որ տիեզերական լինելով՝ Հայկական է, Միջազգային հիմունք ունենալով՝ ազգային է, անհատական է:

Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն. — դա մեր յառաջագիտ կեանքի, մեր զարգացման վերջին փուլի

արտայայտութիւնը, գաղափարաբանութիւնն է: Նա ստրկական ընդօրինակութիւն չէ, ո՛չ էլ մտքերի կուրօրէն տեղափոխութեան մի տունկ, — ո՛չ: Նա մի ինքնուրոյն, ինքնատիպ անհատականութիւն է, ունի իր սեպական գունաւորումը, մասնաւոր տեղը՝ ամբողջ Միջազգայնականի մէջ:

Գերմանական Սօցիալ Դէմոկրատիա, Ռուս Սօցիալ — Դէմոկրատիա, Լալլե, սրանք Միջազգայնական սկզբունքների վրայ հաստատուած կուսակցութիւններ են, որոնք ունին՝ իրարու նկատմամբ՝ բազմաթիւ նմանող գծերի հետ միասին և՛ տարանջատող մասեր, ինչ որ հետեւանք է իւրաքանչիւրի սեպական կեանքի մասնայատուկ պայմաններին: Նոյնն է և՛ Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան համար:

Ձի կարելի, սխալ մէթոտ է, Էգիկուրեան փիլիսոփայութիւնը քննադատել, արդարացնել կամ դատապարտել, ուղիղ կամ սխալ համարել, նրան արժէք, գին տալ կամ չը տալ, Ստոյիկեան փիլիսոփայութեան սկզբունքներով: Առ առաւելն, այդ երկուսի մէջ, զուգակի ին կարելի է կազմել: Սխալ կը լինէր, նոյնպէս, և՛ այն դատողութեան եղանակը, որ Էպիկուրեան կամ Ստոյիկեան փիլիսոփայութեան դատապարտութեամբ՝ կը ձգտէր դատապարտել և՛ ամբողջ փիլիսոփայութիւնը, փիլիսոփայութիւնը ինքնին:

Քննադատական ուղիղ մէթոտ չի լինիլ, երբ Հայաստանեայց Եկեղեցին քննութեան առնուի, նրա դաւանաբանական կամ ծիսական մասը վերլուծումի ենթարկուի՝ առաջնորդուելով Յոյն կամ Կաթոլիկ Եկեղեցիների գաւառաբանական կամ ծիսաբանական հասկացողութիւններով: Դատապարտելի կը համարուէր ա՛յն մէթոտը, որ a priori կը ճգնէր Հայաստանեայց Եկեղեցին էլ դատապարտել, որովհետեւ Յոյն կամ Կաթոլիկ Եկեղեցիների մէջ այս ու այն դաւանաբանական կամ ծիսական կէտերը սխալ են եղած. և իր այդ եզրակացութիւնը հիմնէր լոկ այն փաստի վրայ թէ՛ քանի որ Հայաստանեայց Եկեղեցին էլ քրիստոնէական է, նոյն էական, Միջազգայնական սկզբունքների վրայ է հաստատուել, ուրեմն՝ նա էլ նոյն սխալները ունեցած պիտի լինէր. առանց, սակայն, հետաքրքրուելու՝ թէ արդեօք այդպէ՞ս է, ունի՞ վերագրուած այդ թերութիւնները:



Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը մի ուրոյն հաստատութիւն է, մի տեսակ պատմա-առնատակաւ գոյացութիւն, որ ունի իր տեսական գաղափարաբանութիւնը, իր որոշ սկզբունքները և գործելակերպը: Քննադատութիւնը իրաւունք ունի այդ Կուսակցութիւնը վեր առնել՝ որպէս ամբողջութիւն, և վերլուծումի, քննաթեան ենթարկել, համեմատութեան, զուգակշիռ մէջ դնել միւս երկրների, միւս ազգերի մէջ գտնուող համանման հաստատութիւնների, Սօցիալ-Դէմոկրատ Կուսակցութիւնների ընդհանուր հասկացողութիւնների և՛ գործելակերպի հետ.— Գա մի իրաւունք է և դատելու ուղիղ ձև: Բայց սխալ է ա՛յն տեսութիւնը, ա՛յն մեթոտը, որ քննադատութեան առնելով գերմանական կամ ռուսական Սօցիալ-Դէմոկրատիան, գերմանացի կամ ռուս Սօցիալ-Դէմոկրատները, և նրանց գաղափարաբանութեան ու գործելակերպի մէջ մի սխալ կէտ նշմարելիս՝ այդ միւսոյն սխալը վերագրում է, կանխամտածմամբ, և՛ Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութեան. և այդ էլ հէնց միայն ա՛յն պարզ պատճառաբանութեամբ, որ մեր Կուսակցութիւնն էլ Սօցիալիստական, Միջազգայնական գաղափարաբանութիւն ունէր, ուրեմն նա էլ միևնոյն սխալը արած կամ ասած պիտի լինէր:

Լուծերի գրածներով չի կարելի դատապարտութեան կամ արդարացման քուէ տալ ա՛յն Նարեկացուն, ո՛չ էլ Լամբրոնացուն. օրովհետև երեքն էլ քրիստոնեակաւ գաղափարաբանութեան ներկայացուցիչներն են: Սխալ կը լինէր մէկը ասածը անհրաժեշտօրէն վերագրել և՛ միւս երկուսին: Մարդկային հեռախոսական միտքը պէտք է նրանցից իւրաքանչիւրին կղզիացնէր և ըստ այնմ՝ իր քննութիւնը կատարէր, ամէն մէկին պատասխանատու բռնելով իր մտքերի և արարքների համար. ու դրանով հասկանալի կը լինէր թէ՛ ո՛րը ի՞նչ տեսակ է ըմբռնել Գրիստոնէութիւնը:

Դժբախտաբար, մեր հակառակորդները փոխանակ աշխատելու ուղղակի մեզ հասկանալու, փոխանակ մեր կուսակցական գաղափարաբանութիւնը անմիջական կերպով քննութեան առնելու, նրանք յաճախ մեզ ներկայացրել են այն՝ ինչ որ իրօք չենք: Եւ այդպէս վարուած են՝ պարզսպէս

աչքի առաջ ունենալով ուրիշ երկրների Սօցիալ-Դէմոկրատ Կուսակցութիւնները և կամ նրանց աւելի կամ նուազ հեղինակութիւն վայելող անդամների գրածները:

Երբ Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը սաղմնաւորուեց, կազմակերպուեց, ստացաւ իր որոշեալ գունաւորումը և իր անհատականութիւնը, գեռ Ռուս Սօցիալ-Դէմոկրատիան իր ամբողջական, որոշ ձևը չէր առել, գունուում էր գաղափարական խառնափնթորութեան մէջ: Միաձուլութիւն չէին ներկայացնում Նոյնիսկ միւս երկրների Սօցիալ-Դէմոկրատ Կուսակցութիւնները: Այնպէս որ, մենք ո՛չ միւս կազմակերպութիւնները ընդօրինակելու, նրանցից կոյր զկուրայն փոխ առնելու ճիգն ու ջանքն ենք ունեցել, ո՛չ էլ նրանց ստրկօրէն հետեւելու ծառայամտութիւնը: Մենք աչքի առաջ ենք ունեցել, միւսների նման, մեր ընդհանուր Ուսուցչականների՝ Մարքսի և Էնգելսի գրածները. ապա քննութեան ենք առել Հայ Իրականութիւնը և դրա արդիւնքն է եղել՝ մեր գաղափարաբանութիւնը ու կազմակերպական դրութիւնը: Այդպէս ենք ձեռք բերել մեր ինքնուրոյնութիւնը, մեր Կուսակցա-անհատական զարգացումը. նա ձևակերպուած է անկախ, մեր կեանքի մասնայատուկ ծաղաքական, տնտեսական, ընկերային պայմանների համեմատ, Միջազգայնականի սկզբունքներով:

Բոլոր Սօցիալ-Դէմոկրատ Կուսակցութիւնները՝ փրանսիական, անգլիական, և այլն, Միջազգայնական հիմունքներ ունենալով հանդերձ՝ ունին և՛ իրենց որոշեալ անհատական գունաւորումը, որ արդիւնք է ա՛յն միջավայրին, ուր նրանք ծնուել, սնուել, մեծացել և կազմաւորութիւն են ստացել: Միակերպութիւնը բնութեան օրէնքը չէ. եթէ այդպէս լինէր, նրանք իրական կեանքի և հասարակական գիտութիւնների արդիւնք չէին լինիլ, այլ հրովարտականքով մէջտեղ բերուած վարչական հաստատութիւններ:

Նոյնն է և՛ մեզ համար: Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը իր ընդհանրական, Միջազգայնական սկզբունքները, փիլիսոփայութիւնն ունենալով միասին, ունի և՛ իր տեսականը, առանձնայատուկը. իսկ այս վերջինը հետեւանք է ա՛յն միջավայրին, ուր նա ծնուել, զարգացել, գործել է:



Առանց մասնաւոր յաւակնութեան՝ ասում ենք, որ Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը արդէն վճռել էր միջազգային բնաւորութիւն կրող մի կարգ բարդ խնդիրներ, երբ միւս երկրների համասեռ կազմակերպութիւնները դեռ նրանց չէին մօտեցել: Եւ նրանք էլ, յետագայում նոյն այդ խնդիրները լուծեցին ա՛յն ուղղութեամբ, զրեթէ, որով ընթացել էր մեր Կուսակցութիւնը՝ շատ երկար տարիներ առաջ:

Չենք ասում, որ միւս երկրների Կուսակցութիւնները մեզնից փոխ առան, մեզ հետեւեցան, մեր թելադրութիւններին անսացին,— երբէ՛ք: Կառեցի, Ժօրէս, Բէքէլ, Դէդ, Ֆերրի մեր ուսուցիչները կարող էին լինել, քան աշակերտները: Բայց խնդիրն այն է, որ երբ մենք մի կարգ հրատապ խնդիրներ աչքի առաջ ունեցանք և մեր Կուսակցական գաղափարաբանութիւնը իր խօսքն ասաց ու տակտիկական գործունէութիւնն էլ իր գործը բերեց,— նրանք՝ այդ բարձր գլուխները՝ տակաւին չէին մօտեցած այդ խնդիրներին, որովհետեւ կեանքը այդ պահանջը նրանց առաջը դեռ չէր դրած: Երբ պահանջը մէջտեղ եկաւ, նրանք էլ նո՛յն այն սկզբունքները, նոյն այն բանաձեւերը մէջտեղ դրեցին, ինչ որ մենք պաշտպանած, ասած էինք, մեր կեանքի մէջ միւս ու արիւն էինք դարձրած՝ դեռ շատ առաջ, անկախաբար:

Եւ դա շատ հասկնալի է: Մեր կեանքը, բացի ընդհանուր կարիքներից, ունէր և՛ իր մասնայատուկ պահանջները. ինչ որ հետեւանք էր իր առանձնայատուկ, ուրոյն պայմաններին: Ա՛յն՝ ինչ որ մեզ համար այրող, հրատապ, առաջնակարգ, անմիջական նշանակութիւն ունեցող խնդիր էր, այդպիսին ա՛յլ երկրների մեր քոյր Կուսակցութիւնների համար կա՛մ բնաւ գոյութիւն չունէր, կամ երկրորդական նշանակութիւն ունէր: Բայց երբ կեանքը, մի օր, նրանք էլ նոյն հողի վրայ դրեց, նրանք էլ ասացին, արեցին՝ ա՛յն՝ ինչ որ մենք ասել, արել էինք, շատ ժամանակ առաջ:

Սօցիալիզմ և հայրենիք, սօցիալիզմ և ազգութիւն, սօցիալիզմ և տարասեռ պետութիւն, սօցիալիզմ և անջատողականութիւն, ազգային խնդիր և դասակարգային կոիւ, ազգային խնդիր և համագործակցութիւն, սօցիալիզմ և յեղափոխական գործունէութիւն, սօցիալիզմ և համապետական

ու համազգային յարաբերութիւններ, ըստ ազգութեան և ըստ դասակարգի սօցիալիստական կազմակերպութիւն, սօցիալիզմ և մարտական կազմակերպութիւն, և այլն, այս կարգի խնդիրներով՝ Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեան գրականութիւնը չա՛տ աւելի հին ժամանակներից է զբաղուել և նրանց լուծում տուել, ու կեանքի մէջ իրականացնել աշխատել, յաճախ ծանր զոհողութիւններով և արեան գնով, քան միւս երկրների համանման կազմակերպութիւնները:

Միւս երկրների Սօցիալ-Դէմոկրատները թէ՛ և զրանցով շատ ուշ զբաղուեցան, և սակայն, մեզնից տարբեր ուղի չը բռնեցին, տարբեր գաղափարաբանութեամբ չառաջնորդուեցան, երբ իրենք էլ այդ խնդիրների լուծման առաջը կանգնեցան:

Ներկայ օրերում պատահած ընդհանուր բնաւորութիւն ունեցող խնդիրները եկան է՛լ աւելի յստակ կերպով պարզելու մեր դիրքն ու գաղափարաբանութիւնը, ինչ որ ունեցած ենք սրանից երեսուն տարի առաջ:

Համաշխարհային այս պատերազմի առթիւ՝ սօցիալիստների բռնած դիրքի մասին շատ բան խօսուեց: Ոմանք ասացին, որ նրանք չեղում ունեցան, իրենց բուն ծրագրից դուրս եկան: Ոմանք մէջ բերեցին թէ՛ սօցիալիստները պատրաստ չէին, յանկարծակի եկան: Ոմանք էլ փաստեցին, որ ճշմարտութիւնը (ազգայնականութիւնը) յաղթեց Միջազգայնականութեան:

Դրանք բոլորն էլ սխալ մտքեր են և բնաւ չեն համապատասխանում իրականութեան:

Ո՞ր Սօցիալ-Դէմոկրատ կազմակերպութիւնը իր գաղափարական հասկացողութիւնից և ծրագրից դուրս էր նետել կազմակերպութեան աղքերի ինքնագոյութեան իրաւունքը: Ո՞ր Սօցիալ-Դէմոկրատը՝ պատմական, աճումների դէմ բողոքելով հանդերձ, իւրաքանչիւր ազգութեան համար ինքնորոշման անձեռնմխելի իրաւունք չի ընդունել: Նուաճող և նուաճուող հայրենիքների գաղափարը ո՞ր Սօցիալ Դէմոկրատը չի ժխտել:

Եթէ պրօլետարական զանգուածը պատրաստ չէր ուղեղի, գիտակցութեան կողմից, պատրաստ չէին և՛ այնպիսի ուղեղներ, ինչպիսին. են Կառեցիներ, Դէտեր, Վանդեր-



վելտներ, ֆէրրիններ, և այլն. Բայց չէ՞ որ սրանք էլ նոյն շաւղի մօջ մտան, նոյն գծի վրայ կանգնեցան և ա՛յն գաղափարաբանութիւնը պաշտպանեցին, այս օրերի մէջ, ինչ որ մի անուս, դրել կարգաւ հազիւ գիտցող, անդարձացած մի պրօլետարս Դասակարգային մտքի մթաքնութեան որ և է խնդիր չի կարող ծագել. ամեն ինչ յստակ, պարզ, որոշ է՝ բոլոր դասակարգերի համար անխտիր:

Նացիօնալիզմը, Ազգայնականութիւնը երբէք չի յաղթել ինտերնացիօնալիզմին, Միջազգայնականին: Ո՞ր Միջազգայնականութիւնը ժխտել է Ազգութեան և Հայրենիքի գաղափարը: Ո՞ր Սօցիալ-Դէմոկրատ կուսակցութիւնը չի ընդունել՝ իւրաքանչիւր Ազգի և Հայրենիքի անձեռնմխելիութեան սկզբունքը: Նացիօնալիզմը յաղթած կը լինէր ինտերնացիօնալիզմին ա՛յն ժամանակ, երբ վերջինս՝ գաղափարի տեսակէտով, ժխտէր առանձին ազգութիւնների գոյութեան իրաւունքը — քանի որ այդպիսի մի թէզ հրապարակ չի եկած ո՛չ մէկի կողմից, ասել է թէ՛ ո՛չ Նացիօնալիզմն է յաղթել, ո՛չ էլ ինտերնացիօնալիզմը պարտուել: Կուտակուած խնդիրները այդ բնաւորութիւնը չունին:

Դիտակից Սօցիալ-Դէմոկրատը կանգնած է՝ համոզուած բուրժուայի կողքին. իր բարձրութեան վրայ կեցած Սօցիալ-Դէմոկրատ կուսակցութիւնը համագործակցում է կապիտալիստ, արմատական, միապետական կուսակցութիւնների հետ. ինչո՞ւ, որովհետեւ հրապարակ գրուած խնդիրների բնաւորութիւնը այդպէս է պահանջում, որովհետեւ պատերազմի դաշտը եղող ամէն ազգի և երկրի պառժաւանհատական գոյութեան խնդիրը խաղի մէջ է դրուած: Ո՞վ է պատճառը, ո՞վ՝ պատասխանատուն, ո՞վ՝ արդարը, ո՞վ՝ յանցաւորը. հարցը դրա մասին չէ: Այդ նկատմամբ կարող են տարբեր բացատրութիւններ, պատճառաբանութիւններ մէջտեղ բերուիլ. բայց իրողութիւնը կը մնայ իրողութիւն, կարկառուն. — այն՝ որ տարբեր դասակարգերի կազմակերպութիւններ և նրանց գաղափարաբանները կողք կողքի կանգնեցան, պատմական տուեալ մի բոլորի մէջ, միատեղ մարտ մղելու ա՛յն գոյացութեան, ընդհանրական ա՛յն իրաւունքների, համագաղափար ա՛յն սեպականութիւնների համար, որ բոլորինն էր,

եթէ ո՛չ արդեամբ, գէթ տեսականապէս. եթէ ո՛չ բոլորինն էլ միևնոյն չափով, գէթ մէկին աւելի, միւսին պակաս. բայց, այնու ամենայնիւ, մէկին, մէկ դասակարգինը չէր, այլ բոլոր դասակարգերինը, նրանց համագործակցութեանը: Երբ վտանգի տակ է այն սեպականութիւնը, որ բոլոր դասակարգերինն է, դասակարգային կռիւը այդտեղ կա՛մ մեղմանում, դադար է առնում և կա՛մ բոլորովին չեանում, երկրորդ գծի վրայ անցնում, մինչև որ միահամուռ օյժերի արդիւնքով՝ ընդհանուր վտանգը յետ է մղւում: Պատմական այդպիսի պարագաներում, համագործակցութիւնը դառնում է հրամայական, անհրաժեշտ. և ո՛չ մի Սօցիալ-Դէմոկրատ կուսակցութիւն ա՛յլ դիրք չէր կարող բռնել, քան ինչ որ ունեցաւ. Հետևաբար, ո՛չ ծրագրային դառածութիւն կայ, ո՛չ էլ շեղում ու թիւրիմացութիւն: Ընդհակառակը ներկայ համաշխարհային աղէտը եկաւ է՛լ աւելի որոշ կերպով պարզաբանելու Սօցիալ-Դէմոկրատների դիրքը՝ մի կարգ հրատապ խնդիրների մասին, ինչպէս և Սօցիալիզմի յարաբերութիւնը դէպի Բզգուութիւնը և Հայրենիքը, դասակարգային կռիւ և դասակարգերի համագործակցութիւն, որոնց նկատմամբ, առաջ, շատերը անտեղի կերպով երկմտութիւններ էին յարուցանում և Սօցիալ-Դէմոկրատներին վերագրում էին մտքեր, որ նրանք չունէին: Իւ կեանքը ցոյց տուեց, որ Սօցիալ-Դէմոկրատները ընտրական և շահագրտական ա՛յլ միտումներ աչքի առաջ չունէին, երբ առաջուց ասում էին՝ թէ իրենց սեպահական աղբի և երկրի ինքնագոյութեան խնդիրը վտանգի տակ առնուած ժամանակին, իրենք հրացան կառնեն և պատեւրազմի դաշտը դուրս կը գան: Նրանց այսօրուայ արածները, այժմեան դիրքը անցեալ խօսքերի լրացութիւններն են:

Ընդհանուր հայրենիքի մէջ՝ մասնաւոր հայրենիքի անձեռնմխելիութիւն, Միջազգայնականի մէջ՝ անհատաազգութիւնների գոյութեան և նրանց իրաւունքների անբռնաբարելիութիւն, — այդ երբ, ո՞ւր չէ ասել Սօցիալ-Դէմոկրատ գաղափարաբանութիւնը, կեանքը պահանջը դրեց. և նրանք իրենց խօսքերին ու սկզբունքներին հաւատարիմ մնացին:

1 Յունիս, 1916

Հեղիօպոլիս

Ս. ՍԱՊԱՆԳԻԻԼԵԱՆ



«ՍՕՑԻԱԼԻՍՏ ԿԵԱՆՔ»Ի

ՄԻՋԱՂԳԱՅԻՆ ՀԱՐՅ ՈՒ ՓՈՐՁԸ

## ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ԵՒ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ

«Դորժաւորները հայրենիք չունին» Զի կարելի նրանցից  
խլել այն՝ ինչ որ չունին»։— «Սօցիալիստ Կեանք»ի խմբա-  
գրութիւնը Կոմկոմիսսական Մանիֆեստ(\*) այս յայտնի հատ-  
ուածը յիշեցնելով՝ հետեւեալ չորս հարցերն էր դրել։

Ա.— Ի՞նչ էք մտածում և ինչպէս էք մեկնաբանում այդ  
թէզը. հայրենասիրութիւն և միջազգայնականութիւն կարո՞ղ  
են իրարու հետ հաշտուել։

Բ.— Միջազգայնականութիւնը ի՞նչ գործնական դիրք,  
պրօպագանտայի ի՞նչ ձև է պատուիրում սօցիալիստներին՝  
ընդդէմ միլիտարիզմի, «գաղութականութեան», նրանց պատ-  
ճառների և տնտեսական անդրադարձութիւնների։

Գ.— Սօցիալիստները ի՞նչ դեր պիտի խաղան միջազգա-  
յին յարաբերութիւնների (օր. մաքսաբանների, գործաւորական  
օրէնսդրութեան) մէջ։

Դ.— Սօցիալիստական պարտականութիւնը ի՞նչ է պա-  
տերազմի ժամանակ։



(\*) Կոմկոմիսսական Մանիֆեստի բովանդակութեան առ-  
թիւ՝ տե՛ս Յաւելուածը։



1916-2014



Ա.

## ԷՊՈՒԱՐԴ ԲԵՐՆՅՏԱՅՆ

ՊԱՏԳԱՄԱՌՈՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱՅԻՍՏԱԳՈՒՄ

ՍԻՐԵԼԻ ԸՃԿԵՐՈՒՄ,

Պատասխանում եմ ձեր հարցերին.

Ա. — ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԻ մէջ յիշուած թէ-  
զը իր արդարացումն ունէր ժամանակին. որովհետեւ, այն  
ատեն, բոլոր գործաւորները զրկուած էին ընդհանուր քուէ-  
ից. այսինքն երկրի վարչական գործերի մէջ ո՛ր և է մաս-  
նակցութիւն չունէին: Իացի մի փոքր, չնչին նպաստից, որ  
գործաւորները ստանում էին թշուառութեան ժամանակ,  
մնացած բոլոր պարագաներում՝ նրանց հետ վարւում էին,  
որպէս խորթ օտարականների: Այդ հանգամանքը, հիմա,  
չատ տեսակէտով, փոխուել է. ուստի թէզն էլ՝ միևնոյն  
աստիճանով՝ կորցրել է իր գոյութեան իրաւունքը: Գործա-  
ւորը, այժմ, հաւասար իրաւունքներով քաղաքացի է դար-  
ձել. ունի հայրենիք, որի անկախութեան և բարօրութեան  
համար՝ նա պիտի աշխատի Միջազգայնականի սկզբունքի  
համեմատ. որովհետեւ չը կայ իրաւունք առանց պարտաւա-  
նութեան: Իայց գործաւորի այդ աշխատակցութիւնը նրան  
չի պարտաւորեցնում հայրենասիրութեան բուրժուազական  
և չովինական գաղափարներն ընդունելու: Միջազգային գե-  
րիշխանութեան կամ ուրիշ ժողովրդների վրայ տիրապետելու  
խնդիրները հայրենասիրական չեն. գործաւորի ունեցած ռա-  
կավարական սկզբունքները և ժարդը մարդով չահագործելու  
կապիտալիստական եղանակի դէմ սնուցած իր ընդդիմադ-  
րութիւնը արգելում են նրան և թոյլ չեն տալիս, որ այդ  
տեսակի գործերը հայրենասիրական համարէ:

Բ. — Սրանից հետևում է, որ՝ սոցիալիստները, սկզբուն-

քով, չեն կարող մաքառիլ ժողովրդի զինուորական կրթու-  
թեան դէմ. թէև նրանք պէտք է ընդդիմադրեն այսօրուան  
զինուորական ա՛յն բազմաթիւ հաստատութիւններին, որոնք  
ժառանգութիւն են մնացել աւատապետական միապետու-  
թիւններից: Սոցիալիստական և ռաւակավարական սկզբունք-  
ները արգելք չեն, որ դեռ չը գրաւուած՝ կամ վայրենի ժո-  
ղովուրդների ձեռքերում գտնուող՝ երկրների մէջ, խաղաղ  
գաղթականներ չը հաստատուին: Իմ կարծիքով՝ սոցիալիստա-  
կան սկզբունքները խոչնդոտ չեն, որ այդ կիսավայրենի ժո-  
ղովուրդները չը նուաճուին: Թէև, այդ միևնոյն սկզբունք-  
ները՝ այդ ժողովրդների նկատմամբ՝ բովանդակում են այն-  
պիսի պարտաւորութիւններ, որ կառավարութիւնները ո՛չ  
միայն չեն պահանջում, այլ չեն էլ ճանաչում: Մեր օրերում  
տեղի ունեցած գաղթականութեան գլխաւոր պատճառը ո՛չ  
թէ այն է, որ գաղթող քաղաքացիները իրենց սեպհական  
երկրի մէջ արդիւնաւէտ և շահաբեր պաշտօն չեն կարողա-  
նում գտնել. — ո՛չ. այլ դա հետեւանք է այն ցանկութեան,  
որ նրանք ուզում են մեծամեծ հարստութիւններ ղլգիլ՝  
նուաճուող ժողովրդներին շահագործելով և նրանց հողերը  
շահագրգիռութեան ենթարկելով, և այլն: Դա էլ՝ ուրեմն՝ մի  
պատճառ, որ սոցիալիստները, է՛լ աւելի անվստահութեամբ  
քննեն գաղթականութեան վերաբերեալ առաջարկները: Սո-  
ցիալիստները տեղական ժողովրդների իրաւունքների բնա-  
կան պաշտպաններն են: Իսկ ինչ վերաբերում է գաղթակա-  
նութիւնների տնտեսական անդրադարձութիւններին, դրանք  
չատ տարբեր կարող են լինիլ: Հարստութեան շատացումով՝  
տնտեսական այդ անդրադարձութիւնները կարող են նպաս-  
տել գաղթականութիւն հաստատող ազգի ընդհանուր հարըս-  
տութեանը. նրանք, նոյնպէս, կարող են նպաստել, որ կա-  
պիտալիստ դատարկասուն գասակարգը է՛լ աւելի հաստա-  
ուի, ամրապնդուի, ինչպէս և պաշտօնակալները. ու այդ  
բոլորը՝ ի վնաս աշխատասէր ժողովրդի: Դա էլ մի ուրիշ  
զօրեղ պատճառ, որ ընդդիմադրութիւն լինի՝ դէպի այսօր-  
ուայ գաղթամոլական հոսանքը:

Դ. — Միջազգային յարաբերութիւններ (մաքսագին,  
գործաւորական օրէնսդրութիւն) մէջ՝ սոցիալիստները պար-



տականութիւն ունին, իմ կարծիքով, անդու անգաղար  
աշխատելու, որպէսզի ազգերը իրարու հետ և՛ աւելի ա-  
մուր կապերով կապուին: Սօցիալիստները ճշմարիտ կուսակ-  
ցութիւնն են՝ ազգերի ազատ վաճառակոնութեան, միջազ-  
գային օրէնսդրութեան և խաղաղութեան գաշինքների, հա-  
կառակ դիւանագիտական այն գաշնակցութիւնների, որոնք  
միշտ էլ վտանգներով լի հինցած չարիքներ են, լէնդրի վրայ  
նոյն իսկ լաւագոյն աչքով նայելով:

Դ. — Պատերազմի պարագային՝ սօցիալիստները ամէն  
ջանք պիտի թափեն, որ խաղաղութիւն հաստատուի. որքան  
ժամանակ, որ իրենց երկրի անկախութիւնը և իրենց պատ-  
կանած ժողովրդի ինքնավարութիւնը վտանգուած չէ:

Է.Դ. ԲԻՐՆՇԴԱՅՆ

Բ.

## ԷՂՈՒԱՐԴ ՎԱՅԵԱՆ

ՊԱՐԻԶԻ ՊԱՏԳԱՄԱՌՈՐ

Սիրելի քաղաքացիներ՝ դը Պրեսանսէ եւ Ռընօդէլ,

Հէնց այս րոպէիս ստացայ ձեր նամակը և «ՍՕՑԻԱԼԻՍԿ  
ԿԵԱՆՔ»-ի հարցարանը: Դուք ինձ ազատ էք թողնում՝ ուզած  
կարգովս պատասխանելու. այդպէս էլ անում եմ:

Հայրենիքի և Միջազգայնականի միջև, ուրեմն և հայ-  
րենասիրութեան ու միջազգայնականութեան միջև, ես ո՛չ մի  
հակասութիւն չեմ տեսնում. պայմանով, սակայն, որ այդ  
խնդիրները սահմանուեն և քննութեան առնուեն սօցիալիս-  
տական տեսակէտով: Բայց հարցը բոլորովին կը տարբերուի,  
եթէ նկատողութեան առնեմ՝ ո՛չ միայն ազգայնականների  
կամ ո՛ր և է բուրժուազական կուսակցութեան այդ մասին  
ունեցած գաղափարները, այլ նոյն իսկ Տօլստոյականների  
կամ ազատապաշտների գաղափարները:

Իմ հայեցակէտով, ազգը՝ այնպէս, ինչպէս որ պատմու-  
թիւնը նրան ձևակերպել և բնորոշել է, բոլորովին անհրա-  
ժեշտ մի տարր է՝ մարդկային յառաջդիմութեան համար.  
այնպէս որ՝ նրա կազմաւորութիւնը կամ ֆիզիքական անձ-  
նաւորութիւնը, ինչպէս և նրա մտաւոր ու բարոյական  
անձնաւորութիւնը չի կարելի հարուածել, առանց հարուս-  
ժած չը լինելու մարդկային յառաջդիմութիւնը: Խիստ փա-  
փաքելի է՝ որ ամէն ազգ, իր արտաքին անկախութեամբը և  
ներքին ազատութեամբը՝ որքան կարելի է, մեծ չափով զար-  
գացնի իր մտաւոր կարողութիւններն ու եռանդը. ո՛չ թէ  
զինուորական կամ մաքսային պատերազմներով ուրիշ ազգե-  
րին լծի տակ առնելու կամ նուաճելու դիտումով, այլ որ՝  
իր քաղաքական և տնտեսական յարաբերութիւնները կար-



գաւորի այնպէս՝ որ միւս ազգերն էլ օգտուին նրա արտա-  
դրութիւններէրց և զարգացումից: Այդ բոլորէն, երբ կապի-  
տալիզմը հասել է իր գագաթնակէտին և իր տնտեսական  
հպուստները ու բաղխումները բազմապատկել է, — պրօլետա-  
րիատի և սօցիալիզմի համապատասխան աճումը իրաւունք է  
տալիս՝ ազգային խնդիրները մէջ ազգութիւնէն միջամտելու,  
մինչև որ կապիտալիստական ընթացիկ իր վախճանն ստանայ  
և գործաւորական ձերբազատութիւնը հաստատի ազգերի  
Միջազգայնականը: Ազգը և նրա օրգանական կամ Միջազ-  
գայնական միութիւնը՝ միեւնոյն զարգացման երկու անհրա-  
ժեշտ վայրկեաններն են:

Ինչ համար անկարելի է հասկանալ, թէ ի՞նչպէս մի սօ-  
ցիալիստ՝ տառնց սխալուելով՝ կարող է ազգը և Միջազգայ-  
նականը իրարուց բաժանել, կամ անտարբեր մնալ մէկին ու  
միւսին. և՛ հետևաբար՝ միեւնոյն եռանդազդին համակրանքը  
չը տածել դէպի ազգերի տանջանքները, յոյսերը և այն պրօ-  
լետարները, որոնք չարչարուած են ու մարդկային միեւնոյն  
յառաջդիմութեան և ազատագրութեան համար պայքարում:  
Չարմանալու բնաւ տեղի չը կայ, երբ ժառանգականութեան,  
ծնունդի և կեանքի բազմապատիկ կապերը մի մարդու աւե-  
լի սերտ կերպով կապում են ա՛յն ազգի հետ, որի մի մասն  
է ինքը կազմում. եթէ միայն նրանից նա անջատուած, ուս-  
ծացած չէ և նրան չի հակառակում գոյութեան կոռուի թըշ-  
ուառութիւնների պատճառով: Բայց եթէ նա սօցիալիստ է և  
մտաւոր լայն հորիզոնի տէր, իր դասակարգի և կուսակցու-  
թեան ու նրանց ընդգրկած նպատակների համար է, որ նա  
պիտի պայքարի: Մարդկային շարժման յառաջդիմութեան և  
հաւասարակշռութեան մէջ՝ սօցիալիստը աչքի առաջ պիտի  
ունենայ թէ՛ իր և թէ՛ միւս ազգերի զգացմունքը ու նրանց  
խաղացած դերը: Սօցիալիստը հաւասար աջակցութիւն ու  
համակրանք ցոյց պիտի տայ՝ բոլոր սօցիալիստական կու-  
սակցութիւններին և պրօլետարիատին: Սօցիալիստի մաքի  
մէջ երբէք տեղ չը պիտի գտնեն արքայական տան հաշիւներ  
և ախարհակալական շարժառիթներ: Նա չը պիտի ընդունի,  
որ մէկ ազգ միւսի վրայ յարձակուի, նրան սպառնայ, կո-  
ղոպտի, անդամատի: Նա չը պիտի հանդուրժի, որ մի պե-

տութիւն կամ ազգ այդպիսի մի ոճիւր գործի՝ իր կառավա-  
րիչներից դրդուելով: Յեղափոխութեան համար ունեցած այն  
զգացմունքը, որ 1870—1871-ի սպառման ժամանակ՝ սօ-  
ցիալիստներին ստիպեց «Ծայրայեղ Ընդդիմադրութեան Դաշ-  
նակցութիւն»ը կազմել՝ կռուելու համար ներս խուժող օտար  
միապետութեան դէմ, նոյն այդ Յեղափոխական զգացմունքն  
էր, որ առաջ բերաւ Կոմունը՝ երբ դէպի Յեղափոխութիւնը  
ունեցած իր ատելութեան համար՝ ֆրանսիական ընկերան  
այդ միապետութեանը յանձնեց Պարիզը:

Վերջապէս, այս կերպով է՝ որ համաշխարհաբար ազգի  
ական, ազգայնական և Տօլստոյական տեսակէտները տարբեր-  
ւում են սօցիալիստական և միջազգայնական գաղափարներից:

Այն ժամանակ, երբ մեր միութիւնականները նախընտրում  
են լաւ խաղաղութիւնը քան թէ վատ պատերազմը, — պատ-  
մութիւնը, իրերի գորութիւնը շարունակում են իրենց ըն-  
թացքը, առանց նրանց վրայ ուշադրութիւն դարձնելու. և  
այդպիսով ժխտում են նրանց պիտակները:

Անցքերի բազմախռնութեան մէջ՝ չը կայ a priori (ի յա-  
ռաջագոյնէ) մի բանաձև, որ սօցիալիզմին և պրօլետարիա-  
տին թելադրէր՝ թէ ի՞նչ պիտի լինէր նրանց դիրքը, ընթաց-  
քը, գործունէութիւնը՝ պատահելիքների մէջ: Նրանց վա-  
րողը, առաջնորդողը պիտի լինի անցքերի, պրօլետարական  
և սօցիալիստական շահի խելամտութիւնը: Ոչ թէ կղզիացած  
ուղեղների, այլ պրօլետարական և սօցիալիստական կազմա-  
կերպութիւնների մէջն է, որ կը ձևաւորուի և կը բանաձև-  
ուի՝ անհրաժեշտ ու օգտակար գործունէութեան գաղափարն  
ու կամքը:

Բէրելը, գերմանական սօցիալիստների բանաւոր զգաց-  
մունքի այդ թարգմանը՝ կարողացաւ, առանց հակասութեան  
և նրանց անուշուրձ ասելու, որ իրենք աւելի նախամեծար կը  
համարէին մինչև վերջին շունչ կոռուի, քան թէ կրել Յա-  
րիզմի լուծը և ընթիւնը:

Այսուհետև, անհատական սպանութիւնները և չարիք-



ներո մի կողմ թողնելով՝ մեր նոր միջավայրի մէջ, պատե-  
րազմը դարձել է մի չարիք, կասուամի, յետախաղացութեան  
մի պատճառ, կապիտալիստական յափշտակութեան և տիրա-  
պետութեան մի գործիք. պրօլետարիատի գերութեան և ջախ-  
ջախուսի մի միջոց: Պրօլետարիատի և սօցիալիզմի համար՝  
միջազգային խաղաղութիւնը հետզհետէ դառնում է վեհա-  
գոյն մի բարիք: Խաղաղութեան մէջն է, որ սօցիալիզմը և  
պրօլետարիատը կարող են կազմակերպել իրենց ոյժերը և  
պայքարը:

Դիտակից այդ ճշմարտութեանը՝ պրօլետարիատը,  
հետզհետէ, — դա իր ընկերային պայքարի մի ձևն է — պէտք  
է կազմակերպի իր ջանքը ազգայնապէս և միջազգայնապէս  
խաղաղութեան համար, ընդդէմ միլիտարիզմի և պատերազ-  
մի: Այդպիսով է, որ պրօլետարիատը ամենայնօրէն միջավայրը  
պիտի ստեղծի իր ազատաբեր գործունէութեան համար. կա-  
պիտալիստական զաղութային թռիչքը սահմանափակելով՝  
աւելի նեղօղակով ա՛յն տեղերի կապիտալիզմի ծաւալը, ուր  
նա արդէն հաստատուել է և իր ամբողջական զարգացմանը  
հասել, — պրօլետարիատը դրանով է որ պիտի արագացնի  
կապիտալիզմի տափնապնդերը և նրա թաւալգործ անկումը:

Եթէ, պարագային համեմատ, պատերազմի առաջն առ-  
նելու համար՝ հրամայական դառնայ. որ պրօլետարիատը  
ազգային ջանք գործ անէ, նա այդ զոհաբերութիւնը պիտի  
անէ առանց յամենալու և պիտի աշխատէ փոխել միջոցներ,  
որպէսզի Պետութիւնների և Բուրժուազիայի զինուորական  
իշխանութիւնը զինաթափուի: Իսկ այդ կը ինի միայն այն  
ժամանակ, երբ մշտական բանակները կը ջնջուին և նրանց  
տեղը կը գայ ազգային ռաւակավարացած միլիցիան, որ բացի  
պաշտպանողական պատերազմից՝ ուրիշ ամէն տեսակի պա-  
տերազմ անկարելի կը դարձնի. ինչպէս և անհնար՝ զինուո-  
րական գործողութիւնները պրօլետարների դէմ: Եւ դա կը  
լինի նախաբանը՝ զինաթափութեան և միջազգային իրաւա-  
րարութեան: Այդպիսով է, որ Պետութիւնը և Բուրժուա-  
զիան հետզհետէ կը զինաթափուի և ժողովուրդը, պրօլետա-  
րիատը, սօցիալիզմը աւելի ու աւելի կը զինուի՝ միջազգա-  
յին խաղաղութեան պահպանման, գործաւորական ձերբա-

զատութեան և Յեղափոխութեան համար: Այդպիսով է, որ  
սօցիալիզմի զարգացումը կապահովուի անսայթաք կերպով:  
Եւ դրա համար էլ, թէ՛ Ֆրանսիայում և թէ՛ այլուր, Սօցի-  
ալիստական Կուսակցութեան Միութիւնը անհրաժեշտ պայ-  
ման է:

Ընդունեցէք, սիրելի քաղաքացիներ՝ դը Պրեսանսէ և  
Ռենօդէլ. իմ անկեղծ մեծարանքներս և մտերմական ող-  
ջոյններս:

Է. Գ. ՎԱՅՆԱՆ



Գ.

## ԷՄԻԼ ՎԱՆԴԵՐՎԵԼԴ

### ՊԱՏԳԱՄԱՌՈՐ ՊԵԼԳԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Քաղաքացի Հերվէի նորերս արտասանած ճառի պատճառով՝ յարուցուած բանակօրինների տպաւորութեան ներքոյ, «ՍՕՅԻԱԼԻՍՏ ԿԵԱՆՔ»-ի խմբագրական մասնախումբը ուղարկել է իր աշխատակիցներին՝ հարցերի մի շարք, որի առաջինը և ամենակարեւորը, մօտաւորապէս, այսպէս է բանաձեւուած :

Մի սօցիալիստ, միջազգային սահմանումով, կարո՞ղ ե միաժամանակ՝ եւ հայրենասէր լինել:

Որպէսզի թիւրիմացութիւններ և երկդիմութիւններ չը ծագին, այդպիսի մի հարցի պատասխանելու համար՝ նախ և առաջ պէտք է վերլուծել այն բարդ զգացմունքը, որ սովորաբար, կոչուում է հայրենասիրութիւն:

Հայրենասիրութիւն բառի մէջ, տարբեր և փոփոխելի համեմատութիւններով խառնուած երեք տարր կայ.— Ա. սէր դէպի ծննդավայր երկիրը, ուր մարդիկ ծնուած են, և դէպի այն ժողովուրդը, որ նրա մէջ բնակուում է. Բ.— անձնօրութիւն դէպի ժառանգական կամ ընտրական այն վեհապետը, որ խորհրդանշում է ազգը կամ քաղաքական, ընկերային այն հաստատութիւնները, որ այդ իսկ ազգին անհատականութիւն են տալիս. և վերջապէս, Գ.— թշնամութիւն կամ անվտանգութիւն դէպի այն բոլոր ազգերը, որոնք օտար են նկատուում:

Այս երեք տարրերից՝ առաջինը բնաւ անհաշտելի չէ միջազգայնականութեան հետ:

Ես սիրում եմ այն երկիրը, ուր ծնուած եմ: Իրերի զօրութեամբ, լեզուի, կրթութեան, պատմական աւանդութիւնների նոյնութեամբ՝ ես ինձ աւելի մօտիկ եմ զգում դէպի

այն ժողովուրդը, որ այդ երկրի մէջն է բնակուում, քան դէպի այն ժողովուրդները, որոնց հետ ես միայն շատ վաղանցուկ, ընդհատ յարաբերութիւններ եմ ունեցել՝ լեզուի տարբերութեան պատճառով:

Բայց ո՞ւր է կանգ առնում այդ զգացումը: Կարելի է սահմաններով որոշել. Զուգադիպում է նա քաղաքական ներկայ սահմաններին: Բելգիայի Մօնս, Տուրնէ քաղաքի մի բնակիչ ո՞րին է աւելի մօտիկ. հին Բելգիայի կամ ներկայումս Ֆլանդր կոչուող՝ Լիւի կամ Ռուբէի բնակիչ Ֆրանսիացուն, թէ՞ Բելգիայի մէջ գտնուող Բրուզի, Գանդի կամ Անվերսի բնակիչ Ֆլամանին, որի հետ նա յաճախ անկարող է լինում խօսակցել՝ լեզուի պատճառով:

Հայրենասիրութիւնը այդպէս հասկանալով,— եթէ հայրենասիրութիւն է կոչուում դէպի հայրենի հողը ունեցած սէրը,— հայրենասիրութիւնը, ասում եմ, տարամերժ ոչինչ ունի իր մէջ: Հայրենիքը փակուած չըջանակ չէ: Բելգիացի աշխատաւորի համար՝ հայրենիքը կանգ չի առնում Գիլէվէն կամ Հերբեշթալ սահմանակայան քաղաքներում: Հայրենիքի կեդրոնը մեզնից ամէն մէկի մէջն է, իսկ չըջալիճը՝ ո՛չ մի տեղ:

Այսպէս, Եւրեմի, որպէսզի հայրենասիրութիւնը դառնայ է՛լ աւելի որոշ, շօշափելի, ալիւմերժ, պէտք է որ դէպի մեր ծննդավայր երկիրը ունեցած սէրը— կամ, օգինակի համար՝ սէր դէպի իրենց ընտրած երկիրը— միանայ երկրորդ տարրի հետ, որի մասին վերև խօսեցինք,— այն է՝ այդ երկրի քաղաքական և ընկերային հաստատութիւնների հանդէպ ունեցած սիրոյ հետ: Նա պէտք է կցուի նա՛ւ այն գիտակցութեան հետ, որ մի անհատի երջանկութիւնն է կազմում՝ պատկանել ազգային այն ընկերակցութեան, որ աւելի բարձր է— գէթ հայրենասէրի հայեցակէտով— ուրիշ այն ազգային ընկերակցութիւններից, որոց չահերը իր ազգային չահերից տարբեր են կամ հակամարտ:

Արդ, հիմայ, հարցը դրւում է այսպէս.— արդեօք միևնոյն երկրի բուրժուաների և գործաւորների միջև իրական ընկերակցութիւն կարող է լինել: Այլի տառաւ ունենալով, որ ամբողջ արեւմտեան Մարոկայի մէջ՝ կեանքի պայմանների



մերձաւոր համանմանութիւն կայ, մի՞թէ Ֆրանսիացի, Գերմանացի, Բելգիացի, Զուլիցցիները պրօլետարներն են և բուրժուաներն միջև նոյնանման, աւելի՛ մեծ շահեր կան, քան թէ այդ զանազան երկրներն աշխատաւորներն միջև, որոնք կազմակերպուած են միջազգայնօրէն :

Արդ, չը կայ մի գիտակից պրօլետար, որ այդ հարցին չը պատասխանի թէ՛ Բելգիացի, Գերմանացի, Զուլիցցիներ, Ֆրանսիացի լինելով՝ ես ինձ անհամեմատ աւելի մօտիկ եմ համարում ֆրանսիական, զուլիցցիական, գերմանական, քան թէ իմ տառապանքի և պայտաւոր ընկերներն են, քան թէ իր սեպհակա՛ն երկրի կապիտալիստներն, որոնք ինձ տիրապետում, չարաչար տանջում շահագործում են :

«Այն թշնամին մեր տէրն է. ես ձեզ այդ ասում եմ՝ պարզ ֆրանսերէնով» :

Բայց, սակայն, բոլոր երկրների գործաւորների միջև եղած՝ այս միջազգային համերաշխութիւնը արգելք չէ, որ որոշեալ մի երկրի քաղաքական և ընկերային հաստատութիւնները նախընտրելի չը լինեն՝ հարեւան երկրների համանման հաստատութիւններին :

Այդ իրողութիւնը չը ճանաչել՝ կը նշանակի, մի ուրիշ ձեւի տակ, վերահաստատել այն սխալը, որ ասում է՝ թէ բուրժուազական բոլոր կուսակցութիւնները՝ արժատական, ազատական, կղերական՝ ամէնքն էլ յետաշրջական մի զանգուած են կազմում :

Ակներեւ է, անշուշտ — և հակառակը պնդողը սօցիալիստ չի կարող լինել — որ կապիտալիստական բոլոր երկրներում՝ պրօլետարիատը միեւնոյն շահագործութեան դռն է՝ և, հետեւեալ, այդ տեսակէտով, նրա համար տարբերութիւն չի անիլ՝ Ֆրանսիացի, Բելգիացի, Զուլիցցիներ կամ Գերմանացի լինել :

Բայց դա մի պատճառ չէ պնդելու, ինչպէս որ Հերվէն է անում, թէ՛ Միապետութիւն կամ Հասարակապետութիւն, ընդհանուր քուէարկութիւն կամ սահմանափակ քուէարկութիւն, քաղաքական ազատութիւն կամ կէս — բացարձակապետութիւն՝ դրանք այն աստիճան երկրորդական բաներ են,

որ ներքին և արտաքին թշնամիների դէմ՝ արժանի չեն պաշտպանուելու, նոյնիսկ զէնքը ձեռքին :

Ընդհակառակը՝ մենք շատ բնական ենք գտնում, որ ֆրանսիական պրօլետարները ոյժի դիմեն, որպէսզի, Ալգասցիների նման՝ Վիլհէլմ Բ. — ի հպատակները չը դառնան :

Խնդիրը այդպէս հասկանալով, — այն՝ ինչ որ կոչուած է «պաշտպանողական հայրենասիրութիւն», նա՛ անկասկած՝ ընդդիմահարուած է Տօլստոյի քրիստոնէա — անիշխանական այն տեսութիւններին, որ քարոզում է ոչ — ընդդիմադրութիւն Չարին. բայց այդ տեսակի հայրենասիրութիւնը անհաշտելի ոչինչ ունի՝ սօցիալիզմի միջազգայնական սկզբունքների հետ : Վերջապէս, կանգ առնել այդ կէտի վրայ՝ կը նշանակի խորապէս մի բաց դուռ. որովհետեւ, ամէն երկրների մէջ, Սօցիալ-Ինքնակրօնական առաջարկում է ազգային միջիջիւղ ստեղծել՝ փոխանակ մշտական բանակների :

Իսկ ինչ որ վերաբերւում է յարձակողական, ազգայնական, կայսերապաշտական հայրենասիրութեան. ինչ որ վերաբերւում է անվստահութեան, տենչանքի և թշնամութեան ա՛յն ոգուն, որ հայրենասիրական զգացմունքի երրորդ տարրն է կազմում, — կարիք կա՛յ այդ մասին ասելու, որ սօցիալիզմի պատիւը հէնց նրա մէջն է կայանում, որ նա՛ այդպէս հասկացուած հայրենասիրական զգացմունքի՝ անվերածելի հակառակորդն է եղել միշտ :

Եթէ հայրենասիրութիւն ասելով հասկացւում է՝ ո՛չ թէ սէր դէպի ծննդավայր երկիրը կամ օրինական դանկութիւն՝ պաշտպանելու ազատ հաստատութիւնները՝ յետաշրջական յարձակումների դէմ, եթէ հայրենասիրութիւնը քարոզում է ատելութիւն դէպի օտարականը : Եթէ հայրենասիրութիւնը այն պարզամիտ հաւատքն է, որ մէկը իր պատկանած ազգութիւնը շատ աւելի գերազանց է համարում ուրիշ ա՛յն ազգերից, որոնք նրան իրենց քաղաքացիների մէջը հաշուելու պատիւը չեն ունեցել : Եթէ հայրենասիրութիւն ասելով ըմբռնւում է ա՛յն հաւատարմութիւնը՝ կառավարական մի ընթիմի հանդէպ, որ նախագործում և ամրապնդում է պրօլետարիատի շահագործումը՝ տիրող դասակարգի միջոցով. — ապա մենք բարձրաձայն յայտարարում ենք, որ հայրենա-



սիրութիւնն և սօցիալիզմ երկու տարբեր բաներ են, որոնք իրարու հակասում են :

Ահա՛, այդ բանն է, որ Մարքսը և Էնգելսը, ժամանակ առաջ, Վեյմարի համալսարանի Մանիֆէստի յայտնի հատուածով հաստատում էին այնպիսի բառերով, որոնց վրայ ո՛չ մի կէտ աւելացնել ենք ուղղում, և ոչ էլ յետ վերցնել :

Ընդհանուրները հայրենիք չունին: Չի կարելի նրանցից խլել այն՝ ինչ որ չունին: Անկասկած՝ պրօլետարիատը ամենից առաջ պիտի նուաճի քաղաքական ազատութիւն, դառնայ ազգային միահեծան զասակարգ և ինքն էլ կազմակերպուի՝ որպէս ազգ. ու այդ մտքով, նա դեռ կապուած է մի ազգութեան: Բայց նա տակաւին ազգ չէ՝ բուրժուական բնաստով :

Արդէն, նոյնիսկ բուրժուազիայի զարգացումը, ազատ փոխանակութիւնը, շուկաների տիեզերականացումը, ճարտարագործական արտադրութեան միաձեւութիւնը և սրա բերած գոյութեան պայմանները, — դրանք բոլորը, աստիճանաբար, ջնջում են ազգերի միջև եղած սահմանները և հակամարտութիւնները :

Պրօլետարիատի գերիշխանութիւնը լիակատարապէս կը ջնջի ազգերի միջև եղած սահմանագծերը և հակամարտութիւնները: Քաղաքակիրթ բոլոր երկրների պրօլետարիատի միացեալ գործունէութիւնը՝ իր ազաւազրութեան առաջին պայմանն է :

Որչափ որ մարդու շահագործումը վարդով ջնջուի, նոյնքան էլ կը ջնջուի ազգերի շահագործումը՝ ազգերով :

Ազգերի միջև եղած թշնամութիւնը կը չքանայ: Երբ ազգի մէջ գոնուող դասակարգերի հակամարտութիւնը կը վերանայ:

Կարճ խօսքով՝ քաղաք-պետութիւնը (սիտէ) կամ նահանգն է, որ առաջին անգամ հայրենիք եղաւ. և նրանք՝ որոնք ազգեր հիմնեցին, յեղափոխականներ եղան: Հայրենիքը, այսօր, ազգն է. և նրանք՝ որոնք Միջազգայնական են հիմնում, նրանք՝ նոյնպէս՝ յեղափոխականներ են հրաշակում: Հայրենիքը, — դա վաղը կը լինի Եւրոպան և Ամերիկեան Դաշնակցութիւնը: Եւ արդէն մշակում, պատ-

րաստում է ապագայի մեր մեծ հայրենիքը, որ այլևս սահմաններ չի ճանաչիլ. որովհետեւ կը տարածուի մեր ամբողջ մոլորակի վրան :

ԷՄԻԼ ՎԱՆԴԵՐՎԵԼԴ



Դ.  
Ա. ԲԵԲԵԼ

ՊԱՏԳԱՄԱԽՈՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՌԱՅԻՍՏԱԿՈՒՄ

Ա. — Հայրենասիրութիւն ասելով ի՞նչ ենք հասկանում :  
Հայրենասիրութիւն ասելով՝ հասկանում ենք այն՝ որ իր սեպհական լիզուռն, իր սեպհական վարք ու բարքը, իր սեպհական քաղաքակրթութիւնն ու պատմութիւնը ունեցող ամէն ժողովուրդ իրաւունք ունի զարգանալու՝ որպէս մի օրգանական ամբողջութիւն՝ և ինքն իրեն կառավարելու : Հայրենասէր է այն մարդը, որ ջանք է անում՝ ընդհանուր շահի տեսակէտից՝ ամենաբարձր քաղաքակրթութիւն ապահովելու ա՛յն ազգին, որին նա պատկանում է իր ծննդեամբ, իր լեզուով և վարք ու բարքով, առանց միայն ու զեան տալու ո՛ր և է ուրիշ մի ժողովրդի : Երբ նա այդ նպատակին հետապնդում է՝ առանց անձնական շահի մտահոգութեան և առանց ղեկավարիչ դասակարգին ծառայելու, այլ ընդհանուր շահի տեսակէտից, առանց աշառութեան, — ապա նա իրագործում է է՛ն սեփական, որ մի մարդ կարող է ինքն իրեն առաջադրել :

Բ. — Բայց ի՞նչ ենք հասկանում Միջազգայնականութիւն ասելով :

Միջազգայնականութիւն ասելով՝ հասկանում ենք ո՛չ թէ ազգութիւնների ջնջումը, ո՛չ թէ ժողովրդների բռնի ձուլումը, այլ քաղաքակրթութեան խաղաղ յարաբերութիւնների պահպանութիւնը և յառաջդիմութիւնը ժողովրդների միջև :

Մի ժողովրդի ազգային քաղաքակրթութեան կողքին՝ գոյութիւն ունի միջազգային մի քաղաքակրթութիւն, որին ամէն ժողովուրդ մասնակցում է իր բարոյական և մտաւոր զարգացման չափովը : Մեր առևտրական յարաբերութիւնները, մեր գիտական, արուեստագիտական և գրական գոր-

ծունէութիւնները, գիւտերի և հնարքների փոխանակութիւնները՝ միջազգային այդ ջանքի բնորոշող կողմերն են :

Միջազգայնութիւնը ձգտում է այդ յարաբերութիւնները հետզհետէ է՛լ աւելի մտերմական դարձնելու՝ վաճառականական համաձայնութիւններով, ծովային պայմանագրութիւններով, դաշինքներով, քաղաքակրթութեան ամէն աղբիւրների փոխանակութիւններով, աշխատաւորին հովանաւորող միջազգային օրէնքներով : Միջազգային իրաւունքի (ժողովրդների իրաւունք) զարգացումով, օտարականների և համազգայինների պարտականութիւնների հաւասարեցումով, բոլոր ժողովրդների մարդասիրական ջանքերի յառաջադիմութեամբ, ազգերի միջև եղող վէճերի վճռուելով՝ միջազգային մի արեւադարձով :

Այդ միջազգայնութիւնը պարտաւորեցնում է սօցիալիստներին՝ խիզախօրէն մարտնչելու աշխարհակալական ծարաւի դէմ, ազգերի թշնամական կղզիացման դէմ, որովհետեւ այդ բոլորը արտայայտիչ նշաններ են ազգային ընդդիմադրութիւնների և պատերազմի է՛լ մշտական սպառնալիքի :

Միջազգային այդ գործունէութեան պսակը պիտի լինի կազմել համերաշխային մի Պարլամենտ՝ քաղաքակրթ բոլոր ազգերի ներկայացուցիչներից բաղկացած՝ որ միջազգային յարաբերութիւնները կանոնաւորի և ամրապնդի :

Հայրենասիրութիւն և միջազգայնութիւն, ուրեմն, իրարու չեն ընդդիմահարում, այլ իրարու լրացնում են՝ մարդկային ևս աւելի կատարեալ քաղաքակրթութեան համար :

Գ. — Վերև ասուածները պատասխան են ձեր երկրորդ և երրորդ հարցերին :

Սօցիալիստները՝ թէ՛ խմբերի և հաւաքոյթների մէջ, թէ՛ Մամուլի և Պարլամենտի մէջ՝ ամէն տեղ պիտի շարժուին գործունէութեան այն ուղղութեամբ, որ մենք վերլուծեցինք :

Եթէ ժողովրդների միջև եղած ընդդիմադրութիւնները անմիջապէս չեն կարող չքանալ, սօցիալիստները պիտի աշխատին, որ այդ ընդդիմադրութիւնները փոքր առ փոքր մեղմանան :

Դ. — Սօցիալիստների պարտականութիւնը՝ պատերազմի ժամանակ՝ չի կարելի մի նախադասութեամբ սահմանել :



Թէ՛ ժողովրդներին և թէ՛ պարլամենտներին մէջ՝ ամենուրեք, սօցիալիստները փոքրամասնութիւն են կազմում: Ներկայումս՝ Պետութեանց արտաքին քաղաքականութիւնը առանց նրանց է կատարւում: Նրանց պարտականութիւնն է, որ արտաքին այդ քաղաքականութեան վրայ ազդեն՝ վերև յիշուած ուղղութեամբ:

Բայց եթէ հակառակ սօցիալիստների կամքին, պատերազմ ծագի, խստագանացի և անաչառ կերպով՝ նրանք պիտի քննեն այդ պատերազմի պատճառները:

Եթէ յարձակողը իրենց սեպհական երկրի կառավարութիւնն է, նրանք պիտի մերժեն կառավարութեան՝ պատերազմելու պայմաններ տալու, յարմարաւոր ամէն միջոցներով պիտի պայքարեն պատերազմի դէմ: Իսկ եթէ իր երկրի կառավարութիւնն է, որ՝ հակառակ իր կամքին՝ ստիպւում է պատերազմ անել և յարձակման է ենթարկուել, — սօցիալիստները չեն կարող իրենց կառավարութեան աջակցութիւն ցոյց չը տալ: Որովհետև, մի պատերազմի մէջ՝ ամէնից քիչ տառապողը կառավարութիւնն է, իսկ ամէնից շատ տանջուողը՝ ժողովուրդը:

Եթէ պատերազմը ստանում է աշխարհակալական պատերազմի բնաւորութիւն, — ինչպիսի պարագայ որ ներկայացաւ Գերմանիայի պատերազմի ժամանակ Ֆրանսիայի դէմ, 1870-ին, Սէզանի ճակատամարտից յետոյ, — սօցիալիստների պարտականութիւնն է՝ աշխարհակալական այդ ջանքերին ընդդիմադրել:

Երբ, 1870-ին, ֆրանկո-գերմանական պատերազմը պայթեց, պատերազմական վարկի ըուէրաբնութեան ժամանակ՝ Լիբկնեխտը և ես ձեռնպահ մնացինք: Մենք այդպէս արեցինք, որովհետև գիտէինք որ այդ պատերազմը անխուսափելի հետևանք էր Բիսմարկի ա՛յն քաղաքականութեան, որի դէմ մենք կանխամտածմամբ պայքարում էինք: Մենք այդպէս վարուեցանք, որովհետև համազուած էինք, որ մի Հօհենցոլլերնի թեկնածութիւնը Իսպանական զահի վրայ՝ լոկ պատրուակ էր Բիսմարկի ձեռքին, որ Նապոլէոնին պատերազմի մէջ ձգէր, — ինչ որ ինքը եռանդազին կերպով ցանկանում էր: Միևս կողմից՝ պատերազմական վարկի պարզ

մերժումովը, մենք չէինք էլ ուզում հասկացնել, ոյ Նապոլէոնեան քաղաքականութեան հաւանելու երևոյթն ունինք:

Բայց երբ, Սէզանից յետոյ, մեր յուսացած խաղաղութիւնը չկնքուեց, պատերազմը շարունակուեց. և՛ որպէս յաղթութեան գին՝ Ալզաս-Լօրէնը պահանջեցին, մենք՝ սօցիալիստներս՝ ոչ միայն եռանդազին կերպով ընդդիմադրեցինք պատերազմի շարունակութեանը, այլ Ռայխստագում, միաձայնօրէնք, մերժեցինք ա՛յն վարկը, որ պահանջում էին պատերազմի շարունակութեան համար:

Ֆրանսիայից, այն ժամանակ, ուզում էին խլել մի հողամաս, որ Երբեմն, թէև, գերմանական էր եղած, և որի ժողովրդի մեծամասնութիւնը գեռ գերմաներէն էր խօսում, բայց՝ դարերից ի վեր՝ այդ ժողովրդի մշակոյթը, կեանքը խառնուած, միացած էր ֆրանսիայի կեանքի հետ. այնպէս որ Գերմանիան չքանում էր: Եւ եթէ Ալզաս-Լօրէնցուն հարցնէին՝ թէ ինքը կը դանկանար գերմանացի՞ դառնալ, թէ՞ ֆրանսիացի մնալ, — ամենայն հաւանականութեամբ Ֆրանսիայի համար է, որ՝ միաձայնութեամբ, նպաստաւոր պատասխան պիտի տային: Իւրաքանչիւր ժողովուրդ, ժողովուրդի իւրաքանչիւր հատուած՝ ինքն է, որ իր բախտը պիտի տնօրինի:

Երբ բաժան-բաժան եղող մի ժողովրդի զանազան հատուածները մտնում են աշխարհակալող մի ժողովրդի մէջ և նկատւում են որպէս խորթ օտարականներ, — այդպիսի մի ժողովուրդը իրաւունք ունի անկախութեան ձգտելու: Դրան աջքանու օրինակ կարող է լինել Լեհաստանը: Թէև Լեհաստանի վերջին բաժանումը 110 տարի սրանից առաջ է կատարուել, բայց Լեհ ժողովրդի ձգտումը դէպի ազգային անկախութիւն՝ այժմ է՛լ աւելի վառ է, քան երբ և իցէ, իրեն նուաճող երեք ազգերի մէջ էլ: Երբ մի եռանդուն ժողովրդի լեզուն, քաղաքակրթութիւնը հարուածւում է, հետևաբար, հարուածւում են և՛ նրա նիւթական շահերը. ուստի նա միշտ ջանք պիտի թափի ազգային անկախութիւնն ձեռք բերել, — որովհետև, ազգային անկախութիւնն է միայն՝ որ նրան կարող է երաշխաւորել իր սեպհական ինքնատիպ քաղաքակրթութիւնը: Այդ ընդհանուր կանոնը որոշ կերպով հաստատում



է Հասարակապետական և Ռամկավարական Զուիցերիայի բացառիկ բնութիւնը, ուր՝ կողք-կողքի խաղաղութեան և անյորրութեան մէջ՝ ապրում են գերմանացիներ, ֆրանսիացիներ և իտալացիներ. որովհետեւ Զուիցերիայի մէջ՝ ոչ մի ազգ միասին չի տիրապետում, չի ճնշում: Դրա հակադիր օրինակն է՝ կէս-բացարձակապետական բէթիմ ունեցող Աւրստրիան, ուր բոլոր ազգերը, փոխադարձաբար, իրարու դէմ զինուած՝ պայքար են մղում միմեանց միջև, որովհետեւ մէկը միւսին իշխելու ցանկութիւն ունի, իսկ այդ երկրի յետաշրջիկ կառավարութիւնն էլ փոյրութիւն ունի՝ ազգութիւններին իրարու հետ կռիւ մղելու պատճառով. նրա գոյութիւնը լսնուած է այդ ներքին կռիւների վրայ:

Ուրեմն, սրանից այն է հետեւում, որ երբ մի պատերազմ իրեն վախճան է դարձնում՝ ուրիշ ժողովուրդների հողային ամբողջութիւնից կտորներ խլել բռնի կերպով, կամ երբ իրեն նգասակ է անում մի ուրիշ ազգ նուաճելու, ճնշելու, — որքան էլ որ պատերազմից սոսկան՝ այնու ամենայնիւ, սօցիալիստները իրենց ամբողջ ուժը պիտի նուիրեն հայրենի հողի պաշտպանութեանը և իրենց ազգի փրկութեանը, որին ստրկացումն է սպառնում:

Առնենք հետեւեալ օրինակը. Գերմանիան յարձակում է Ֆրանսիայի վրայ՝ նոր հողամասեր խլելու դիտումով — պատահականութիւն՝ որ ոչ ոք ի նկատի ունի Գերմանիայում, նոյն իսկ մեր հախաճորդները — այդ ժամանակ, մենք ոչ միայն այդպիսի պատերազմի համար վարկ չենք քուէսրկիլ, այլ նրա դէմ կը պայքարենք. և բոլորովին էլ բնական կը զանենք, որ մեր ֆրանսիացի բոլոր ընկերները մէկ մարդու պէս ոտքի ելնեն և աշխարհակալական տենչանք ունեցող Գերմանիային յետ մղեն՝ Ֆրանսիայի սահմաններից դուրս:

Սօցիալիստական շարժման կանոնաւոր զարգացումը մեծապէս կախումն ունի երկրի անկախութիւնից: Երբ մի ժողովուրդ ճնշումի ենթարկուի, այդպիսի մի ժողովուրդի մէջ՝ շատ մեղմացած արտայայտութիւն կունենան թէ՛ դատարարային ընդդիմադրութիւնները և թէ՛ դատարարային կռիւները:

Այս բացատրութիւններով, կարծում եմ, որ յետակ կեր-

պով բացատրեցի՝ թէ ի՞նչ է սօցիալիստների դիրքը ազգայնապէս և միջազգայնապէս, և թէ՛ նրանք ինչպէս պիտի վարուեն պատերազմի ժամանակ:

Ա. ԲԷԲԷԼ



Ե.

## ԷՆՐԻԿՕ ՖԵՐՐԻ

### ՊԱՏԳԱՄԱԽՈՐ ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Մի ճգնաւոր, որ խոյս է տալիս ընկերային կեանքի դժուարութիւններից, նա մի եսասէր է՝ աւելի կամ նուազ հոգե-ախտաբանական պայմանների մէջ գտնուող։ Նա կեանքի դասաւիճքն է, ինչպէս և՛ ինքնասպանը։

Մի ամուրի կարող է բարի մարդ լինել։ Բայց նա, նոյնպէս, եսասիրութեան անձնաւորումն է. որովհետեւ չի յապաղում իր գոյութիւնը ընդարձակել նոյն իսկ մինչև ընտանիքը, որ մարդու և կնոջ համար բնականոն պայման է։

Մի ընտանիքի հայր, որ միայն իւրայիններով է զբաղւում, ընդհանրապէս չափ է յարգւում. սակայն, նա մի փոքր նուազ սահմանափակ եսասիրութեան անձնաւորումն է. — որովհետեւ չի շահագործւում հասարակական կեանքի կարիքներով, մարտնչումներով և վերահաս վտանգներով։ Ա՛յն գործաւորը, որ ապրում է միայն՝ ճշնից արհեստանոցի սկզբունքով, նա կապիտալիստ բարոյականութեան մի տիպար է, որովհետեւ չի մտահոգւում արհեստակցական միութիւններով, ընտրութիւններով, գործադուլներով և հրապարակային ժողովներով։ Նա շահագործուելիք մի բարի կենդանի է, որ յարգում է ճիշդինակութեան սկրունքը — Պետութիւն և Եկեղեցի — և խուլ ու համր է՝ մարդկային համերաշխութեան թրթռումներին։

Կան մարդիկ, որ բացի անձնական և ընտանեկան գործերից՝ խորհում են նա՛ն հասարակական կեանքի գործերի մասին, շահագործւում են իրենց գիւղով, համայնքով, և նոյն իսկ ազգային ամբողջ կեանքին են մասնակցում։

Վերջապէս, կան մարդիկ էլ՝ որ այդ բոլոր սահմանափակ մտահոգութիւնները իրենց վրայ առնելով միասին՝ ի-

րենց երկրի սահմաններից դուրս, սիրում են նա՛ն ամբողջ մարդկութիւնը. և այդ եէրը նրանք ցոյց են տալիս թէ՛ իրենց գաղափարներով և թէ՛ գործերով։

Ընտանիքի հայրը և ամուրի մարդը ո՛չ մարդասէրներ են, ո՛չ էլ՝ հայրենասէրներ. բայց մարդասէրները և հայրենասէրները կարող են ընտանիքի շատ լաւ հայրեր լինել. — և դա ապացոյց է՝ որ անհաշտելիութիւն չը կայ սեպհական անձի, ընտանիքի, հայրենիքի և մարդկութեան սիրոյ միջև։

Ընտանեկան սէրը սպաննող՝ անձնական սիրոյ այլասերումն է. նոյնպէս էլ, աստիճան առ աստիճան, մարդկութեան սիրոյն փլասողը՝ հայրենասիրութեան այլասերումն է։

Բայց իրենց բնականոն ու առողջ ձևի մէջ, հետզհետէ ընդլայնուող բոլոր այդ զգացումները կարող են՝ շատ լաւ կերպով՝ իրարու հետ համագոյակից լինել։

\* \* \*  
\* \* \*

Եւ քանի որ — ինչպէս Լէօպարդին յայտարարում է — ներելի է, որ մենք ինքներս մեր մասին խօսենք, որովհետեւ մենք որ մեզ աւելի՛ լաւ ենք ճանաչում, ու նորագոյն գիտակցութեան տեսակէտից էլ՝ մեր առաքինութիւնները և մեր պակասութիւնները բնաւ կախումն չունին մեր կամքից. — ա՛ն՝ թէ այդ տեսակէտով ես ի՛նչ գիտեմ իմ մասին։

Ես սիրում եմ սեպհական անհատականութիւնս և համոզուած, կողմնակից եմ ֆիզիքական, մտաւոր և բարոյական առողջ պահութեան կանոններին, — ես այդ կանոնները կիրարկում եմ ամէն օր և դրանք ինձ տալիս են անխորտակելի առողջութիւն, ժառանգականօրէն ուժեղ՝ իմ կազմիս պատճառով։

Դէպի անձս ունեցած այս սիրոյս և հոգացողութեանս շնորհիւ է, որ կարողանում եմ ահագին աշխատանք կատարել՝ որպէս գիտութեան մարդ, ժողովրդական պրօպագանդիստ, պարլամէնտի պատգամաւոր, տնօրէն մի հանդէսի, փաստաբան՝ ապրուստ ճարելու, տնօրէն մարտական մի օրաթերթի, համալսարանի ուսուցչապետ։

Միևնոյն ժամանակ՝ իմ հոգացողութիւններս տալիս եմ ընտանիքիս, որին՝ բարոյական և քաղաքական համերաշխութիւն։



թեան թթուածնած, մաքուր մթնոլորտի մէջ՝ իմ աշխատանքս ապահովում է բնականոն և երջանիկ մի գոյութիւն, իմ քաղաքական կեանքի փոթորկալից միջավայրում:

Իմ ընտանիքից յետոյ՝ ես սիրում եմ ա՛յն գիւղը, ուր ծնուած եմ, որ ինձ յիշեցնում է Մօրս — որ դեռ կենդանի է սրտիս բաբախումներին մէջ — իմ մանկական գեղեցիկ, երջանիկ տարիներս... Ինչպէս և իմ երիտասարդական ու ներկայ տարիքիս օրերը:

Իմ ընտանիքից յետոյ՝ ես սիրում եմ իմ գաւառս (Մանտու) և իմ նահանգս (Լոմբարտիա), ուր ես գտնում եմ աւելի մեծ գիւրականցութիւն՝ իմ ճաշակիս, մտածմունքիս, գործունէութեանս և ապրելուս եղանակին համեմատ, քան Իտալիայի մնացած մասերում:

Բայց ես, նոյնպէս, չատ եմ սիրում իմ մեծ հայրենիքս Իտալիան: Բոլոր ձանձրոյթները և խռովայոյզ կեանքը, որ ես կրել եմ, և ուրախութեամբ էլ դեռ կրում եմ, ուրիշ պատճառ չունիմ, եթէ ոչ՝ այդ հայրենասիրական սէրը. ուրովհետեւ ես ցանկանում եմ, որ իմ հայրենակիցներս և՛ աւելի երջանիկ լինին և նոյնքան էլ մեծ, որքան Հռովմէական Հասարակապետութեան և Վերածնութեան իմ նախահայրերս:

Եւ այդ ամէնը ինձ չեն արգիլում՝ եռանդուն ու պայքարող սօցիալիստ լինիլ. — այսինքն մի մարդասէր, որ պատերազմը համարում է բարբարոսական վերապրումի պատուհաս և անհատական, ազգային ու միջազգային բոլոր երջանկութիւնների երաշխաւորութիւնը տեսնում է խաղաղութեան յաւաքութեան մէջ:

Նա, ուրեմն, որ մտածում է՝ թէ սէր դէպի մարդկութիւն՝ ասել է հայրենասիրութեան մահ կամ չափազանց տրկարացում. — կը նշանակի, որ այնպիսին չի հասկանում թէ մարդկային սրտի մէջ այլասիրական ամէն զգացմունքներ համար տեղ կայ, — զգացմունքներ՝ որոնք՝ լճի ալիքների նման՝ տարածւում են մեր անձից դէպի մեր ընտանիքը, յետոյ դէպի մեր քաղաքը, մեր ազգը, և՛ վերջապէս՝ դէպի ամբողջ մարդկութիւնը:

Իտալիայի մէջ, միջին դարում, Վենետիկցիներ ատում էին

ու պատերազմով սպանում Գենուացիներին: Յիւրենտիացիներն սգանում էր Պիզացուն: Եթէ այն ժամանակ նրանց ասէին, որ կարելի է սիրել թէ՛ փոքր հայրենիքը — Վենետիկ կամ Գենուա, Յիւրենցիա կամ Պիզա — և թէ՛ մօծ հայրենիքը — Իտալիան —, գուցէ նրանք պատասխանէին՝ թէ այդպիսի զգացմունքներ անհաշտելի են:

Եւ սակայն, մեծ ազգութիւնների կազմուելով նորագոյն պատմութիւնը ցոյց տուեց, որ այդ զգացմունքների մէջ՝ թէ հաշտելիութիւն կայ և թէ՛ կարելիութիւն:

Այն զգացմունքը՝ թէ Ֆրանսիացիները պիտի ատեն և պատերազմով սպանեն Իտալացիներին, Գերմանացիներին, Անգլիացիներին, փոխանակ միեւնոյն սիրով իրարու հետ միանալու, — դա միջնադարեան մի վերապրում է, որ դատապարտուած է չքանալու:

Ինչպէս որ այսօրուայ Յիւրենցիացիներն սիրում է Յիւրենցիան՝ առանց ատելու Պիզան և Իտալիայի մնացած մասը, նոյնպէս էլ զանազան հայրենասիրութիւնները կը հաշտուին մարդկութեան սիրոյն հետ:

Նախօնալիզմը (ազգայնականութիւնը) հայրենասիրութեան խեղաթիւրումն է. նա է՝ որ անհաշտելի է մարդկութեան սիրոյն հետ: Բայց հարցը չի կայանում հիւանդութիւնը առողջութեան հետ հաշտեցնելուն մէջ. հարցը այն մասին է թէ՛ պէտք է զարգացնել բարոյական առողջութիւնը՝ իր բոլոր աստիճանական ընդլայնուած արտայայտունութիւնների մէջ, զարգացնել մինչև մարդկային Միջազգայնական գիտակցութեան լիակատար ա՛յն փթթումը, որ կոչւում է սօցիալիզմ:

Այս ընդհանուր մտածմունքներից էլ՝ ինքնաբերաբար հետևում է մասնաւոր հարցերի պատասխանը:

Ա. — Ուրեմն, ես կարծում եմ, որ հայրենասիրութիւն և միջազգայնութիւն կատարելապէս հաշտելի են իրարու հետ. և գիտակից ու նորագոյն ամէն մարդու համար՝ նրանք հաւաստակից ու նորագոյն ամէն մարդու համար՝ նրանք հաւաստակից պիտի լինեն: Ինչպէս որ, այլասիրութեան մագործակից պիտի լինեն: Ինչպէս որ, որովհետեւ չափազանցութիւնը մի ստակար է, — որովհետեւ չափազանցութիւնը, կեանքը կարճացնում է, կամ՝ ծանրափսս առողջութիւնը,



տակ աշխատանքով՝ անօգուտ դարձնում— նոյնպէս էլ վնասակար է՝ հայրենիքի ամէն տեսակ սէր ժխտող՝ բացարձակ միջազգայնութեան չափազանցութիւնը. որովհետեւ նա արգիւտւում, թոյլ չի տալիս, որ ժողովուրդները զարգանան իրենց ազգային հանճարին համեմատ. մինչդեռ դա անհրաժեշտ և օգտակար է՝ մարդկութեան բազմատեսակ յառաջադիմութեան համար:

Ժողովրդներին, ինչպէս և անհատներին համար, սօցիալիզմը կամենում է իրագործել Գէօթէի մտածմունքը. — թող իւրաքանչիւր ոք դառնայ այն՝ ինչ որ է:

Միայն, չը պէտք է մոռնալ, որ «հայրենիք»-ի մէջ, — ինչպէս ասում է Դանտէն, — երկու ժողովուրդ կայ. մի ժողովուրդ, որ հրամայում է, և միւսը՝ որ ծիւրում է»։ Այնպէս որ՝ սօցիալիստները երբէք չը պիտի մոռանան, որ հայրենիքի մէջ եղող ճնշուածների և շահագործուողների ազատագրութիւնը նոյնքան մի մեծ և ազնիւ պարտականութիւն է, որքան որ «հայրենիք»-ի անկախութեան, պաշտպանութեան պարտականութիւնը:

Բ. — Միլիտարիզմի հանդէպ — ազգային կամ զաղութային — սօցիալիստները ծայրայեղ ընդդիմադիր դիմում պիտի ունենան։ Պասկերալ և աշխատանքի գրանք մարդկային յառաջադիմութեան երկու ոյժերն են։ Բայց պատերազմը նախապատմական և անասնային մի ոյժ է. նա ինքն իր մէջ է բովանդակում իրաւունքի ժխտումը. որովհետեւ «գողութիւնը նպատակ, սպանութիւնը միջոց» է պատերազմի համար։ Ընդհակառակը, աշխատանքը, — որ համերաշխական մի ընկերակցութիւն է՝ բնական միջավայրի գոյութեան շրջանում — բարօրութեան, բարոյականութեան յառաջադիմութեան միակ բեղմնաւոր ոյժն է։ Պատերազմը (սուր) և միլիտարիզմը (պարբերական) քայքայում, վատնում են. աշխատանքը արտադրում, զարգացնում է:

Թէ այդ երկուսից ո՞րը պիտի ընտրել, — այդ մասին կասկած անգամ չի կարող լինել:

Դ. — Սօցիալիստներին դերը միջազգային յարաբերութիւնների մէջ՝ նոյնը պիտի լինի, ինչ որ ազգային յարաբերութիւնների մէջ. — անհատների և ժողովրդների համե-

րաշխութիւնը իրենց ուղղեցոյցը պիտի լինի. անհատական յանցանքի (գողութիւն, մարդասպանութիւն, բռնաբարութիւն) և հաւաքական յանցանքի (պատերազմ, դադութային աւազակութիւն, և այլն) տեղը դնել՝ աշխատանքի և եղբայրութեան թափաւորութիւնը:

Դ. — Պատերազմի՞ ժամանակ։ Անձնականիս նկատմամբ՝ էթէ տունս յարձակման ենթարկուի աւազակների կամ գողերի կողմից — ես թէ՛ ինձ և թէ՛ ընտանիքս կը պաշտպանեմ մինչև մահս։ Եթէ իմ հայրենիքս յարձակման ենթարկուի աշխարհակալող բանակների կողմից (որոնք տարբեր ձևով հագնուած և է՛լ աւելի մեթոտիկ աւազակներ են), ես այդ հայրենիքը, նոյն պէս, կը պաշտպանեմ մինչև մահս:

Եթէ իմ երկրի մի քանի պարոնները, որոնք «կառավարութիւն» են կազմում, ուզենան երթալ և աւազակներ դառնալ մի ուրիշ ժողովրդի — սպիտակամորթ, սևամորթ կամ դեղնամորթ — պատկանող երկրի նկատմամբ, — ես բացարդապէս կը մերժեմ նրանց հնազանդիլ։ Ահա՛ բոլորը:

Եւ եթէ, այժմ, բազմաթիւ չեն ա՛յն մարդիկը, որոնք վերջին պարագայի նկատմամբ՝ ինձ նման պատասխան ունին և վճռապէս կերպով որոշել են իրականացնել ա՛յն, — սրանից տասը, ասոնուհինգ, քսան տարի յետոյ, եթէ սօցիալիստական պրօպագանտան և կազմակերպութիւնը կը շարունակուի, նրանք շատ աւելի բազմաթիւ կը լինեն և աւելակշիռ մեծամասնութիւն կը կազմեն:

Այն ժամանակ... Նոր մարդկութիւն կը լինի։  
ԷՆՐԻԿՕ ՖԵՐՐԻ



# ԱԼԳԵՐՆՈՒՆ ԼԻ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՆԻԻ-ԵՕՐԻԻ “ԳՈՐԾԱԻՈՐ”-Ի  
ՄԻԱՅՆԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՍՕՅԻԱԼԻՍՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ

«Աշխատաւորները հայրենիք չունին. նրանք չեն կարող զրկուիլ այն բանից, ինչ որ չունին».— ես այդ խօսքը համարում եմ որպէս բացասութիւն բուրժուազական կամ չովինական հայրենասիրութեան, և արդէն այդ մտքով էլ ասուել է Բայց մենք իրաւունք չունինք— ինչպէս անում է Սուրբ Գրքի խօսքերին հաւատացողը— այդ նախադասութիւնը իր բնագրից զատելու և նրանից կազմելու՝ գաղափարական հակահայրենասիրութեան մի հիմունք:

Երբ սօցիալիստներից ոմանք մինչև այն աստիճան առաջ են գնում, որ ասում են թէ՛ ազգային անկախութիւնը կամ ազգի նուաճումը՝ մի օտար տիրապետութեան կողմից՝ պարօլետարիատի համար նշանակազուրկ և անկարևոր մի հարց է, և ո՛չ մի դէպքում, աշխատաւորները պիտի համաձայն ինքէնք վերցնել դրանից եկած այդ արշաւանքը յետ մղելու համար, — իմ կարծիքով, այդպէս մտածելով՝ նրանք ընկնում են նոյնքան ամուլ մի ուտօպայի մէջ, որքան այն կարծեցեալ ազատապաշտները (անիշխանական), որոնք՝ գոյութիւն ունեցող Պետութիւնը բուրժուազական հաստատութիւն համարելով՝ ժխտում են պրօլետարիատի քաղաքական գործունէութիւնը, որպէս յեղափոխական սկզբունքների դրօշում, բռնաբարում:

Խնդիրը, այդ ձևի տակ, գոյութիւն չունի մեզ՝ Միացեալ-Նահանգների սօցիալիստներին համար. որովհետև մեր երկրը ո՛չ մի տեսակ արշաւանքի վտանգի տակ է գտնւում: Այդ պատճառով էլ՝ ես ինձ թոյլ չը պիտի տամ վիճարա-

նութեան ենթարկելու այն բանը, ինչ որ մեզ համար պարզապէս տեսական բնաւորութիւն ունի. մինչդեռ նա գործնական քաղաքականութեան մի հարց է՝ Եւրոպայի մեր ընկերների համար:

. . . . .

ԱԼԳԵՐՆՈՒՆ ԼԻ



Է.  
ԳԻՒՍՏԱԻ ՀԵՐՎԷ

«Սօցիալիստ կեանք»-ի հարց ու փորձի Ա. և Դ. կէտերին միայն պիտի պատասխանեմ:

Հայրենասիրութիւն և միջազգայնութիւն կարող են իրարու հետ հաշտուիլ:

Այո՛, գրեթէ այնպէս, ինչպէս կրակն ու ջուրը:

Ի՞նչ է հայրենասիրութիւն:

Սէր դէպի ծննդավայր քաղաք:— Ո՛չ երբէք: Վաղը, թող մեր ծննդավայր քաղաքը գերմանական, ռուսական, չինական լինի. այնու ամենայնիւ, այն անկիւնը՝ ուր մենք ծնած, մեծացած ենք, նրա համար միշտ էլ կունենանք մի տեսակ որդիական սէր, գորով:

Հայրենասիրութիւնը սէր է դէպի կառավարական մի ձև՝ — Այդ դէպքում չը պէտք է հաւատալ, որ հայրենասէրներ կարող են լինել՝ քաղաքական ամէն կուսակցութիւններին պատկանողները:

Սէր դէպի մի ունէ վարք ու բարք, դէպի մտքի մի որոշ դարձումք, դէպի ազգային մի հանճար:— Բայց իւրաքանչիւր հայրենիքի մէջ՝ վարք ու բարքը և մտքի դարձումքները փոխուում են նահանգէ նահանգ, քաղաքէ գիւղ, դասակարգէ դասակարգ: Վարք ու բարքի և մտքի դարձումքների տեսակէտով՝ Յրանսիայի և Գերմանիայի բուրժուաները աւելի են իրարու նմանում, քան միեւնոյն երկրի բուրժուան ու գիւղացին:

Երբ հաղորդակցութեանց միջոցների դժուարութիւնների պատճառով՝ ժողովուրդները ապրում էին մակադած՝ իրենց գաւառների մէջ, — ազգային և նոյնիսկ գաւառային շատ տեսակ տարբերութիւններ կային: Սակայն, որքան որ յարաբերութեանց դիւրութիւնը աւելի է զարգանում ժողովրդներին միջև, այնքան էլ՝ ազգային հանճարների միջև եղած

խորութիւնները թուլանում են և ջնջւում, — արուեստ, գրականութիւն, մանաւանդ գիտութիւն՝ իրենց ազգային գունաւորման հանգամանքը կորցնում են:

Ինչ որ, սովորաբար, հայրենասիրութիւն է կոչւում, բաւականին յստակ մի գաղափար է:

Իրականութեան մէջ՝ հայրենասիրութիւնը սիրոյ և նախապատուութեան մի զգացմունք է, որ մեզ կապում է այն հայրենիքի հետ, ուր դիպուածով ծնուել ենք, ինչ էլ որ լինի այդ հայրենիքը. ինչ էլ որ լինին նրա թերութիւնները, քաղաքական ձևը, ընկերային դրութիւնը: Հայրենիքը հոգեպէս մի միացած շերտի և՛ յօժար կամ բռնի կերպով՝ իրարու հետ միացած մարդկանց այն ամբողջութիւնն է, որոնք գտնւում են միևնոյն օրէնքների և վարչութեան տակ, ու են թակայ են հայրենասիրական միեւնոյն կրթութեան, ազգային միեւնոյն հրապոյրներին:

Սիրոյ և նախապատուութեան այդ զգացմունքը, որ բնական և բնածին ոյլին ունի իր մէջ, իւրաքանչիւր հայրենիքի մէջ՝ զարգանում և պահպանւում է ղեկավարիչ դասակարգի կողմից, որ աւելի ու պակաս չփոթութեամբ ըզուարթի կողմից, որ աւելի ու պակաս չփոթութեամբ զուգորդ է թէ՛ առանց այդ հայրենասիրութեան, դասակարգում է թէ՛ առանց այդ հայրենասիրութիւնները և՛ աւելի սուր կերպով աչքի կընկնեն:

Հայրենասիրութեան նպատակն է, իւրաքանչիւր հայրենիքի մէջ, ղեկավարիչների շահի պատճառով՝ քողարկել դասակարգային կռիւը և մարդու շահագործումը մարդու, իւրաքանչիւր հայրենիքի մէջ, հարուստ թէ՛ աղքատ, սլաճոյլ զանգուած են կազմում օտարականի դէմ:

Հնչեականակը՝ միջազգայնական սօցիալիզմը համախմբում է մարդկանց, — աղքատները հարուստների դէմ, մի դասի և մարդկանց, — աղքատները ուշադրութիւն դարձնելու՝ դասակարգ՝ միևնոյն դէմ, առանց ուշադրութիւն դարձնելու՝ սահմանների վերելից, պատմութեան ձեռքով գծուած՝ ցեղի և լեզուի տարբերութիւններին:

Ահա՛ այդ անլուծելի հակասութիւնը, այդ անվերածելի, ընդդէմադրութիւնն է, որ սօցիալիստները կարկառուն, բացորոշ պիտի դարձնեն, եթէ ուզում են դասակարգային կռուի և պրօլետարական միջազգայնականի զգացումը խո-



րապէս թափանցել տալ՝ ժողովրդական զանգուածների մէջ, Գանի որ՝ հայրենասէր լինել կը նշանակի ա՛յն աստիճան սիրել ներկայիս հայրենիքը, որ միշտ պատրաստ պէտք է գտնուել նրա համար սպանուելու՝ եթէ յարձակման ենթարկուի, — ուրեմն, մենք՝ սօցիալիստներս՝ մենք մեզ պէտք է հակահայրենասէրներ անուանենք, աւելի լաւ ֆերպով երջ տալու համար՝ որ մենք այժմեան բոլոր հայրենիքների թշնամիներն ենք. որ մենք՝ այդ հայրենիքները ո՛չ թէ որպէս մայր ենք ճանաչում, այլ որպէս մօրուներ, մեղերաւորներ՝ (կոտորածի և ժանտ կիներ) որոնց մենք միայն ատելութիւն ենք պարտական:



Եթէ սրանք են այն զգացմունքները, որ հակահայրենասէր սօցիալիստները տածում են հայրենիքի հանդէպ, Դ. հարցի պատասխանը, — սօցիալիստների պարտականութիւնը պատերազմի պարագային — այլևս կասկած չի կարող վերցնել:

Ոչ մի դէպքում, միջազգային պատերազմի պարագային, գիտակից մի սօցիալիստ՝ իր արեան մի կաթիլը, իր կաշուի մի քառակուսի հարիւրորդամէթրն անգամ չը պիտի տայ՝ այժմեան հայրենիքների պաշտպանութեան համար: Եթէ մի պատերազմի յայտարարութիւն, — ո՛ր կողմից էլ որ գալու լինի մեր կեանքը վտանգի մէջ դնի, եթէ այդ կեանքը պիտի զոհուի, ապա թող զոհուի ո՛չ թէ ներկայ հայրենիքների, այլ ընկերային յեղափոխութեան համար:

Բայց, այդպիսով, ամենայառաջագէմ երկրները յաջորդաբար կը նկնին ամենայն տաղէմ կառավարութիւնների ձեռքի տակ:

— Դրանից ի՞նչ կը կորցնեն պրօլետարները. նրանց համար բոլոր հայրենիքները, գրեթէ, համարժէք են: Կապիտալիստական բէթիմը ամէն տեղ զարգանալով՝ պրօլետարների համար կեանքի միանման պայմաններ է ստեղծում, և այդ ո՛չ միայն տնտեսական տեսակէտով, այլև քաղաքական և ներկայումս՝ եւրոպական ո՛չ մի պետութիւն կարող է մերժել այնպիսի տարրական իրաւունքներ, ինչպիսին են մա-

մուլի կատարեալ ազատութիւն և ընկերակցութիւնների կատարեալ ազատութիւն:

Եթէ, ասեմք, Գերմանիայի մի խոշոր մասը միանայ Ռուսաստանի հետ կամ Ֆրանսիայի մի մեծ կտորը անցնէլ Գերմանիային, — դրանից մի մօծ չարիք չէր յառաջանալ. պրօլետարները ոչինչ չէին կորցնիլ՝ ո՛չ տնտեսական տեսակէտով և ո՛չ էլ բարոյական. որովհետև ներկայումս եւրոպական ո՛չ մի աշխարհակալ կարող է կցուած երկրների ազգաբնակչութիւններից խլել՝ նրանց լեզուն, նրանց մտայնութիւնը, նրանց ազգային հանճարը, եթէ իրօք գա գոյութիւն ունի: Պրօլետարները, այդպիսով, կը կորցնեն միայն վերքերի քաղաքական մի առաւելութիւն, ուրիշ ոչինչ: Իսկ այդ կորուստի հետեանքը այն վարձատրութիւնը կը լինի, որ մի սահման կը փլչի. կցուող ժողովուրդները դիւրութիւն կունենան, եթէ իրօք աւելի զարգացած են, օգնելու աշխարհաշուրջ ժողովրդին, որ նա էլ իր վրայից նետէ՝ անցեալ միապետութիւններից մնացած հինաւուրց քաղաքական ձեւերը:

Բայց բոլորովին մտացածին մի ենթադրութիւն է, որ յետաձգեց երկրները կարող են իրենց հետ կցիլ յառաջագէտ երկրները. այդպիսի մի պատահականութիւնից երկնչելու տեղիք չը կայ:

Ֆրանսիայի մի խոշոր մասի Գերմանիայի հետ կցուելը, օրինակի համար, երկիւղալի կը լինէր այն ժամանակ. երբ սօցիալիստներ միայն Ֆրանսիայում գտնուած լինէին և եթ գերմանական սօցիալիստները ճշմարիտ սօցիալիստներ և, աչը լինէին:

Այդպիսի կցումն երկիւղալի կը լինէր այն ժամանակ երբ միայն Ֆրանսիական սօցիալիստները ապստամբութիւն մը պատասխանէին՝ իրենց եղած զօրաշարժի հրամանին: Բայց մենք հայնոյանք արած կը լինենք գերման մեր ընկերներին հաւատալու համար՝ թէ Ֆրանկո-գերմանական պատերազմի վաղորդային, նրանք կը քայլեն՝ Ֆրանսիայի գործաւորական կեդրոններում ապստամբութեան դիմող՝ սօցիալիստ համայնքների դէմ:

Ուրեմն, պատերազմի յայտարարութիւնը նշան պիտի լինի ընկերային Յեղափոխութեան, ո՛չ միայն սահմանի մի-



կողմից, այլ երկու կողմից էլ միաժամանակ, եթէ Կուսակցութիւնը ընդունի իմ առաջարկած տաքտիկան։

Այո՛, բայց այդ տակտիկայի համար նպաստաւոր պրօպագանտա կարող է լինել Յրանսիայում, ուր մամուլի աւելի մեծ ազատութիւն կայ. սինչդեռ նա արգելքի կը հանդիպէր Գերմանիայում՝ կառավարութեան և ոստիկանութեան կողմից։

— Դա տա՛րկ խօսք։ Գերմանական սօցիալ-դէմոկրատիան դեռ ապացոյցը տուել է, 1878-ից մինչև 1890-ը, տասնևերկու տարուան ընթացքում. երբ Բիսմարկը և Վիլհելմը բացառիկ օրէնքներ հրատարակեցին նրա դէմ. ո՛չ մի կառավարութիւն ոյժ ունի՝ գերման սօցիալիստ Կուսակցութեան պրօպագանտան խափանելու։ Ինչ որ Բիսմարկի բռունցքը չը կարողացաւ արգելել, երբ սօցիալ-դէմոկրատիան տակաւին մանկութեան մէջ էր, միթէ Վիլհելմ Բ. ը կարող է, այժմս, երբ Միջազգայնականի գերմանական հատուածը կրկնապատկել, եռապատկել է իր անդամների թիւը։

— Եթէ Հօտտենտօտների, Կաֆրերի կամ Մոնդոլների մի հորդա ներկայ հայրենիքների վրայ արշաւի, և՛ Հոնաց նման ամէն ինչ փչրի. քանդի, կործանի, կոտորի, — այն ժամանակ դուք՝ բուրժուաներ և պրօլետարներ, կը պաշտպանէ՞ք ներկայ հայրենիքները։

— Եթէ մի այդպիսի անհաւանական պատահականութիւն ներկայանայ, ապստամբական համայնքները — որ մենք կը յայտարարենք բուրժուազիայի մեր ձեռքը գէշ տուած օրը — «Բարբարոսներին» կընդունի հրացանի և թնդանօթի հարուածներով. թէև, նման պարագային, խնդիրն այլևս հայրենիքը պաշտպանելու մէջ չի լինիլ, այլ սեպհական ճկաչին։

— Պատերազմի պարագային՝ ապստամբութիւն և ընկերային Յեղափոխութիւն, հիանալի՝ զործեր. բայց դրանք անխրադործելի են։

Եթէ ընկերային Յեղափոխութիւնը իրադործելի է, ապա նա կարող է լինել միայն այն օրը, երբ Միջազգային պատերազմի ժամանակ, կառավարական ոյժերը կը զբաղուին հարևան երկրի կառավարական ոյժերով։

Ասել՝ որ բացառապէս յարմար այդ բոպէին՝ դա իրագործելի չէ, կը նշանակէ ասել՝ որ չը պէտք է հաւատալ Յեղափոխութեան, որ մարդիկ յեղափոխական են չրթունքների ծայրերով, մինչդեռ իրականին մէջ՝ նրանք խաղաղ բարենորոգչականներ են, ժխտողներ՝ ոչ-օրինական և բռնի բոլոր միջոցների, նոյնիսկ հաւաքական։

— Ասել է թէ դուք ո՛չ մի տարբերութիւն չէք դնում պաշտպանողական պատերազմի և յարձակողական պատերազմի միջև։

— Ո՛չ մի. որովհետև, գործնականի մէջ, անկարելի է գիտնալ՝ թէ իրենց ժողովրդներին պատերազմի մղող երկու կառավարութիւններից ո՞րն է իսկական յարձակող։

Օրինակ՝ Ֆրանկո-գերմանական, անգլո-բօէրական, ուսու-ջապոնական պատերազմները։

Մամուլի մի մեծ մասը և հեռագրութիւնը իրենց տրամադրութեան տակ ունենալով՝ կառավարութիւնները և դեկավարիչ դասակարգերը կարող են միշտ, իրենց ուզած ժամանակին, այն տպաւորութիւնը տալ՝ թէ իրենք յարձակման են ենթարկուել, որ ներքնախուժումը կատարուել է հարեւանի կողմից։

Ասել՝ որ հայրենիքը պէտք է պաշտպանել. երբ յարձակման ենթարկուի, — դա կը նշանակի ո՛չինչ չասել. դա կը նշանակի ասել՝ որ հայրենիքը պէտք է պաշտպանել ամէն պարագայի մէջ. որովհետև, երբ պատերազմ է ծագում՝ յանցանքները փոխադարձ են. և երբէք չի գիտցուի՝ թէ ո՛վ է ճշմարիտ յարձակող։

— Բայց Բրիւքսէլի (1891) և Յիւրիխի (1893) Համագումարները դատապարտել են ձեր թէզը։

— Ինչ որ մի Համագումար որոշել է, միւսը կարող է ջնջել. մանաւանդ 14 տարի յետոյ, երբ դրութիւնը բոլորովին փոխուել է։

Ուրեմն, երբէք հիմն սուր չհն այն առարկութիւնները որ հակադրում են մեր հսկահայրենասիրութեանը և ապստամբական գաղափարին՝ պատերազմի ժամանակ։



Ճշխարհին ասած, եթէ սօցիալիստ շրջաններից ոմանք, մանաւանդ Պարլամենտական սօցիալիստների ւ պայակոյսելը, — միայն նրանք, որոնց Վոցիալիստ Կեանքը հարկ է տեսել հարց ու փորձ անել — հակառակում են մեր թէզին, դրա պատճառը ո՛չ թէ այն է, որ մեր գաղափարը հակասօցիալիստական կամ անիլիստական բնաւորութիւն ունի, — ո՛չ. այլ դա յառաջանում է երկու ուրիշ պատճառներից, որ ո՛չ իրենք իրենց մէջ են խոստովանում և ո՛չ էլ հրապարակաւ ասում:

Առաջինն այն է՝ որ շատ սօցիալիստներ, մանաւանդ աւելի տարիքոտներ, մինչև իրենց ուղն ու ծուծը թունաւորուել են՝ գպրոցում աւանդուած հայրենասիրական կրօնից, որ զինուորական յրահանգէսներով սպաւորութիւն է գործել և նրանց ջիղերի մէջը թափանցել. ի դուր են այդպիսիները սշխատում հակադդել, կոչ անել իրենց ազատութեան և շննդաւորական ոգուն. նրանք չեն կարող բոլորովին դերօնանել հայրենասիրական նախապաշարութիւնից, հայրենասիրական խորհրդաւորութիւնից. որոնցից, սակայն, կարող են արմատապէս բուժուել՝ միայն աւելի մատաղ և աւելի նուազ վարակուած ուղեղները:

Երկրորդը՝ ընտրական պատճառն է. Բոլոր երկրներում՝ սօցիալիզմը հետզհետէ դարձել է ընտրական, բարենորոգչական, հակայեղափոխական մի Կուսակցութիւն. փոխանակ ընդհանրութեամբ նկատելու որպէս մի միջոց՝ օրէնսդրական փոքրիկ, հազիւ գնահատելի բարենորոգումներ ստանալու, բայց բնաւ սօցիալիստական. — նրանք այդ քուէաթուղթը համարել են որպէս միակ միջոցը՝ սօցիալիստական հասարակարգին հասնելու:

Ահա՛ այդ պատճառով էլ, ամէն ինչ ստորագրասուից՝ հասարակական իշխանութիւնների ընտրական նուաճումին:

Արդ, աթոռներ շահելու համար՝ պէտք է հաճոյանալ թէ արմատականներին և թէ՛ ոչ-սօցիալիստ՝ հասարակ ուսման լարներին, որոնք կատարեալ հայրենասէրներ են:

Ահա՛ թէ ինչո՞ւ համար, թէ՛ Դերմանիայում և թէ՛ Ֆրանսիայում, Կուսակցութեան պարլամենտական սպայակոյտի միջազգայնականութիւնը ո՛չ միտ է, ո՛չ էլ ձուկ, — այսինքն անորոշ մի միտք:

Եթէ սօցիալիստ Կուսակցութիւնը՝ ամէն բանից առաջ՝ ընտրական, բարենորոգչական, ապագան և իտէալը, ամէն ինչ զոհող մի Կուսակցութիւն է ընտրական շահերի համար, — թող պարզ կերպով ասի, այն ժամանակ, թող խոստովանի՝ որ ինքը հայրենասէր է. և ի հարկին թող ուրանայ այն խառնածին, անհարազատ սիջազգայնականութիւնը, որ ինքը մինչև ցարդ ցուցադրել է:

Իսկ եթէ, Կուսակցութիւնը՝ իր խորին զանգուածների մէջ՝ յեղափոխական Կուսակցութիւն է մնացել — ինչպէս որ լուրջ պատճառներ կան հաւատալու —, թող նա առաջին բարեպաշտն առիթից օգտուի և բռնի ոյժով, ու կարճ ճանապարհով, իրականացնի սօցիալիզմը՝ զէք նշույսական անստագործական քողոր կեդրոններում. թող նա բացէ ի բաց պատրաստուի ընկերային Յեղափոխութեամբ պատասխանելու՝ յառաջիկայ զօրաշարժի հրամանին:

ԳԻՒՍՏԱԻ ՀԵՐՎԷ (1)

1) Այս մի քանի էջերի մէջ հազիւ կարողացայ համառօտ և հարեանցի կերպով բացատրել իօնի սօցիալիստ դաշնակցութեան հակահայրենասիրական գաղափարը և ապստամբական տակտիկան, ո՛վ էլ որ լինի յարձակողը:

Նորերս լոյս տեսնող՝ «Ներսիս Հայրենիքը» գրքիս մէջ, ես այդ թէզը ընդլայնել, ընդարձակել եմ, որ բնաւ անիլիստական չէ՝ ինչպէս որ ոմանք կարծում են:



Ը.

## Գ. ՊԼԵԽԱՆՈՎ

ՌՈՒՍ Ս. Դ. Բ. ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻԻՆՅՑ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄ

Սիրելի ընկերներ,

Այսօր, միայն, ազատ ժամանակ ունեցող պատասխանելու ձեր հարցերին՝ Թէ՛ և մի քիչ ուշ. — բայց լաւ է անազան, քան երբէք:

Ձեր հարցերը հետեւեալ կերպով են բանաձևուած.

Ա. — Ի՞նչ էք մտածում Կոմունիստական Մանիֆեստի այն հատուածի մասին, որի մէջ ասուած է թէ՛ գործաւորները հայրենիք չունին:

Բ. — Միջազգայնականութիւնը ի՞նչ գործնական դիրք, պրօպագանտայի ի՞նչ ձև է պատուիրում սօցիալիստներին՝ ընդդէմ միլիտարիզմի, «գաղութականութեան», նրանց պատճառների և տնտեսական անդրադարձութիւնների:

Գ. — Սօցիալիստները ի՞նչ դեր պիտի խաղան Միջազգային յարաբերութիւնների (մաքսագներ, գործաւորական եւայլն) մէջ:

Դ. — Սօցիալիստական պարտականութիւնը ի՞նչ է պատերազմի ժամանակ:

Սկսում եմ, ինչպէս որ հարկ է, սկզբից:

Ոմանք կարծում են, որ Կոմունիստական Մանիֆեստի ձեր մատնանշած տողերովը՝ Մարքսը և Էնգէլսը ո՛չ թէ իրենց իսկական հայեացքն են արտայայտում սօցիալիզմի և հայրենասիրութեան նկատմամբ, այլ իրենց սրտմտութիւնը՝ կապիտալիստական Ընկերութեան մէջ գտնուող գործաւորներին ծանր վիճակի մասին:

Հերվէի հետ ունեցած իր հակաճառութեան մէջ՝ Ժօրէսը այդ տողերը համարում է «Մտքի յոռետեսական սլացք, որ մասամբ միայն — ինկատի առէք, լուսամբ միայն — բացատրւում է ա՛յն ժամանակուայ պարագաներովը, երբ Մարքսը և Էնգէլսը գրում էին Կոմունիստական Մանիֆեստը. երբ տնտեսական տագնապը իր բարձրագոյն կէտին էր հասել և գործաւորները զուրկ էին մարդկային տարրական իրաւունքներից»: Համարեա՛ թէ այդ միևնոյն կարծիքն է յայտնում և՛ Բերնշտայնը:

Բերնշտայնի խօսքերով, մեզ շահագրգռող «թէզը» կարող է «արդարանալ» նրանով, որ ա՛յն բոլորին, երբ Մարքսը և Էնգէլսը գրում էին իրենց նշանաւոր Մանիֆեստը, «Գործաւորները ամէն տեղ գրկուած էին խօսքի իրաւունքից, — այսինքն երկրի վարչութեանը մասնակցելուց»:

Ես չեմ կարող համաձայնել ո՛չ Ժօրէսի, ո՛չ էլ Բերնշտայնի հետ:

Եթէ նրանց ասածը ուղիղ է, դրանից պիտի հետևի՝ որ այժմ, երբ յառաջող է կապիտալիստական երկրների պրօլետարիատը արդէն ունի մեծ մասը ա՛յն քաղաքական լիաւորներին, որից նա զուրկ էր 1848-ի յեղափոխական շարժման նախորդներին. այժմ՝ երբ մինչև անգամ ռուս պրօլետարիատը հեռու չէ քաղաքացու իրաւունքները նոսճելուց, — դա կը նշանակի, ասում եմ, որ սօցիալիստական միջազգայնականի սահմանները աւելի՛ պէտք է սեղմուին յօգուտ հայրենասիրութեան: Բայց դա կը նշանակի՝ նշույլ, որ միջազգայնականութիւնը ա՛յնքան աւելի յետ պիտի ընկրկի, որ քան որ միջազգայնական կոռուսկուրեան յաջողութիւնը հ՛ի աւելի ուժեղանայ:

Ես կարծում եմ, որ իրերը ճիշդ հակառակ ուղղութեամբ են ընթանում. — այն՝ որ միջազգայնականութիւնը հետզհետէ, աւելի՛ խորը կերպով է թափանցել պրօլետարիատի սրտի մէջ՝ քան Կոմունիստական Մանիֆեստի լոյս տեսնելու ժամանակը: Կարծում եմ, որ Մարքսի և Էնգէլսի «թէզը» կարիք ունի ո՛չ թէ արդարացման, այլ միայն՝ ուղիղ մեկնաբանութեան:

«Գործաւորները հայրենիք չունին» բառերը գրուել են



որպէս պատասխան բուրժուազիայի այն տեսարաններին, որոնք կոմպունիստներին մեղադրում էին՝ թէ նրանք ուզում են հայրենիքը ջնջել»։

Պարզ է, որ Մանիֆէստի հեղինակները խօսքը այն հայրենիքի մասին է, որի նշանակութիւնը կատարելապէս որոշուած, սահմանուած էր, — այսինքն ճիշտ այն մտքով, որ նրան տալիս էին բուրժուազական հրապարակասունները։

Մանիֆէստը յայտարարեց, որ գործաւորները այդպիսի հայրենիք չունին։

Դա ճիշտ էր ա՛յն ժամանակը. դա ճիշտ է և՛ հիմա, երբ յառաջագէմ երկրների գործաւորները՝ աւելի նուազ կամ լայն քաղաքական որոշ իրաւունքներ են վայելում. դա ճիշդ էր լինի, նոյնպէս, և՛ յետագային, ինչքան էլ որ մեծ լինին գործաւոր գաղափարգի ապագայ քաղաքական նուաճումները։

Յիշեցէք ժօրէսի խօսքերը, էլիգէ Մօնմարտում, երջանիկ ապագայի ա՛յն հայրենասիրութեան մասին, երբ կոմպունիզմը կը յաղթանակի։ Այն ժամանակ հայրենիքները գոյութիւն կունենան լոկ՝ որպէս ինքնատիպ հանճարների կուտակում, որպէս տարբեր ժողովրդների ինքնայատուկ գծերի ներկայացուցիչ։ Ինչպէս որ անհասները իրենց բնութիւնը գծերով, իրենց բազմաթիւութիւններով ինչ որ ունենան, չեն տարբազարդուիլ սօցիալիստական կազմակերպութեան մէջ. այլ նրա մէջ՝ աւելի ներգայնակ ձևերի տակ՝ էլ աւելի լաւ կը պահեն, կամրապնդեն իրենց բնաւորութեան ինքնատիպութիւնը. նոյնպէս էլ պատմական ա՛յն անհասականութիւնները, որոնք կոչւում են հայրենիք. — անգղիական հայրենիք, գերմանական, ֆրանսիական հայրենիք, իտալական հայրենիք, ռուսական հայրենիք, վաղը՝ չինական հայրենիք երբ դեղին մարդկութիւնը կազատագրուի սպիտակների հարստի ստիճի խնամակալութիւնից... այդ բոլոր հայրենիքները՝ պատմութեան ձևակերպած իրենց բարոյական անհատականութեամբ, իրենց լեզուով, իրենց գրականութեամբ, կեանքի մասին ունեցած իրենց հասկացողութեամբ, իրենց յիշատակներով, իրենց յոյսերի մասնաւոր ձևով, իրենց կրքերի, իրենց հոգեւոյ, իրենց հանճարի մասնայատուկ ճարտարութիւններով, հոլովումներով, — այդ բոլոր անհատական

նութիւնները կը կազմեն վաղուան կոմպունիստական մեծ մարդկութիւնը»։

Ժօրէսի ճառից մէջ բերուած այդ խօսքերը անթերի չեն՝ տրամաբանութեան տեսակէտից, — անհասը կենսաբանական խնայարգութիւն (կասեգորիա) է, իսկ ազգութիւնը՝ պատմական խնայարգութիւն։ Դրա համար էլ՝ այդ երկու հասկացողութիւնները անհամաչափ են։ Բայց այ՛, ասացինք անցողակի կերպով։ Ինչ համար գլխաւորն այն է, որ ապագայի հայրենիքը այնպէս, ինչպէս որ նկարագրել է ժօրէսը, բոլորովին նման չէ ա՛յն հայրենիքին, որի մասին խօսում էին բուրժուազական տեսաբանները և որոնց էլ Մարքսը ու էնգէլսը պատասխանել են

«Ապագայի բազմաթիւ և բազմերանգ հայրենիքները ուրիշ բան չեն՝ ժօրէսի նկարագրութեան մէջ, եթէ ոչ՝ ազգութիւններ։ Եթէ կոմպունիստական Մանիֆէստի հեղինակները ասէին թէ գործաւորները ո՛չ մի ազգութեան չեն պատկանում, — դա ո՛չ միայն ճառքի սլոգան էր լինէր, այլ պարզապէս ծիծաղելի մի անհեթեթութիւն։ Արդ, նրանք չեն զարգէնում ծիծաղելի մի անհեթեթութիւն։ Արդ, նրանք չեն խօսում ազգութիւնների, այլ հայրենիքի մասին։ Եւ աւելին կայ. ո՛չ թէ այն հայրենիքի մասին, որպիսին գոյութիւն կայ. ո՛չ թէ այն հայրենիքի, որ այժմ գոյութիւն ունի՝ բերում, այլ ա՛յն հայրենիքի, որ այժմ գոյութիւն ունի՝ կապիտալիստական արտադրութեան եղանակի՝ հարստահարիչ տիրապետութեան ժամանակում։

Իսկ այս վերջին տեսակի հայրենիքը, ինչպէս ասացի, չափ քիչ նմանող գծեր ունի ապագայի այն հայրենիքի հետ, որի մասին խօսում է ժօրէսը՝ իրեն յատուկ ճարտասանութեամբ։ Որո՞նք են այդ հայրենիքի գլխաւոր գծերը։ Ժօրէսը ինքը դրանք մատնանշել է. «Նրա խօսքերով՝ «Ընկերային վերջնական և կատարեալ Յեղափոխութիւնից յետոյ», հայրենիքները այլևս կը դադարեն գոյութիւն ունենալուց՝ որպէս անվատանութեան, տարամերժութեան, փոխադարձ ճնշումի ոյժեր»։

Ուրեմն, ժօրէսն ինքը բնորոշում է, որ այսօր, կապիտալիստական ընթացիկ ներքոյ, հայրենիքները ո՛չ միայն զատազան ժողովրդների ինքնատիպ հանճարների սրտայայտու-



թիւնը չեն, այլ ազգայնական, տարամերժ ժողովրդների միջև եղած փոխադարձ անվստահութեան, և մի ժողովրդի միւսին ճշելու արտայայտութիւնը: Ինչ պիտի լինի գիտա կից պոլեմտարիատի դիրքը բուրժուազական այդ հայրենիքի հանդէպ: Կոմսոնիստական Մանիֆէստը ասում է, որ գիտակեց պրօլետարիատը չունի այդպիսի Հայրենիք: Մի՞թէ դա ճշմարիտ չէ:

Մարքսի և Էնգէլսի պատասխանը ո՛չ միայն յոռետես մտքի սւղացք չէ, ո՛չ միայն նա պէտք չունի արդարացումի, այլ սօցիալիստ պրօլետարիատի միջազգային քաղաքական նութեան հիմունքը պիտի կազմի:

Ինչպէս յայտնի է, Մարքսը ասել է որ Գերմանական պրօլետարիատը ժառանգորդն է գերմանական դասական փիլիսոփայութեան: Ժօրէսը բացականչում է. «Ո՛չ, Կանտը՝ իր ինքնավարութեամբ, Միխտէն՝ իր բացարձակ գիտակցութեան հպարտութեամբ, Հեգէլը՝ իր յեղափոխական տիպիկատիկայով կարող էին հասկացուիլ, ներկայացուիլ, մարմնանալ միմիայն յեղափոխական պրօլետարիատի ա՛յն դասակարգի կողմից որ ուղղում է ազատել բոլոր կամքերը, թոյլ չը տալ, որ բնութեան մէջ ուրիշ օրէնք գոյութիւն ունենայ, բացի գիտակցութեան օրէնքից և մարդկային անսահման Յեղափոխութեան նոր հորիզոններ բանալ՝ յաւանական դիալեկտիկայի առաջ»:

Ես չեմ հասկանում ինչ ասել է՝ բնութեան մէջ թոյլ տալ, որ միայն գիտակցութեան օրէնքը գոյութիւն ունենայ, և վախենում եմ, որ պրօլետարիատը երբէք չը յաջողի վրձաբեր ալիք գծաւարայոյժ խնդիրը: Բայց դա արգելք չէ, որ չը ծափահարեմ ժօրէսի գեղեցիկ ճարտասանութիւնը: Սակայն չեմ հասկանում թէ ինչո՞վ ժօրէսի ճարտասանութեան այդ մասը կարող է խախտել Մարքսի և Էնգէլսի ա՛յն միտքը, թէ պրօլետարիատը հայրենիք չունի:

Ժօրէսը շարունակում է. «Արա մէջն է բովանդակում պատասխանը նրանց, որոնք ասում են գործաւոր դասակարգին՝ թէ նա կարող է չը շահագրգռուիլ հայրենիքի և սգալի՛ր ամբողջ աւանդութեան վերաբերեալ իրերով»:

Դա նորից ինձ զարմացնում է:

Մարքսը և Էնգէլսը երբէք չեն ասել գործաւորներին, որ նրանք կարող են չը շահագրգռուիլ հայրենիքի վերաբերեալ իրերով: Բայց հայրենիքի վերաբերեալ իրերով շահագրգռուիլ՝ չի նշանակում հայրենասէր լինել: Քաղաքական իշխանութիւն, դասակարգային դիկտատորութիւն, սեկսկած, «իրեր» են, որ յարաբերութիւն ունին «հայրենիք» հետ. և սակայն, Մանիֆէստի հեղինակները միշտ մատնացոյց են արել գործաւորներին՝ այդ «իրեր»ի անհրաժեշտութիւնը:

Եւ ժօրէսը սխալ է կարծում՝ թէ բացասական դիրք դէպի հայրենիքի գաղափարը՝ համազօր է անտարբերութեան դէպի ժողովրդի մտաւոր և բարոյական վաստակները:

Մշակոյթի յառաջադիմութիւնն է միայն, որ մարդկանց հասկացնել է տալիս՝ այդ գաղափարի անձկութիւնը:

Ժօրէսը մեղադրում է Հերվէին՝ սփեւստութեան մէջ: Այս դէպքում՝ Հերվէն իրաւունք ունի նոյն այդ մեղադրանքը նրան վերագործնելու և ասելու, որ նրա հանած եզրակացութիւնը յիշեցնում է բուրժուա տնտեսագէտների ա՛յն սփեւստութիւնը, որով նրանք պնդում են՝ թէ կապիտալի ջնջումը համազօր է արտադրութեան միջոցների ջնջմանը: Կապիտալը տարբեր է. իսկ արտադրութեան միջոցները՝ բուրժուական տարբեր: Նոյնպէս էլ՝ տարբեր է հայրենիքը, տարբեր մի ժողովրդի մշակոյթը, նրա քաղաքակրթութիւնը:

Այն իրողութիւնը, որ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը զուրկ է արտադրութեան միջոցներից, — դա ևս պիտալի գոյութեան անհրաժեշտ պայմանն է: Դրանման էլ, դէպի «իր հայրենիքը» ունեցած սիրոյ հոգեբանական սնունդը հրաժեշտ պայմանը բացառութիւն է դէպի «ուրիշ հայրենիք» ներքի իրաւունքը, ինչ որ ժօրէսը անուանում է սուրամերժութիւն:

Եւ եթէ յեղափոխական պրօլետարիատը պէտք է ազատազրի «բոլոր կամքերը», նա հէնց դրանով՝ հայրենիքի այդ գաղափարից բարձր պիտի կանգնի:

Ժօրէսը խօսում է հաշկաւոր հրապարակախօս Արման կարբէլի մասին, որ քաջութիւն ունեցաւ իր սեպկական երկրի դէմ գործելու, երբ նա անարդար պատերազմ յայտարարեց իսպանիայի դէմ: Դրան պիտի աւելացնել և՛ ա՛յն, որ



1863-ի Լեհական Յեղափոխութեան ժամանակ՝ մի քանի Ռուս սպաներ, չուզելով դահիճը դառնալ այն ժողովրդի, որ կռոււմ էր իր ազատութեան համար, անցան «ապստամբներ» կոչմբ:

Ես դա համարում եմ հերոսական քաջագործութիւն, որ պատիւ է բերում ֆրանսիական և ռուսական ժողովրդներին:

Բայց հայրենասիրութեան ճեպակէտով՝ դա ամօքալից յանցանք է, — ազգային դաւաճանութիւն:

Հակառակ իր բոլոր ճարտասանութեանը, Ժորժը հազիւ թէ յաջողում է իր «թէզը» ընդունելի դարձնել, մի գաղափար միւսի տեղը դնելով. — հայրենիքի գաղափարի փոխարէն՝ ինչպէս որ է, նա զննում է այն հայրենիքի գաղափարը, որ պիտի լինի. — իր կարծիքով. — և ինչ որ պիտի լինի: Այդ միջոցով կարելի է՝ ամէն բան բացարձակ կերպով ցոյց տալ: Բայց դա չի նպաստել խնդրի պարզաբանութեանը:

Կրկնում եմ, — հայրենիքը պատմական կատեգորիա է, այսինքն իր էութեամբ բնայրջական, անցողական է:

Ինչպէս որ ցեղի գաղափարը տեղի տուեց հայրենիքի գաղափարի առաջ, որ նախ սահմանափակում էր միայն քաղաք-հասարակութեան (սիտէի) գաղափարով և յետոյ ընդլայնուեց մինչև ներկայ ազգութիւնների սահմանները. — նոյնպէս էլ հայրենիքի գաղափարը պէտք է տեղի տայ մարդկութեան անհամեմատ աւելի լայն գաղափարի առաջ: Ճնշման և զարգացման ոյժը, որ պատճառ դարձաւ հայրենասիրական գաղափարի զարգանալուն, ձեւակերպուելուն, — այդ միևնոյն ոյժն էլ մեզ երաշխաւորում է, որ հայրենիքի գաղափարը կընդարձակուի մինչև մարդկութեան գաղափարը:

Հայրենիքի գաղափարը՝ միևնոյն երկրի բնակիչներին՝ համերաշխական ամենասերտ կապերով միացնում է ամէն բանի մէջ, ինչ որ վերաբերում է այդ երկրի շահերին, որքան որ դրանք հակառակ են ուրիշ երկրների շահերին: Մեր վիպասան Տուրգենևի յայտնի հերոսներից մէկը՝ Բուլղար Ինսարովը ասում է. «Բուլղարիայի մէջ՝ յետին զիւղացին, յետին մուրացկանը և ես, մենք ամէնքս էլ՝ միևնոյն բանն ենք ցանկանում: Բոլորս էլ միևնոյն նպատակին ենք ձգտում», — այսինքն բուլղարական անկախութեանը: Այդպիսի

մի նպատակ արժանի է համակրութեան ա՛յն դասակարգի կողմից, որ ձգտում է ձգտող կամքերը ազատագրել: Բայց աչքից բաց չը պիտի թողնել այն երևոյթն էլ, որ թուրք հայրենասէրները իրենց կողմից, դասակարգային ամէն խնդրութիւն մոռանալով՝ նրանք էլ ձգտում են ճիշդ դրան հակադիր նպատակի, որ է՝ քրիստոնէական գերիշխանութեան պահպանութեանը Բուլղարիայի մէջ: Կրեաէի 1897-ի ապստամբութեան ժամանակ, «Երիտասարդ Թուրքեր»ը, որ այդ ատեն ժընեւում հրատարակում էին «Օսմանլի»ն, գրում էին, որ Կրեաէն պատկանում էր Թուրքիային՝ աշխարհակալութեան իրաւունքով: Դա հայրենասիրական մի դատողութիւն էր՝ իր յստակ և ոչ-սոփիստական ձեւի մէջ:

Բայց այդ յստակ հարեւախրութիւնը հնարաւոր է երկու պայմանով միայն: Առաջին՝ նա ընդունում է դասակարգերի անզարգացած մի դրութիւն, և երկրորդ՝ երկու կամ մի քանի հարեւան «հայրենիքներ»ի ճնշուած դասակարգերի դրութեան մէջ՝ մեծ, ակներև նմանութեան բացակայութիւն:

Այնտեղ՝ ուր դասակարգային կոիւր ստանում է յեղափոխական սուր բնաւորութիւն, խախտելով նախկին սերունդներից ժառանգաբար մնացած բոլոր հին հասկացողութիւնները և ուր ճնշուած դասակարգը զիւրութեամբ է համոզւում թէ ո՛ր աստիճան իր շահերը նման են հարեւան օտար երկրների ճնշուող դասակարգերի շահերին և հակադիր իր սեպական երկրի մէջ տիրող դասակարգի շահերին, — այն տեղ հայրենիքի գաղափարը զգալի կերպով կորցնում է իր ոյժը: Դրա օրինակը մեզ ցոյց է տուել հին Յունաստանը, իր քաղաքացիների ստորին դասակարգերը իրենց շատ աւուր քաղաքացիների ստորին դասակարգերի հետ: Պէլոպոնէսի պատերազմը ո՛չ այլ ինչ էր, եթէ ոչ՝ պատերազմ ազնուականութեան և աւանդաւորութեան միջև: Մի կոիւ՝ որով ճարակուեցաւ այն ժամանակուայ ամբողջ յունական աշխարհը, և հայրենիքների սահմաններից դուրս եկաւ. — պատմական այդ իրողութիւնը մեր ասածներին ամենալաւ օրինակ կարող



է ծառայել :

Նորագոյն ժամանակներումն էլ զրա նման մի բան ենք տեսնում, թէև նուազ չափով, միջազգային մի քանի ընդհարումների մէջ, որոնց պատճառ էր տուել 18րդ դարու ծրանսրական Մեծ Յեղափոխութիւնը :

Ով որ ուզում է լրջօրէն ուսումնասիրել Հայրենիքի գաղափարի պատմական զարգացումը՝ անհրաժեշտ է որ իր ուշադրութիւնը դարձնի այդ իրողութիւնների վրայ :

Բայց այդ իրողութիւնները ինչքան էլ որ կարևոր երևան, նրանք չափ աննշան են ա՛յն իրողութիւնների հետ համեմատելով, որ մենք տեսնում ենք պրօլետարական ազատագրական շարժման մէջ :

Կապիտալիզմը, իր սեպական ընաւորութեամբ՝ պիտի ջանայ դուրս գալ ամէն «հայրենիքների» սահմաններից և թափանցի քաղաքակիրթ աշխարհի թուր երկրների մէջ :

Կապիտալիզմը, ուրեմն, այդ միևնոյն հայրենիքի գաղափարի ամենաուժեղ տարրալուծողը և խախտողն է. ա՛յն հայրենիքի գաղափարի, որ — իր նորագոյն ձևի մէջ — ինքն էր երբեմն կեանքի կանչել :

Չը նայելով տեղական բազմաթիւ և յաճախ շատ կարևոր տարբերութիւններին՝ շահագործողների և շահագործողների միջև եղած յարաբերութիւնները՝ իրենց էութեան մէջ՝ նո՛յն են, կապիտալիստական երկրի ամէն գիտակից պրօլետար՝ իրեն շատ աւելի մօտիկ է զգում կապիտալիստական ուրիշ երկրների պրօլետարի հետ, քան իր հայրենակից կապիտալիստի հետ :

Եւ որովհետեւ, համաշխարհային տնտեսական պայմաններով՝ սօցիալիստ յեղափոխութիւնը, որ վերջ պիտի տայ կապիտալիստական տիրապետութեանը՝ պէտք է միջազգային լինի. ուստի, գիտակից գործաւորների մտքի մէջ, հայրենիքի գաղափարը՝ որ ընկերութեան բոլոր դասակարգերին միացնում է մի համերաշխ և լիակատար «տարամբժ» ամբողջութեան մէջ՝ այդ գաղափարը անհրաժեշտօրէն տեղի պիտի տայ յեղափոխական մարդկութեան է՛լ աւելի լայն համերաշխական գաղափարի առաջ, — այսինքն՝ «բոլոր երկրների պրօլետարներին» :

Իւ ինչքան որ ժամանակակից գործաւորական շարժման զորաւոր գետը լայնանում է, այնքան էլ հայրենասիրութեան հոգեբանութիւնը յետս է ընկրկում միջազգայնականութեան հոգեբանութեան առաջ :

Մինչ այն ժամանակ, որ դասակարգերի կռիւը Յունաստանի մէջ չէր խախտել քաղաքահասարակութեան (սիտէի) հայրենասիրութիւնը, Աթինացի հայրենասէրը օտար երկրացի էր համարում Սպարտացի քաղաքացիներին, որոնց կարելի էր մի կամ միւս եղանակով շահագործել. օրինակ՝ վաճառականական կամ քաղաքական ժամանակաւոր դաշնակցութիւնների միջոցով, — սպարտացիները շահերը չէին կարող նրան սիրելի լինել : Մեր օրերի մի աթինացի, ժամանակակից հայրենասիրութեան հայեցակէտից նայելով, Լակեոնոնիան համարում է մի նահանգը իր հայրենիքի, որի շահերը նրան թանկագին են՝ իր անբողջ տարածութեանը մէջ : Դա նշանակում է, որ ներկայի յոյն հայրենասէրը օտար է այն տեսակ «տարամբժ» հայրենասիրութեան, որ յատուկ էր քաղաքահասարակութիւնների հայրենասէրին :

Բայց դա բնաւ չի նշանակում, որ նա թշնամի կամ պարզապէս անտարբեր լինի դէպի իր ծննդավայր քաղաքի «իւրերը» :

Ո՛չ. իր հայրենասիրութիւնը կատարելապէս հաշտելի է՝ եռանդուն, անխոնջ անձնուիրութեան, ինչ որ վերաբերում է իր ծննդավայր քաղաքի «իրերին» :

Բայց, ինչ որ թույլ չի տալիս իր հայրենասիրութիւնը, — դա հայրենիքի միւս նահանգների շահագործումն է՝ յօգուտ իր այդ ծննդավայր քաղաքի :

Այդ մարդու համար՝ *salus patriae — suprema lex* է. (փրկութիւն հայրենիքի՝ վեհագոյն օրէնք) :

Նոյնպէս էլ, ժամանակակից սօցիալիստական միջազգայնականութիւնը բոլորովին հաշտելի է ծննդավայր երկրի բարօրութեան համար ամենաեռանդուն ջանքի հետ. բայց նա բոլորովին անհաշտելի է՝ օգնելու ծննդավայր երկրին ա՛յն բանի մէջ, ուր այս վերջինիս շահերը հակառակ են զընդուն՝ յեղափոխական մարդկութեան շահերին, այսինքն՝ ժաւնականակից միջազգային գործաւորական շարժմանը : Նորագոյն



սօցիալիստներ ի համար՝ Յեղափոխութեան փրկութիւնը այսօր ինքն յառաջդիմութեան *salus revolutiae, suprema lex* (փրկութիւն յեղափոխութեան՝ վեհագոյն օրէնք) է, — դա ներկայացնում է այն բարձրագոյն կէտը, որ իր համոզումներին հաւատարիմ մնացող մի սօցիալիստ՝ պէտք է միշտ իր աչքի առաջն ունենայ, երբ քննութեան է առնում միջազգային յարաբերութիւնները, լինի վաճառականական քաղաքականութեան տեսակէտով ընդհանրապէս, «գաղութականութեան» տեսակէտով՝ մասնաւորապէս:

Ես շատ լաւ հասկանում եմ, որ ասածս մի ընդհանուր բանաձև է և իր մէջ չի բովանդակում պատրաստի պատասխան՝ իւրաքանչիւր մասնաւոր պարագայի համար: Բայց, ինչպէս որ շատ լաւ դիտել է Մարքսը, մեր տեսութիւնը ամէն դուռ բացող բանալի չէ, որ մեզ այլևս անհրաժեշտ չը դարձնէր իւրաքանչիւր երևոյթ մասնաւորապէս քննելու հոգացողութիւնից:

Ժամանակակից սօցիալիստական թէօրիսն Յեղափոխութեան ալգեբրան է: Նա կարող է միայն ալգեբրայական բանաձև տալ: Գործնական կեանքի մէջ՝ այդ բանաձևերից ղեկավարուելու համար՝ պէտք է ալգեբրայական նշանները փոխարինել թուաբանական որոշեալ քանակութիւններով: Եւ դրա համար էլ անհրաժեշտ է ճանաչել իւրաքանչիւր տուեալ պարագայի բոլոր մասնակի պայմանները: Այդ գործածութեամբ է միայն, որ բանաձևերը կը պահեն իրենց կենդանի, տիպիկական բնաւորութիւնը և չեն ձգափոխուիլ, չեն դառնալ մեռած վարդապետութիւններ (դոգմայ):

Մեռած վարդապետութեան բնաւորութիւնը, օրինակ, մենք գտնում ենք այն գաղափարի մէջ, որ ասում է թէ՝ սօցիալիստները պէտք է հակառակ լինեն ամեն պատերազմի:

Մեր Չերնիշևսկին արդէն ասում էր, որ այդ տեսակ բացարձակ որոշումները անընդունելի են և Մարաթոնի ճակատամարտը նա համարում էր ամենաբարեբար անցըր՝ մարդկութեան պատմութեան համար:

Ոչ նուազ մեռած վարդապետական է այն կարծիքը՝ թէ մենք սօցիալիստներս, պիտի համակրենք միայն պաշտպանու-

ղական պաշտպաններին: Այդ կարծիքը ճիշտ է միայն *sum cuique*-ի (իւրաքանչիւրին՝ իրենը) տեսակէտից: Միջազգային պրօլետարիատը, հաւատարիմ իր յեղափոխական հայեցակէտին, պէտք է ամեն տեսակի պատերազմ ընդունի՝ պաշտպանողական կամ աշխարհակալական — որ կոչի սօցիալիստական Յեղափոխութեան ճանապարհից հեռացնել ամէն տեսակի խոչընդոտներ:

Բայց, որովհետեւ բացայայտ է, որ այսօր՝ քաղաքակրթ երկրների միջև եղած պատերազմները՝ շատ տեսակէտով՝ փնտրում են գործաւոր դասակարգի ազատագրական շարժմանը. ուստի այդ դասակարգի գիտակից տարրերը՝ խաղաղութեան վճռական և հաստատուն կողմակիցներն են: (\*)

Իսկ այն հարցը՝ թէ ինչպէս պիտի վարուին իրարու հետ պատերազմի մտնող երկրների պրօլետարիատները. — դրա մասին, նոյնպէս, չի կարելի անփոփոխ, միակ և վերջնական պատասխան տալ:

Այդ հարցը դրուեցաւ, ինչպէս յայտնի է, Յիւրիխի Միջազգային համագումարի առաջ, 1893-ին:

Դոմէնիա Նիլէօ Վենետիս առաջարկ բերաւ, այն ժանանակ, ինչպէս որ հիմա Հերվէն է ասում, թէ՝ զինուորական գործադուլը պատասխան պիտի լինի՝ պատերազմի յայտարարութեանը:

Որպէս տեղեկութիւն պատերազմական Յանձնախմբի, ես վճռականապէս հակառակեցայ այդ առաջարկութեան և ինձ եռանդաւոր կերպով պաշտպանեցին բոլոր երկրների Մարքսիստները՝ ի մեծ դժգոհութիւն կէս-անիշխանական, կէս-բուրժուազական տարրերի, որոնք բաւականին մեծ թուով ներկայ էին այդ համագումարին:

Այսօր էլ, կարծում եմ, զինուորական գործադուլի գա-

(\*) Ակնբերեւ է, նոյնպէս, որ բուրժուազական հայրենիքների գաղութային քաղաքականութիւնը՝ միջազգային պրօլետարիատին տուել է բաւականաչափ տուեալներ՝ իր բացարձակ գաղափարութեանը համար: Այդ առթիւ, բաւական է յիշել Միջազգային համագումարների վերջին որոշումները:



զափարը չ'սո անյաջող գաղափար է:

Երևակայեցէք, որ պատերազմ է սկսուում երկու այն-պիսի երկրների միջև, որոնցից մէկի միջև գոյութիւն ունի գործաւորական ուժեղ կուսակցութիւն. իսկ միւսի մէջ — շատ յետամնացի — գործաւորական շարժումը հազիւ թէ սկսուած է:

Խնչ դուրս կը գայ, եթէ սօցիալիստները կոչ անեն զին-ուորակայն գործադուլի համար և պրօլետարները խուլ չը մնան դէպի այդ կոչը: Դիւրին է նախատեսելը: Յառաջա-դէմ երկերը կը պարտուի: Յետամնաց պետութիւնը կը յաղ-թանակի: Օգտակար է դա միջազգային սօցիալիստական շարժման համար: Ո՛չ. շատ միասակար: Ուրեմն, այդ դէպ-քում, զինուորական գործադուլը միասակար կը լինի:

Բայց Հերվէն կարծում է, որ զինուորական գործադուլը միտք ունի այնպիսի մի պատերազմում, երբ դէմ դէմի եկող երկու սրկրները ունենան գործաւորական ուժեղ շարժում: Այդ դէպքում՝ զինուորական գործադուլը իմ ցոյց տուած անյարմարութիւնը չի ներկայացնել: Բայց այն ժամանակ էլ՝ նրա դէմ մի ուրիշ փաստ է ցցուում:

Հերվէն ինքն էլ ընդունում է, որ զինուորական գոր-ծադուլը միտք ունի՝ որպէս գործաւորական Յեղափոխու-թեան առաջին քայլ: Եւ դա ճշմարիտ է: Բայց յեղափոխա-կան պրօլետարիատը, անկախ պատերազմից, միշտ պէտք է ձգտի Յեղափոխութեան: Ինչո՞ւ համար հիմա չի անում: Հաւանականօրէն՝ որովհետեւ այժմ շատ ուժեղ չէ: Եթէ այդպէս է, ապա ամբողջ վիճաբանութիւնը յանգում է այն կէտին, թէ արդեօք պատերազմի յայտարարութիւնը կը տա՞յ պրօլետարիատին անհրաժեշտ ոյժ Յեղափոխութեան համար:

Պարզ է, որ այդ վերջին հարցին չի կարելի պատասխա-նել՝ կանխապէս սահմանուած մի այնպիսի բանաձևով, որ օգտակար լինէր բոլոր երկրների և բոլոր ժամանակների համար: Եւ դրա համար էլ՝ զինուորական գործադուլը չի կարող ընդունուիլ միջազգային պրօլետարիատի կողմից, որպէս գործնական ընդհանուր դեղագիր: Ու, շատ որոշ է, դա մի դեղագիր է, որ միջազգային պրօլետարիատը չի կա-րող սեպհականացնել:

Եթէ պատերազմի յայտարարութեան ընկերն՝ տուեալ մի երկրի կազմակերպուած գործաւորական կուսակցութիւնը կարծում է՝ թէ ընկերային Յեղափոխութեան ժամը հնչել է, այն ժամանակ իր նպատակին հասնելու ուրիշ միջոցներից մէկն էլ կարող է անել և՛ զինուորական գործադուլը:

Բայց այն ժամանակ՝ այդպիսի մի գործադուլի «թէզը» պիտի ենթարկուի՝ ամենախիստ քննութեան, ուշադրութեան առնուին ընկեր և տեղի բոլոր պայմանները: Օտարոտի պիտի լինէր՝ այդ հարցը կանխապէս կտրել, վերջացնելը:

Այդ խնդրի նկատմամբ՝ իմ կարծիքներս ամփոփելու համար՝ պիտի ասեմ, որ Բրիւքսէլի համագումարի որոշումը դեռ պահել է իր խորին նշանակաւթիւնը: Միլիտարիզմի դէմ կռուելու ամենալաւ միջոցը պէտք է փնտռել ո՛չ թէ գործաւոր դասակարգի հնարաւոր — կամ այդպէս ենթադրե-ուած — գործողութեան մէջ, այլ գործաւորական ազատարար շարժման յաջողութեան ամբողջութեան մէջ: Միլիտարիզմի դէմ մեր կռիւը չի կարող վերածուիլ մասնաշատուկ մի գործո-ղութեան, — դա մի ամբողջ պրօցեսուս (յառաջընթաց, զար-գացում) է:

Գործաւորական օրէնսդրութեան խնդրի մասին, կար-ծում եմ, կարելի է պատասխանել շատ կարճ կերպով: Մեզ-նից՝ Միջազգայնական սօցիալիստներից, ո՛չ ոք չի հակա-ռակում, որ այդ օրէնսդրութիւնը չը լինի միջազգայնական: Կասկածը հնարաւոր է դառնում այն ժամանակ, երբ հարցը վերաբերում է այն մրցումի մասին, որ յետամնաց երկրների նուազ պահանջկոտ պրօլետարները անում են, յառաջադէմ երկրների աւելի՝ պահանջկոտ պրօլետարների հետ, իրենց աշխատանքի ոյժը ծախելիս:

Մեր ընկերներից ոմանք խախտաւար օրէնսդրութեան միտքն են պաշտպանել այդ մասին: Ես այդ միտքը համա-րում եմ հակասող՝ միջազգային սօցիալիզմի սկզբունքներին: Իմ հաստատ համոզումն է, որ ցոյց տրուած մրցումի դէմ՝ կռուի ուրիշ մէթոտ մենք յանձն պիտի առնենք:

Յառաջադիմ երկրների յեղափոխական պրօլետարիատը պիտի ջանայ՝ յետամնաց երկրների իր մրցակիցների դասակարգային գիտակցութիւնն արթնցնել եւ նրանց կազմակերպել ընդհանուր



կռուի հաւստ՝ կապիտալիզմի դեմ: Բայց նա չի կարող — և պէտք է — պաշտպանուիլ մաքսային պաշտօնեաների օգնութեամբ:

Այս, ընկերներ, թէ ի՛նչ կարող եմ պատասխանել ձեր հարցերին:

Ներքեցէ՛ք, որ շատ երկար ժամանակ խլեցի ձեր ուշադրութիւնը:

Զեռ անձնուէր

Գ. ՊԼԵՃԱՆՈՎ

## ՅԱՒԵԼՈՒԱԾ

Այս մասով կարեւոր համարեցինք հետեւել անհրաժեշտ տեղեկութիւնները տալ՝ մտքերի աւելի մեծ չափով լուսաբանութեան համար:

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻֆԵՍՏ.— Պարիզի մէջ, 1836 ին, զանազան ազգերից բաղկացած սօցիալիստները, որ այն ժամանակ իրենց անուանում էին «կոմունիստներ», հիմնեցին միջազգային ծածուկ մի ընկերակցութիւն՝ «կոմունիստական Միութիւն» անունով, որ իր ճիւղաւորումները ունեցաւ բոլոր գլխաւոր երկրներում:

Բլանքի-Բարբէսի դատից յետոյ (1840) եղած հետապնդումներից խոյս տալու համար՝ «Միութեան» կեդրոնական վարչութիւնը Պարիզից Լոնտոն փոխադրուեց, ուր մնաց մինչև 1848-ը:

«Միութեան» կեդրոնական վարչութիւնը, 1846-ին, Կարլ Մարքսին և Էնգէլսին համոզեցին, որ այդ ժամանակ Բրիւքսէլ էին ապաստանել, «Միութեան» մէջ մտնել, և առաջարկեցին Կոստակցութեան համար մի ընդհանուր, հանդիսական յայտարարութիւն, մանիֆէստ խմբագրել: Մարքսը և Էնգէլսը այդ առաջարկը ընդունեցին, պատրաստեցին այդ Յայտարարութիւնը, Մանիֆէստը, որ 1847-ին, Կոստակցութեան Համագումարի կողմից պաշտօնապէս ընդունուեց:

Կոմունիստական Մանիֆէստը հրատարակուեց 1848-ի սկիզբները, Յեղափոխութիւնից առաջ:

Մանիֆէստը առաջին անգամ շատ մեծ իրաւանցում յառաջ էր բերեց, բայց յետոյ դարձաւ սօցիալիստների ճշմարտյն աւետարանը: Թէև նրա մի քանի դործնական առաջարկները հինցած են, բայց ղեկավարիչ, գլխաւոր դաշտարները մնում են «անմահ»: Նրա մէջն է, առաջին անգամ, գիտական սօցիալիզմը պարզ, յստակ, կորովի, և եռանդուն ոճով բացատրուած:



Կոմկոմիսսական Մանիֆեստը բաժանուած է չորս մասի.  
Ա.— Բուրժուա եւ պրօլետարներ, ընկերային բնաշրջման  
էվօլյուցիայի պատմութիւնը:

Բ.— Պրօլետարներ եւ Կոմկոմիսսներ. Կուսակցութեան  
գործնական ծրագրի եւ վարդապետութեանց արդարացումը:

Գ.— Սօցիալիստական եւ Կոմկոմիսսական գրականութեան  
թիւն. Սօցիալիստների վարդապետութեանց քննադատութեան  
թիւն. գերման, փոքր բուրժուաների, յետաշրջական սօցիալիզմ.  
պահպանողական եւ բուրժուական (բրուտոն) սօցիալիզմ.  
ֆեմինիստական — ուտօպիքական սօցիալիզմ եւ կոմմունիզմ  
(Օվէն, Ֆուրբէ, Կաբէ):

Դ.— Կոմկոմիսսների դիրքը զանազան ընդդիմադիր կուսակցութիւնների հանդէպ. Կուսակցութեան տակտիկան:

Եզրակացութիւնն է միջազգայնական եւ յեղափոխական. Կոմմունիստները աշխատում են որ բոլոր երկրների բանակավարական կուսակցութիւնները միանան: Նրանք չեն գիշտում իրենց զաղափարները եւ նպատակները ծածկելու: Նրանք բարձրաձայն յայտարարում են, որ այդ նպատակներին չի կարելի հասնել՝ առանց ներկայ ընկերային կարգի բռնի տապալման: Եւ Մանիֆեստը վերջանում է այն աշխարհահռչակ կոչով թէ՛ «Պրօլետարներ բոլոր երկրների՝ միացե՛ք»:

Մանիֆեստի հիմնական գաղափարներն են.

ա — «Բոլոր ընկերութիւնների պատմութիւնը մինչեւ մեր օրերը եղել է՝ դասակարգային կռիւների պատմութիւն. Հետզհետէ ընկերութիւնը բաժանուած է երկու թշնամի դասակարգերի՝ բուրժուաներ եւ պրօլետարներ»:

բ.— «Դասակարգային ամէն կռիւ՝ քաղաքական կռիւ է»:  
«Բաղաժական իշխանութիւնը մի դասակարգի կազմակերպուած իշխանութիւնն է՝ միւս դասակարգին ճնշելու համար»: «Նորագոյն կառավարութիւնը՝ բուրժուական դասակարգի գործերը տնօրինող մի յանձնախումբ է»:

գ.— «Մեծ ճարտարագործութիւնը ստեղծել է աշխարհաշուկան»: «Աշխարհաշուկայի շահագործումով՝ բուրժուական համաշխարհային բնաւորութիւն է տալիս բոլոր երկրների արտադրութիւններին. խլել է ճարտարագործու-

թիւնից՝ իր ազգային հիմունքը»: Ընկերութիւնը դարձել է միջազգայնական:

դ.— «Բուրժուական... աւելի բազմազան եւ հսկայ արտադրիչ ոյժեր է ստեղծել՝ քան անցեալ բոլոր սերունդները». բայց «բուրժուական սխտեմը շատ նեղ է՝ իր ծոցի մէջ ստեղծուած հարստութիւնները պահպանելու համար». և ահա զրանից էլ յառաջանում է «գերարտադրութեան պարագլուխային համաճարակը»: Բուրժուական հետզհետէ աւելի մեծ չափերով ընդհանուր ճազնապնդ է ստեղծել:

ե.— «Բուրժուական արտադրել է... մարդիկ, որոնք իրեն մահ պիտի տան եւ դրանք են նորագոյն գործաւորները, պրօլետարները... որոնք խռնուած են գործարանների մէջ եւ զինուորապէս կազմակերպուած»: Նրանց «ոյժը աւելանում է եւ իրենք էլ գիտակցութիւն են ձեռք բերում՝ այդ ոյժի մասին». նրանք օգնական ոյժ են ստանում թէ՛ փոքր բուրժուականներից, արհեստաւորներից, գիւղաբնիկներից, որոնք հետզհետէ ընկնում են պրօլետարիատի մէջ, եւ թէ ներկայ գործաւորական «չարժման խորին նշանակութիւնը ըմբռնող՝ բուրժուա տեսաբաններից»:

զ.— «Մինչեւ ցարդ՝ պատմական բոլոր շարժումները եղած են փոքրամասնութեան շարժումը՝ յօգուտ փոքրամասնութեան: Պրօլետարական շարժումը ահա ընդհանուր շարժումն է՝ յօգուտ մեծամասնութեան. Սյդ շարժումը, ամէն երկրի մէջ, սկսւում է ներքին «սոցսոյլ» կռիւով»: Բայց նա շուտով կը դառնայ միջազգայնական:

Կոմմունիստները պաշտպանում են «պրօլետարիատի ընդհանրական շահերը», նրանց առաջարկները սչիսրէր բերենորդողների գիւտեր չեն, այլ սահմանափակում են «արտայայտելու պատմական շարժման եւ գոյութիւն ունեցող դասակարգային կռուի իրական պայմանները». Նրանց նպատակն է կազմակերպել պրօլետարներին՝ որպէս դասակարգային կուսակցութիւն. պրօլետարիատին նուսճել սալ քաղաքական իշխանութիւնը եւ ջնջել բուրժուական սեպականատիրութիւնը, որ բանուորների աշխատանքով է ստեղծահականատիրութիւնը, որ բանուորների «կապիտալը ընկերային ուած՝ յօգուտ կապիտալիստների: «Կապիտալը ընկերային ոյժ է». նա պիտի դառնայ ընդհանրական, հաւաքական



սեպհականութիւն։ Եւ դա կը լինի՝ «բուրժուազական վաճառականական ազատութեան», բուրժուազական ընտանիքի», «աւանդական բարոյականութեան և ազգերի միջև եղած թշնամութեան շնչուելովը»։

Յեղափոխութիւնը պիտի լինի ֆաղսֆական եղանակներով։ Որպէս անցողական միջոց՝ մանիֆեստ առաջարկում է.

ա. — Կալուածահասի գրաւումն.

բ. — Յառաջադիմական բարձր հարկ.

գ. — Ժառանգութեան շնչումն.

դ. — Արտադրողներին սեպհականութեան գրաւումն.

ե. — Պետութեան կապիտալով և բացառիկ մենաշնորհով, ազգային դրամատան միջոցով՝ վարկի կեդրոնացումն.

զ. — Փոխադրութեան բոլոր միջոցների կեդրոնացումն.

է. — Հողերի ազգային մշակումն, ազգային արդիւնաբերութիւններ.

ը. — Պարտադիր աշխատանք՝ բոլորի համար.

թ. — Ժողովրդական և ձրի կրթութիւն՝ բոլոր մանուկների։

Սրանով էլ վերջացնում ենք Կոմունիստական Մանիֆեստ մասին տրուած այս անհրաժեշտ և հակիրճ ծանօթութիւնները. որոնց անգիտակ չի կարող մնալ՝ ժամանակակից խնդիրներով պարագողը։

ԳՐԻՈՅԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ. — «Սօցիալիստ կեանքի բացած հարց ու փորձը թէև տասը տարուայ հընդհանրութիւն ունի, բայց իր շօշափած խնդիրները ո՛չ միայն իրենց թարմութիւնը չեն կորցրել և շատ տեսակէտով կապուած են այսօրուան կեանքի հետ, այլ նրանք այժմէական խնդիրներ կը լինեն և՛ վաղուան համար՝ ի նկատի ունենալով իրենց ներքին բնաւորութիւնը։

Ընթերցողին կը մնայ՝ յետագայ դէպքերը աչքի առաջ ունենալով չափել՝ հարց ու փորձին պատասխանող իւրաքանչիւր անհատի կորովամտութիւնը՝ շօշափուած խնդիրներին

նկատմամբ։ Այնտեղ տեսնելիք, սովորելիք շատ բան կայ։

Մենք ամենայն հարազատութեամբ ներկայացրինք ամէն մէկի միտքը և զգացմունքը՝ իր սեպհական բառերով, միշտ հաւատարիմ մնալով բնագրին։

Այդ մասին միայն այս ենք ասում, որ վայելանի և վառ. տերվելտի պատասխաններից յապաւել ենք միայն այն փոքրիկ մասերը, — և նրանց տեղը կէտանիչեր դրել — որոնք վերաբերում էին ուսուցապոնական պատերազմի իրադարձութիւններին, ինչ որ միջանկեալ կերպով լնկել էր իրենց շարադրութեան մէջ և յարուցուած խնդիրների հետ՝ մասնաւոր ներկայումս՝ ո՛չ մի կապ ունէր։

Ալգերնուն Լիի պատասխանի վերջին մասը բոլորովին զանց արեցինք. որովհետև իր այդ ասելիքները բացառապէս վերաբերում էին Միացեալ Նահանգներին, և Հայ ընթերցողի համար առանձին շահեկանութիւն չէին կարող ներկայացնել։

Մնացածների պատասխանը տուել ենք նոյն ութէսմբ։

Կառեցկու, Գուէլչի, Հայտմանի, Ժիւլ Գէդի, և այլն, պատասխանները վերապահել ենք մի ուրիշ ՊՐԱԿԻ։

Մի քանի խօսք էլ՝ մեզ մասնաւորապէս հետաքրքրող երկու անձերի մասին։

ՀԵՐՎԷ. — Մենք դիտմամբ դրեցինք Հերվէի պատասխանը, որպէսզի ընթերցողը ինքը սեպհական համոզում գոյացնի՝ թէ ո՛ր աստիճան սխալում էր նա, երբ 10—15 տարի առաջ՝ Հայրենիքի, Ազգութեան և Սօցիալիզմի փոխադարձ յարաբերութիւնների նկատմամբ՝ այդ կարծիքներն էր պաշտպանում, որոնց հայրութիւնը այժմս բոլորովին թողել, ուրացել է։

Ծաւալին այն է՝ որ Հերվէի այն ժամանակուայ ասածները չը սահմանափակուեցան միայն Ֆրանսիայով, այլ նրանք տարածուեցան ամէն կողմ։ Հայ սօցիալիստ երիտասարդութեան մի թերուս մասը ո՛չ միայն արձագանգ տուեց նրա թիւր գաղափարներին, այլ Հերվէից աւելի Հերվէական դարձաւ. և սկսաւ, տարիներ շարունակ, աջ ու ձախ սլաքներ արձակել՝ մասնաւորապէս մեզ և մեր Կոստակցութեան ղէմ։ Հերվէի «Նրանց Հայրենիքը» դարձաւ մեր մի կարգ



սօցիալիստների աւետարանը: Հերվէի պատճառաբանութիւնները, բացատրութիւնները՝ նրանք համարում էին վերջնական, ապացուցուած, գիտական մի տեսակ դոգմա, հաւատոյ վարդապետութիւն. և ինչ որ դրանց հակառակ էր, նկատուում էր հակասօցիալիստական: Այդ ուղղութեամբ՝ Հերվէի ձեռնարկը չարժանի հատուածներ և պարբերութիւններ առնելով՝ մեր կուսակցութեան ղեմ մասնաւոր պայքար մղեց, ժընէ հրատարակուող «Սօցիալիստ» թերթը, որ մօքերի մէջ բացի ժամանակաւոր չփոթութիւն յատկացնելուց, ուրիշ և ո՛չ մի ծառայութիւն մատուցեց՝ նոյն իսկ իր քաղաքական գոյն սօցիալիստական գործին:

Հերվէի հաւատոյ վարդապետութիւնը տարածուեց և՛ թիւրքիայում, Հայ քուրանիս սօցիալիստների ձեռքով, և մի ժամանակ՝ Կ. Պոլսոյ Հայ ուսանողութեան մտաւոր սնունդը կազմեց: Բարեբախտաբար, չափ չուտ կարողացանք այդ սխալ հոսանքի առաջն առնել և նեղ սահմանների մէջ պարփակել, մինչև որ վերջնականապէս կարողացանք արմատախիլ անել:

Դեռ այդ հերթը չէ:

Երբ Շտոտգարտի Սօցիալիստ Միջազգայնական Համագումարի որոշումից յետոյ՝ Հերվէն, աստիճանաբար, իրականութեան աւելի մօտիկուց վերահասու լինելով՝ իր առաջնական պաշտպանած «թէզը» կամաց կամաց սկսեց թողնել և ազնուամտութիւն էլ ունեցաւ իր սխալները հրապարակապէս խոստովանելու, յետ առնելու ու ամենայն անկեղծութեամբ, եռանդուն ու փաստալից կերպով պաշտպանեց «Ալգաս—Լօրէնի» ինքնավարութեան սկզբունքը, — Հայ կեանքի մէջ գործող Հերվէականները դեռ չարունակում էին նրա առաջնական սխալ գաղափարները և մի առանձին թափով պայքար էին մղում Հայկական Դատի ղեմ մեր սօցիալիզմը հարուածած լինելու դիտաւորութեամբ: — Իսկապէս, դա շատ տարօրինակ նրբոյթ էր, յատուկ միայն յամառ տգէտների և մտաւոր մուրացկանների, որոնց զգաստութեան բերելու համար, սակայն, մեր կողմից ջանք ու ճիգ չը խնայուեց:

Երբ 1914-ի Օգոստոսի սկիզբները՝ Գերմանիան պատե-

րազմ յայտարարեց Ֆրանսիային, Հերվէն՝ որ արդէն ուղիղ սօցիալիստական մտքով հասկացուած՝ հայրենասէր էր, անմիջապէս յառաջ նետուեց և իր թերթի («Ընկերային Պատերազմ») շանթահարիչ յօդուածներով չը բաւականաւորով պատերազմական նախարարութեան դիմեց և խնդրեց, որ իրեն թոյլ տան ռազմադաշտ մեկնելու: Իր դիրքը, հիմա, սօցիալիստական ըմբռնումով, ճշմարիտ հայրենասէրի դիրք է և իր ձեռքից եկած ամէն ծառայութիւն մատուցանում է իր հայրենիքին՝ Ֆրանսիային՝ այս պատմական օրերիս մէջ: Տասը, տասն և հինգ, քսան տարի առաջուան Հերվէից՝ այսօր, գրեթէ, ոչինչ չի մնացել, բացի իր անկեղծութիւնից և վաւարուն բնաւորութիւնից: Նա մինչև անգամ յայտարարեց, որ մի քանի բառերի փոփոխութեամբ՝ «Մարսէյէզը», Ֆրանսիական ազգային օրհներգութիւնը, կարող էր «միջազգայնական» երգ դառնալ:

Վերջերս, նա եռանդուն կերպով պաշտպանեց և՛ Հայկական Ինքնավարութեան սկզբունքը:

Ընթերցողին ենք թողնում այլևս՝ դատելու, եզրակացնելու՝ թէ ի՞նչ նիշ, իմացականութեան, խելքի ի՞նչ վարկ պիտի տալ՝ Հայ կեանքի մէջ երեցող այն գրչակներին, որոնք դեռ այսօր էլ կրկնում են այն՝ ինչ որ հեղինակը, ծնողը ինքը՝ տարիներ առաջ ժխտել է և այսօր, իր նախկին ասած-գրածներին բոլորովին հակադիր դիրքի վրայ է կանգնել ու տարբեր գաղափարաբանութիւն ընդգրկել: — այն՝ ինչ որ ասում էր Ժօրէսը, Բէթելը, Գէդը, Կառլսկին, Բերնը՝ — այն, և այլն. — այն՝ ինչ որ, նոյն այդ խնդրի աթիւ, Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը ասել էր դեռ 1905 ից, Շտոտգարտի, Բրիւքսէլի, Յիւրիխի սօցիալիստական Միջազգայնական Համագումարներից էլ չափ առաջ:

Հերվէականութիւն այլևս չը կայ. բայց Հերվէականներ կան. միայն թէ ինքը Հերվէն այս վերջինների մէջը չէ և նրանց հակառակ է: Եւ եթէ Հայ կեանքը այդ աւելի քան տարօրինակութիւնը դեռ իր մէջ բովանդակում է, — ժամանակ է՝ որ նա չքանայ. և հայ Հերվէականներն էլ, ուր որ են, թողնեն իրենց իմաստակութիւնները և համախմբուին



Հայ հայրենիքի, Հայ ազատագրութեան, Հայկական Դատի, ինքնավար Հայաստանի շուրջը, — որովհետեւ դա բղիւղում է ճշմարտօրէն հասկացուած սօցիալիզմից: Եթէ Ֆրանսիական ալգի գոյութիւնը, նրա պատմա-անհատականութիւնը, ֆրանսիական ազատ Հայրենիքի շարունակութիւնը ուրիշ ազատ հայրենիքների կողքին՝ թէզն է դարձել և Հերվէի, Դրօշակի, Ուրբեմի, Հայ սօցիալիստները՝ որոնք գտնուում են պատմական անհղ մի րոպէի առաջ, պարտաւոր են նոյնը անել, երբ Հայ ալգի լինել — չլինելու խնդիրն է վճռուում: Ընկերային սօցիալիստը Հայկական Դատի, Հայ ազատագրութեան, ինքնավար Հայաստանի աշխատող, անխոնջ գործաւորներից մէկը պիտի լինի: — հակառակ դէպքում, նրա ծրագրած սօցիալիստական գաղափարները կը նկատուին մի արտաքին ծրար՝ իր դասաւրթութիւնը, անտարբերութիւնը, անխելքութիւնը պարտկելու համար՝ տգէտների առաջ:

Հայ սօցիալիստների մէջ՝ գաղափարների ինչ ելանգաւորումներ էլ որ լինին, զանազան տեսական և գործնական խնդիրների մասին, — այնուամենայնիւ, նրանք միշտ կարող են, — և պէտք է որ այդպէս լինի — համագործակցութեան սկզբունքով միանալ Հայկական Դատի շուրջը, նրա անհատական և հաւաքական ազդակը դառնալ, որովհետեւ՝ Հայկական Դատը, իր էութեան մէջ, Հայ ալգի գոյութեան իրաւունքի հարցն է. և ո՞ր սօցիալիստն է, որ մի ալգի գոյութեան իրաւունքը պիտի ժխտէր, եթէ նա սփեւտ և դասալիք չէր:

Գ. ՊԼԵԽԱՆՈՎ. — Տուեցինք իր ծածկուած, վերէն վար քաշկրտուած պատասխանի թարգմանութիւնը. իր «իմաստակութիւնները» ցայտուն են, աւելի քան Հերվէինը:

Միայն Հերվէի «իմաստակութիւնները» չէին, որ մեզ անագին վնաս հասցրին, տկարամիտների վրայ ազդելով: Այդ տեսակէտով, առաջին տեղն ունի բռնած և՛ Պլեխանովը:

Մարդ չի իմանում. ցաւի՛ թէ զայրանայ, երբ տեսնում է, որ Հայ մտաւորական, յեղափոխական, սօցիալիստ երիտասարդների վրայ ազդել են այդ տեսակ հրապարակասոսներ: Մտածել որ սրանց մտքերը, գաղափարներն են, որ

ազդել են՝ մասնաւորապէս՝ մեր ընկերներից մի քանիսի վրայ, և մեր թուլութեան պատճառներից մէկը դարձել ու արգելք եղել՝ Հայկական Դատի շուրջը՝ Հայ սօցիալիստական ընդհանուր համագործակցութիւն գոյանալուն: Սրանք այն մարդիկն են, որ այսօր ո՛չ միայն չեն պաշտպանում իրենց երթնքի հրապարակ դրած «թէզերը», այլ ճիշդ հակառակն են գործում:

Սրանք այն «անխառն», «զուտ», «անսխալական» վարկ ունեցող Սօցիալ Դէմոկրատներն են, որոնք այսօր թողել են իրենց երէկուայ սրբութիւն-սրբոց համարուած «իմաստակութիւնները»: և սակայն, նրանց հետեող Հայ սօցիալիստները — մեր երբեմնի ընկերներն էլ դրանց մէջ — դեռ չարունակում են իրենց վարդապետների նախկին «իմաստակութիւնները» որոճալ, հեռու մնալ Հայ ազատագրական դատից, և մտքեր պղտորել:

Գ. Պլեխանովը Ռուս Ս. Դ. Բ. կուսակցութեան ազդեցիկ տեսաբաններից մէկն է. չը նայելով որ, երկար տարիներ, ռուսական իրական կեանքից հեռու է մնացել, այնուամենայնիւ, այդ «Մարքսիստը» իրեն իրաւունք է տուել միշտ, ամէն խնդրի մէջ, միջամխուիլ, սահմանների մէջ պարփակել կեանքը, որից ինքը հազարաւոր մղոններով հեռու է ապրել՝ երկար տարիներից ի վեր: Ու հէնց այդ պատճառով էլ, Ռուս Սօցիալ Դէմոկրատների երկպառակութեան, կռիւների շարունակական զխաւոր ազդակներից մէկն էլ ինքն է եղել և է՝ տակաւին:

Դեռ այդ մարդուց կարեկցական, սօցիալիստական, մարդասիրական մի բառ, գրչի մի ժայթքում անգամ չը տեսնուեց, չը լսուեց՝ Հայ Ժողովրդի, Հայկական Դատի մասին. թէ և ո՛չ մի ակնաւոր սօցիալիստ չը մնաց, որ իր կարծիքը, համակրութիւնը — այս ու այն ձևի տակ — չը յայտնէր բռնաջնջումի ճիրաններում տառապող, պայքարող Հայերի և նրանց ընդգրկած Դատի մասին:

Մենք ոչինչ չէինք ունենալ ասելիք, եթէ նա իր լռութիւնը բացատրէր միմիայն ճիշտութեամբ. քանի որ մեր կեանքի մասին ինքը ոչինչ չը գիտէ:

Բայց այդպէս չէ. իրականութեան մէջ ուրիշ բան կայ,



եթէ Պլեխանովեան պարզամիտ քաղաքականութեան մէջ թափանցենք:

Ինքը Սօցիալ-Դէմոկրատ անունն ունի. Հնչակեաններն էլ Սօցիալ-Դէմոկրատներ են. — այդ հանգամանքը բաւական է եղել Պլեխանովին, որ դիւրինի յետեւից վազի. ուստի նա ո՛չ մի միջոց չի խնայել Ս. Դ. Հնչակեաններին համոզելու, որ իրեն հետեւն, իր գաղափարները ընդունեն: Բայց սխալ դուռ. զարկեց. նա կարծեց թէ՝ Ս. Դ. Հնչակեանութիւնը պարփակուած է մի քանի աւելի ու պակաս ազդեցիկ Հնչակեան ղեկավարիչ մտաւորականների մէջ: Նա համոզուած էր, որ այդ մի քանիսին ձեռք առնելով՝ ամբողջ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը շուտ տուած կը լինէր իր կողմը. — այդ հաշիւների մէջ նա չարաչար սխալուեց:

Սօցիալ-Դէմոկրատ Հնչակեանութեան գոյութիւնը կուսակցական պարագրոյններից, ժամանակակից փառքներից կախումն չունի: Նա մի պատմական հաստատութիւն է, ստուարազանքուած, հաստահիմն մի շէնք, որի կառուցման, զարգացման համար գործել են հարիւրաւոր ուղեղներ, տասնեակ հազարաւոր բազումներ: Նա մի կենդանի գործ է, որ շաղախուել է մեր աննման նահատակների, մեր անզուգական մարտիրոսների սուրբ արիւնովը, նրանց ջիղերովը, րաբի, մտքի թրթռումներովը:

Մի Կուսակցութեան հոգին, զարկերակը չի գտնուում իր ժամանակակից վարչական անձնակազմութիւնների ձեռքի մէջ. — երբէք:

Անհատները, ինչքան էլ որ ազդեցիկ, հեղինակաւոր լինեն, կերթան. բայց հաստատութիւնը կը մնայ. որովհետեւ նա հաւաքականութեան արտայայտութիւնն է. ինքնին էլ արդէն մի հաւաքական գոյացութիւն, որի մի մասը զեռշարունակում է ապրել, գործել. իսկ միւսը՝ «յաւիտենականութեան գրկի» մէջն է մտել:

Պլեխանովը, ինչպէս և Հերվէն, պատճառ դարձան, որ շատ հայ սօցիալիստներ — մասնաւորապէս Կովկասի մէջ և այլուր — հեռու մնան Հայկական Դատից: Նրանց թիւը և ոչ սօցիալիստական գաղափարաբանութիւնից էր, որ մեր ընկերներից ոմանք սայթաքումի մատնուեցան: Բայց դրա-

նով էլ նրանք պատճառ դարձան, որ մեր Կուսակցական գաղափարաբանութիւնը է՛լ աւելի զտուի, մաքրուի, պարզուի, բիւրեղանայ և՛ պատմական վճռական ընդհանրին՝ պայքարի պատնէշի վրայ, իր անտեղիտալի դիրքի վրայ կենայ:

Ինչ էր ասում Պլեխանովը:

Ամբողջ Ռուսաստանի, ուրեմն և Կովկասի մէջ, երկու դասակարգ կայ, առանց ազգի խտրութեան, բուրժուա և պրօլետար: Սօցիալ Դէմոկրատների միակ և աւագ պարտականութիւնը պիտի լինէր՝ զուտ դասակարգային կռիւ մղել՝ ռուս պետական սահմանների մէջ:

Ռուսաստանի և Կովկասի մէջ ապրող Հայ ազգի պրօլետար դասակարգը — եկուոր կամ տեղացի — և նրա սօցիալ դէմոկրատ տեսաբանները իրաւունք չունէին, գաղափարական տեսակէտից, Հայկական Դատով զբաղուելու, Տաճկահայ ժողովրդական Ֆիդիքական, բարոյական, նիւթական օգնութեան հասնելու և ընդհանրական մի գործ ընդգրկելու:

Եթէ մէկը, սօցիալ-դէմոկրատ անգամ, փորձէր հակառակը գործել, նա երկուութեան մէջ կրնկներ, երկու թիւի վրայ կը նստէր. որովհետեւ Հայկական դատը Ազգայնական Դատ էր. իսկ Ռուսաստանի և Կովկասեան շարժումները՝ գերազանցապէս «սօցիալիստական»։ մէկը միւսի հետ չէր կարող երթալ. Ուրեմն, Կովկասի և Ռուսաստանի մէջ զըտնուող սօցիալ-դէմոկրատ Հնչակեանները, եթէ ճշմարիտ սօցիալ-դէմոկրատներ էին ուզում մնալ, նրանք պէտք է բաժանուէին Տաճկաստանի մէջ գործող իրենց ընկերներից և միանային Ռուս Ս. Դ. Բ. Կուսակցութեան հետ, նրա մէջ ձուլուէին և նրա անբաժան մասը կազմէին:

Մեր ընկերներից և նրանց փոքրամիտ հետեւողներից ոմանք այդ շատ պարզամիտ փաստաբանութիւնից խաբուեցան, լարուած թակարդի մէջն ընկան և Պլեխանովին հետեւեցին: Ու 1903-ից մինչև 1905-ը, մեր Հինգերորդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովը՝ Կուսակցութեան ներքին կեանքը ընկաւ արեւոտումի մէջ:

Դժբախտաբար, չհնչական անգամ, «Վերածնութիւն»ի հետ միասին, այդ ժամանակ, Պլեխանովի ասածների հա-



ւատարիմ թարգմանը եղան։ Եւ մեր մի քանի ընկերները, ըստ Պլեխանովեան դեղագրի, որոշեցին լքել Հայկական խնդիրը, զբաղուել միայն Ռուսական ներքին շարժումներով. ու մի առանձին քաղաքագիտութեամբ էլ փաստուած էին, որ նախ Յարիզը կործանենք և ապա վերադառնանք Տաճկահայ խնդրին։

Դրանք պատրուակ պատճառաբանութիւններ էին՝ Կուսակցութիւնը իր բուն նպատակից չեղեցնելու և Ս. Դ. Հնչակեանութիւնը ձուլելու Ռուս Ս. Դ. Բ. Կուսակցութեան մէջ։ «Նոր գործունէութիւն», «Նոր մէթոտ» անունով հռչակուած գաղափարները ուրիշ նպատակ չունէին. ինչ որ ժամանակին մենք քողածերկեցինք թէ՛ ներքին, մասնաւոր գրութիւններով և թէ՛ հրապարակային յօդուածներով։

Բարեբախտաբար, մեր Կուսակցական շարքերը գաղափարական որոշել կրթութիւն ունէին։ Նրանք, որքան որ թեթեւ խորուամներ ունեցան, բայց անդամանելի սխալ չը գործեցին և՛ բացի անհատներից՝ ամբողջութիւնը հաւատարիմ մնաց Կուսակցութեան Հիմնական Սկզբունքներին և մօտաւոր ու հեռաւոր նպատակներին։

Անբնականաբար Հայաստանը (\*) այդ ընկերների արտա-յայտիչ բերանը դարձաւ և ներքին խուլ պայքարը առաջ տարուեց, մինչև որ եկաւ Հինգերորդ Ընդհանուր Պատգմ. Ժողովը և վերահաստատեց իր արդէն դաւանած սօցիալ-դէմոկրատական քաղաքարարանութիւնը, համընթաց Սոց-դային խնդրի հետ և Պլեխանովի իմաստակութիւններին անսացողներին պաշտօնազրկեց, ու Կուսակցութիւնը իր ուղիղ և անսայթաք ընթացքը շարունակեց։

Այդ օրերի բանակութիւնների ժամանակ՝ ի դ՛ուր, մենք պահանջում էինք Պլեխանովից և իր, մանաւանդ Կովկասի մէջ գտնուող հետեւողներից՝ բացատրել, ասել՝ թէ ի՞նչ էր իրենց դիրքն ու տեսութիւնը Ա. Զ. Դ. Բ. խնդրի նկատմամբ ընդհանրապէս, Հայկական խնդրի վերաբերմամբ՝ մասնաւորապէս։

(\*) Տես 1904—1905. թիւերը, մասնաւորապէս «Կովկաս և Տաճկահայ դատը»։

Առաջին հարցի շատ տարտամ պատասխանը լինում էր՝ թէ երբ սօցիալիզմը տիրի, այն ժամանակ Ազգային խնդիրներն էլ արմատապէս կը վճռուին՝ իւրաքանչիւր ազգութեան ինքնորոշման սկզբունքով։ Եւ այդ ասողներից ոմանք ազգութիւն և պետութիւն հոմանիշ էին համարում. — Ռուսական, գերմանական, թրքական, ֆրանսիական պետութիւնները մի մի ազգութիւններ էին կազմում։

Իսկ երկրորդ խնդրի նկատմամբ ասացին, որ մեզ համար, Կովկասի և Ռուսաստանի մէջ գտնուող Հայ սօցիալիստների և պրօլետարների համար այդպիսի մի խնդիր գոյութիւն չունի։ Այս տեսակներից աւելի սրտոտները և կարեկցութիւն ունեցողները առաջարկում էին Հայկական Դատը թողնել, ու սպասել՝ մինչև որ Եւրոպական Պետութեանց մի Համագումար կը կայանար և «Տաճկահայերը» այդտեղ երթալով՝ իրենց համար բարենորոգումներ կը պահանջէին։ Եւ այս ասողները երբեմին թուղի յեղափոխականներ էին, — կեանքից տրորուածներ, յուսախաբութիւն կրողներ։ Մեր դիւանաթղթերը այդ մասին շահեկան շատ տեղեկութիւններ ունին, և է՛լ աւելի հետաքրքիրն այն էր, որ այդ մտքերը սկսել էին երևան գալ, դեռ 1900-ից, երբ Ռուս Ս. Դ. Բ. Կուսակցութիւնը սկսեց ուժեղանալ։

Հարցի այդ մասը, թէ և սերտ կապակցութիւն ունի մեր Կուսակցութեան պատմութեան հետ, բայց նա առանձին առնչութիւն ունի և՛ այսօրուայ, մեզ այս բողոքիս յուղող խնդիրների հետ։

Երբ մենք մեր ընկերներին ու հակառակորդներին աղաղակում էինք՝ թէ սխալ է իրենց դիրքը, որովհետեւ Պլեխանովի բերած փաստերի հիմունքը «Իմաստակութիւն» է, — նրանք մեզ, ա՛յն ժամանակ, վերակրկնում էին Պլեխանովի յանկերգը։ Այդ մասին Թիֆլիզում հրատարակուող «Նոր-Խօսք»ը Հերվէի «Իմաստակութիւնները» և Պլեխանովեան «Փիլիսոփայութիւնը» վերահաստատելով՝ մեզ պատասխանեցին ամենապատշաճ բառերով։

Ի դուր մենք, այդ ժամանակները, պատին էինք սեղմում և մեր հակառակորդների տեսաբան Պլեխանովին հարցընում՝ թէ ի՞նչ կը լինէր իր դիրքը, եթադրենք, երբ Մոս-



կուսայի կրեմլինի վրայ ծածանուէր օսար մի դրօշ։ Արդեօք, այդ պարագային, ինքը և իր ընկերները, իր պատկանած կուսակցութիւնը ձեռքերը ծալած՝ անտարբեր կը մնային, թէ՛ բոլորն էլ, ուրիշ դասակարգերի հետ համագործակցելով, յառաջ կը մղուէին, զէնք կառնէին և կախատէին օսար տիրապետութիւնը յետ մղելու և ռուսական ազգային գոյութիւնը նուաճողական վտանգից ազատելու։— Մեզ ասում էին, որ իրենք այդպիսի հարց չունէին և ձ priori պատասխան չէին կարող տալ։ Իրաւ է որ իրենք, Պլեխանովը, և իր նման խորհողները, այդ ժամանակները, այդպիսի իրենդիր չունէին։ Բայց հարցն էր՝ եթէ ունենային։

Իսկ մենք այդպիսի, և դեռ է՛լ աւելի կենսական ու անյետաձգելի հարց ունէինք, այդ ժամանակները և առաջ էլ. ու դրա համար մենք ասում էինք, որ մեր կուսակցութեան մէջ ո՛չ երկուութեան (տուգալիզմ) և ոչ էլ երկու աթոռի խնդիր կար, այլ եղածը բոլորովին համաձայն ու հետեւանք էր սօցիալ-դէմոկրատական հիմնական սկզբունքներին, գիտական սօցիալիզմի գաղափարաբանութեանը։ Մենք, ամէն տեղի Հայ սօցիալիստներս, պարտաւոր էինք Հայկական խնդրի ազդակը լինելու, որովհետեւ Տաճկաստանի մէջ մղած մեր կռիւը, սօցիալիստական հիմունք ունենալով միասին, նա իր մէջ էր բովանդակում և՛ Հայ ազգի ինքնագոյութեան խնդիրը։ Ազգային խնդրի առաջ՝ բոլոր դասակարգերի մէջ՝ համագործակցութիւնը հրամայական է դառնում, — դա պահանջում է հարցի ներքին բնաւորութիւնը, բովանդակութիւնը։ Կովկասի, Ռուսաստանի գիւղացին, գործաւորը, կապիտալիստը, փոքր բուրժուան, իրենց տեսաբաններով չէին կարող ձեռնթափ մնալ և չը սատարել, ազդակը չը դառնալ և չօգնել բարոյապէս, նիւթապէս, ֆիզիքապէս ա՛յն Հարցին, որ ազգային, համագային էր՝ իր բարձր ըմբռնումի և հետեւանքների տեսակէտից։ Ո՞ր սօցիալիզմը, ո՞ր գաղափարաբանութիւնն էր մեզ արգիլում— ուր էլ որ լինէինք, աշխարհադրական ի՛նչ լայնութեան մէջ էլ որ ջրուած գտնուէինք— թւէնքս ծալլած՝ լոկի հանդիսատես լինելու Հայ ազգի մի մասի սպառնալու կործանմանը, բնաջնջմանը։ Այդ ո՞ր միջազգայնականութիւնը, ո՞ր դասակար-

գային կռիւն էր հրամանագրում։

Արդեօք, եթէ Պլեխանովը, ա՛յն ժամանակ մեր տեղը լինէր, նա չէ՞ր մտածիլ, չէ՞ր անիլ ա՛յն ինչ որ մենք, Կովկասի և կամ ուրիշ վայրերի մէջ գտնուող՝ Ս. Դ. Հնչակեաններս էինք անում։ Ուրեմն, մեր կուսակցութեան դիրքը ճիշդ էր և բղիւսում էր գիտական սօցիալիզմի ընդհանուր գաղափարաբանութիւնից, նրա հիմնական սկզբունքներից։

Եթէ, այդ ժամանակ, 1900—1905, Պլեխանովը չը խոստովանեց, չասաց թէ՛ ինքը ի՛նչ կանէր, եթէ մեր տեղն եղած լինէր, եթէ կրեմլինի վրայ օսար դրօշ տեսնէր,— այդ բանը նա, հիմա, միայն հի՛մա է խոստովանում և ասում։

Այժմ, ուրախութեամբ, խօսքը տալիս ենք այսօրուայ Պլեխանովին՝ երեկուան Պլեխանովին հերքելու համար՝ իր սեպհական բառերով և փաստերով։

Ահա Պլեխանովի նամակը՝ ուղղուած իր ընկեր և բարեկամ Պետակսն Դուժայի նախկին պատգամաւոր՝ Բուրկանովին։ Նամակը գրուած է Ժընևից և կրում է 1915, Յուլիս 21 ամսաթիւը։ Լսենք։

«Սիրելի ընկեր. գրում եմ այս նամակը, սակայն վստահ չեմ, որ նա քեզ Պետրօգրատում կը հասնի։ Եթէ քեզ այդտեղ չի հասնի, յոյս ունիմ, որ յամենայն դէպս քեզ կուղարկուի։ Ահա թէ բանը ինչու՞նի է։

«Պետական Դուժայի բացումը մօտենում է. այն հանգամանքները, որոնց մէջ հրաւիրւում է Դուժան, ո՛չ միայն բացառիկ են, այլ ուղղակի ճգնաժամային։

«Կարելի է անկեղծօրէն ասել, որ մեր ռուս երկիրը երբեք չէ եղել այսպիսի վտանգաւոր դրութեան մէջ, նոյնիսկ XVII-դ. դարի սկզբում, խառնակութիւնների ժամանակ։ Նա պէտք է իր բոլոր ոյժերը լարի հայրենիքի պաշտպանութեան համար։

«Չսփից դուրս տխուր կը լինի, եթէ մեր համախոհները որ և է չը մտածուած քայլով խանգարեն Ռուսաստանի ինքնապաշտպանութեան գործը։

«Եթէ Գերմանիայի յաջողուի իր նուաճումների ճրագիրը իրագործել, դրանից նախ և առաջ պէտք է տուժի ռուս



պրօլետարիատը և առ հասարակ ռուս աշխատաւոր տարրը:

«Ինչպէս որ ռուսները աշխատեցին, միանգամայն պարզ է, որ դուք և ձեր ընկերները, սօցիալ-դէմոկրատիայի պատգամաւորները Պետական Դումայում, առանց այլևայլութեան պէտք է պաշտպանէք զինուորական փոխառութեան խնդիրը:

«Փոխառութեան դէմ ձայն տալն ուղղակի զաւաճանութիւն կը լինի (ժողովրդի հանդէպ), իսկ ձայնից հրաժարուելը՝ վախկոտութիւն: Ձայն տուէք փոխառութեան օգտին:

«Կարգացէք այս նամակը ընկեր Չիսկիձէին և ասացէք նրան, որ ես խնդրում եմ յանուն իր լաւագոյն պաշտամունքների, որ իմ այս նամակին առանձին ուշադրութիւն դարձնի:

«Ես լսել եմ, որ նա պատրաստուում է մանել՝ գուցէ և արդէն մոել է՝ պատերազմին նպաստող կոմիտէի մէջ: Եթէ ճիշտ է այդ, այն ժամանակ ասացէք նրան, որ ես սրտանց ողջունում եմ նրա այդ լաւ քայլը և ձեզ նոյնպէս խորհուրդ եմ տալիս հետևել Չիսկիձէի օրինակին:

«Ներեցէք, որ ես ձեզ տալիս եմ այս խորհուրդը այն ժամանակ, երբ դուք չէք խնդրել ինձնից որևէ խորհուրդ... Բայց ակնարկային բացառիկ պայմաններ են...

«Թանկադին ընկեր, յիշեցէք որ ներկայ դէպքում չի կարելի ժողովրդի պաշտպանութեան դէմ լինել: Յոյս ունիմ, որ դուք ինձ կը գրէք:

«Ի՞նչն աշխատեցին առանց քեզ էլ գիտենք», որչափ ես ուրախ կը լինէի, եթէ ձեզնից ստանայի մի այդպիսի պատասխան: Այդ ցոյց կը տար, որ իմ ընկերները բմբուռ, հասկացել են ներկայ դրութիւնը: Խնդրում եմ, եթէ դուք ինձ հետ համաձայն էք, խօսելով միւս ընկեր-պատգամաւորների հետ, հեռագրեցէք ինձ այս հասցեով. «Soyez Tranquille»:

«Սեղմում եմ ձեռքդ»:

(Թիֆլիզի մէջ հրատարակուած «Հայրենիք», թիւ 3)

Արեւոք, այս նամակը կարգաւորւց յետոյ, ինչ մտածեցին մեր ա՛յն «սօցիալ-դէմոկրատները», որոնք մաւր մատին

չէին տալիս, որովհետեւ Հայկական կեանքը, Հայկական Խընդիրը, երբեմն, իրենց համար չափ ճշգրտութեամբ — այդպէս է հիմայ էլ:

Այդ թողնենք: Անցնենք ընդհանուր խնդրին:

Պետական պաշտպանութեան բովանդակութեան հետ մենք բոլորովին համաձայն ենք:

Գէորգի ղեկավար մեր էրդ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը, 1913, ռուս և թուրք պետական յարաբերութիւնները աչքի առաջ ունենալով՝ ճիշտ այն ոգով էր որոշում տուել, որով այսօր յառաջ է գալիս Պետականովը:

Համառոտակի մի քանի խօսք աւելորդ չը պիտի լինէր այդ նամակի մասին:

Ա. — Պետականովը ասում է որ 1915, Յուլիսին, Ռուսաստանը գտնուում է ո՛չ միայն «բացառիկ», այլ ուղղակի «ճգնաժամային» հանգամանքների մէջ:

Արդ, այսօրուայ Պետականովը երկուայ Պետականովին պիտի ասի, որ այդպիսի և է՛լ աւելի վատթար, անհամեմատ բացառիկ և ուղղակի ճգնաժամային հանգամանքների մէջ էր գտնուում Հայաստանը, Հայ Ժողովուրդը, երբ մենք ասում, փաստում էինք, որ անտարբեր չը պէտք էր մնալ, պարտականութիւն պէտք էր ստանձնել և գործել տրուած պայմաններին համեմատ: Սխալուում էինք մենք ա՛յն ժամանակ: Այն ժամանակուայ Պետականովը ասում է, այո՛, սխալուում էինք. իսկ այսօրուանը պատասխանում է՝ ո՛չ, չէինք սխալուում: Մեր հրապարակախօսը, ուրեմն, ինքն իրեն գիտութեան թէ՛ բացասական և թէ՛ դրական վկայական է տալիս:

Բ. — «Անկեղծօրէն ասել, որ մեր ռուս երկիրը երբեք չի եղել այսպիսի վտանգաւոր դրութեան մէջ. նոյնիսկ 17րդ դարի սկզբում, խառնակութիւնների ժամանակ: Նա պէտք է իր բոլոր ոյժերը լարի Հայրենիքի պաշտպանութեան համար»:

Այսօրուայ Պետականովը ինչո՞ւ չի ասում երկուայ Պետականովին, որ ինքը պարզ սոփիստութիւններ էր անում, երբ Ժօրէսի, Բերնշտայնի խօսքերը ծածկում էր պարզապէս:

Բայց ինչո՞ւ երկուայ Պետականովը այդպէս չէր մտածում և՛ մեր մասին:



«Անկեղծօրէն» ասում ենք, որ մենք էլ ունէինք մե՛ր Հայ «երկիրը»։ մենք էլ ունէինք մե՛ր Հայ «հայրենիքը»։

Ինչո՞ւ այդ անվիճելի, պատմական, ցայտուն, ապացուցուած իրողութիւնը ուրանում էր երեկուայ Պլեխանովը։

Մեր երկիրը, մեր հայրենիքը ո՛չ միայն «վտանգաւոր» գրութեան մէջ էր, նման 17րդ դարու Ռուսաստանին, այլ՝ բնաջնջումի, կործանման։ Նրա վրայ ծանրացել էր ասիական նուաճողի, մարդը գրաստական վիճակի ենթարկողի մահաբեր եաթաղանը, իր բոլոր հետեւանքներով, դարե՛ր, տարե՛նք՝ չարունակ։ Մեր «երկիրը», մեր «հայրենիքը» միայն «վտանգաւոր» խառնակութիւնների մէջ չէր գտնուում, այլ կանխաւնսածմանը, յարձակողական ազգայնական քաղաքականութեամբ նա յորդառատ արեւան մի քառարան էր դարձել։ Տիրողը վճռել էր մեր «երկիր», մեր «հայրենիք», մեր ազգի մահը։ և յամառօրէն, հետեղականութեամբ, իր նպատակի իրագործման էր հետազնուում։ Ուրեմն, մենք՝ սօցիալ-դէմոկրատ հայերս, կովկասի մէջ կամ այլուր, ի՞նչ պիտի անէինք, մէն մինակ մեր «իւզ» ու «հացի» առատութեան վրա՞յ մտածէինք, դառնայինք մի տեսակ սօցիալիստական լազարօններ, — ինչպէս քարոզում էին ձեր ընկերները և դուք։ Թէ՛ մենք էլ պէտք էինք «մեր բոլոր ոյժերը լարել հայրենիքի պաշտպանութեան համար»։

Ու երբ մենք, որպէս պարսկականութիւն, իրաւունք, պարսկական անհրաժեշտութիւն, մեր «բոլոր ոյժերը» լարելու գաղափարն էինք պաշտպանում և նրա գործադրութեան յետեւից ընկնում, — այն ժամանակուայ Պլեխանովը և իւրայինները ասում էին թէ՛ «բոլոր ոյժերի» լարումը իր մէջ ունէր «երկունք» (գուալիզմ) և «երկու աթոռ» գաղափարը։

Թէև ազգային խնդիր, թէև հայրենիքի խնդիր, թէև պատմա—անհատական գոյութեան խնդիր, թէև արմատական բնաջնջումի խնդիր, — բայց Պլեխանովեան գաղափարաբանութիւնը ասում էր, որ ճշմարիտ սօցիալ դէմոկրատը, կովկասի մէջ գտնուողը մանաւանդ, իր հայեացքի սահմաններից անդին չպիտի բարձրացնէր և, որ սարսափելին էր, իր ազգի ծոցին մէջ գտնուող կապիտալիստների, ոչ-սօցիալիստ տարրերի օգնութեան երբէք չը

պիտի դիմէր, նրանց հետ չը պէտք է համագործակցէր։ Եւ, հակառակը անելով, մենք՝ որպէս թէ մթաղնացնում էինք պրօլետարիատի սօցիալիստական գիտակցութիւնը, նրա դասակարգային կոիւնին հարուած էինք տալիս և չեղումի շաւղի մէջ մտցնում։

Այդպէս «ազգային», «երկրի», «հայրենիքի» ինքնագոյութեան պաշտպանութեան խնդիրները մէջ՝ սօցիալիստ գաղափարաբանութիւնը պիտի մերժէ՞ր ոչ-սօցիալիստ դասակարգերի աջակցութիւնը կամ ձեռնթափ պիտի մնար, ասելով որ՝ այդ խնդիրները բուրժուազական խնդիրներ են, և պրօլետարիատը դրանց հետ գործ չունէր, նա մէն մինակ պիտի մտածէր իր հացի ու կարագի մասին։

Այսօրուան Պլեխանովը ի՞նչ չուտ հաշուեց երեկուան Պլեխանովի հետ, երբ խնդրեց իր կաշուին եկաւ։

Կամ մի՞թէ Պլեխանովը կարծում է թէ մենք, մեզ նման և՛ ուրիշ նուաճող ազգեր, չունէինք ա՛յն «հայրենիքը», ա՛յն «ազգը», որպիսին որ ինքը հասկանում է իր հաւնար։ — Ո՛չ։

Մենք էլ ունէինք մեր ազգը, հայրենիքը, մեր պատմաանհատական գոյութեան խնդիրը, որի ազատագրութեան համար պարտաւոր էինք ամէն ջանք թափել, ամէն «ոյժ լարել», — այդ ոյժը որ դասակարգերից էլ որ գալու լինէր։ Ասել է թէ՛ երեկուան Պլեխանովի դիմացը մենք չէինք սխալուող՝ գաղափարական տեսակէտից։

Գաղափարական երկուութիւն կա՞յ, ուրեմն, որ իր սօցիալիստ ընկերներին, ռուս գործաւորներին թելադրում է իրենց ամբողջ «ոյժը լարել» և միւս դասակարգերի հետ համագործակցելով՝ ազատել ռուս հայրենիքը՝ ներկայացած «վտանգաւոր» կացութիւնից, որ սակայն բոլորովին ո՛չ ինչ, անբաղադատելիօրէն թեթեւ է՝ մեր վրայ ծանրացած վտանգի հետ համեմատելով։

Գ. — «Չափից դուրս տխուր կը լինի, եթէ մեր համախոհները, որ և է չը մտածուած քայլով, խանգարեն Ռուսաստանի ինքնապաշտպանութեան գործը»։

— Այո՛, դա չափազանց սխալ քայլ կը լինէր։ և Ռուսաստանի մէջ գտնուող սօցիալ—դէմոկրատը է՛ն վատ ծա



ռայութիւնը մատուցած կը լինէր սօցիալիստական գործին, եթէ մտածէր՝ ո՛ր և է Այլ մտածուած քայլով», այսօր, Ռուսաստանի ներքին խաղաղութիւնը վրդովել, երբ Աւըստրո—գերմանական, Թրքա—բուլղարական հորդանքերը բանակած են մի քիչ հեռու։ Ասիական յետամնաց ազգերով և պետութիւններով շրջապատուած Ռուսաստանի մէջ գործող քաղաքական մի կուսակցութիւն ամենամեծ սխալը, յանցանքը գործած կը լինի, եթէ ջանայ Ռուսաստանը ձգել խռովութիւնների մէջ, նրա թուլացմանը նպաստել, որից պիտի օգտուէին հարեւան յետագէմ, Տուրանա—Թրքական ազգերը, որոնք միշտ էլ յառաջագէմ մարդկութեան գլխին պատիժ են եղել։

Այո՛, համաձայն կատարելապէս. այժմ ամէն ոյժ պիտի լարել, բոլոր դասակարգերի հետ պիտի համագործակցել՝ Ռուսաստանը իր ունեցած *արտաքին վտանգաւոր դրութիւն* նից ազատելու և թշնամիներին յետ մղելու։

Այսօրուան Պլեխանովը ի՞նչ բարենիչ, ի՞նչ յանդիմանութիւն ունի տալիք երեկուան Պլեխանովին, երբ կաշուից դուրս էր գալիս, չէ՛ր մտածում՝ որ շատ «տխուր» մի բան էր, երբ Սօցիալ Դէմոկրատ Հնչակեաններին խորհուրդ էր տալիս Այլ մտածուած քայլերով ձեռնթափ լինել և այդպիսով խանգարել Հայաստանի ձիւնապաշտպանութեան գործը։ Եւ դա 1903—1905-ին էր, երբ Ս. Դ. Հնչակեանութիւնը պատմական ահագին գործեր էր կատարել, Հայ ազգի և Հայրենիքի ազատագրութեան մի բազումէն էր հանդիսացել, յանուն սօցիալիզմի, և երբ մեր երեքի մէջ Կոստան քմահաճոյքի թագաւորութիւնն էր տիրում, ու մարդը, մասնաւորապէս Հայ ազգը, իր բոլոր դասակարգերով, համարուում էր ոչ մարդ։

Դ. — Եթէ Դերմանիային յաջողուի իր նուաճումներին ծրագիրը իրագործել, դրանից նախ և առաջ պէտք է տուժի ոռոս պրօլետարիատը և առհասարակ ոռոս աշխատաւոր տարրը։

Մի՞թէ տաճիկ նուաճումը Դերմանիայից լաւագոյնն էր։ Հերվէն նոյն իսկ, իր «Բմաստակութեան օրերին», ասում էր, որ ինքը Ֆրանսիան կը պաշտպանէր Տաճիկ հանդէպ։

Արդեօք Տաճիկ բռնապետութիւնից հայ «պրօլետարիատը» և «աշխատաւորը» օգտուում էր, թէ՛ դէպի սպանդանոց էր քշուում, իր աշխատանքը օրինականապէս և կամայականապէս ձեռքիցն առնելուց յետոյ։

Տաճիկ նուաճման ծրագրի էութիւնը՝ Հայաստանը Հայից պարզել և նրա տեղը մահմէտական տարրերով լցնելն էր. — ո՛ր սօցիալիստը պարտաւոր չէր ընկերային այս երևոյթի դէմ կռուելու։ Մի՞թէ մենք մի որոշ ազգութեան ու մարդկութեան անդամներ չէինք. մի՞թէ մեր պրօլետար դասակարգը լուռ ու մուռն պիտի մնար. և կովկասի մէջ գտնուող Հայերն էլ, իրենց բոլոր դասակարգերով միասին, ասէին թէ՛ մե՛զ ինչ. դա սահմանից միւս կողմն է, որի հետ մենք գործ չունինք։ — Դա մի զառամեալ փտած, հակասօցիալիստական գաղափար էր, որ մեր հակառակորդները պաշտպանոււմ էին՝ իրենց հոգու և սրտի աղքատութիւնը ցուցադրելով՝ ա՛յն ժառանգի։

Ե. — «Դուք և ձեր ընկերները, սօցիալ—դէմոկրատիայի պատգամաւորներդ՝ Պետական Դումայում, առանց ալիւայլութեան պէտք է պաշտպանէք զինուորական փոխառութեան խնդիրը»։

«Զինուորական փոխառութեան խնդիրը» պաշտպանում էին և՛ պահպանողականները, և՛ հոկտեմբերեանները, և՛ սահմանադիր—ռամկավարները, և՛ յառաջադիմականները, և՛ աշխատաւորականները. — ուրեմն նրանց հետ համընթաց պէտք էր լինել, քանի որ «երկրի», «հայրենիքի», «լեռնապաշտպանութեան», «ոռոս պրօլետարիատի և առհասարակ ոռոս աշխատաւորի» մի ընդհանուր խնդիր կար. — Դա այն թէ՛ղն է, որ կոչոււմ է ազգերի, հայրենիքների պատմա—անհատական գոյութեան խնդիր, որ ժօրէսը այնքան կորովամտօրէն պաշտպանել էր իլիդէ—մոմսօրբի յիշատակից հակաճառութեան ժառանգ. — էլ ինչո՞ւ, ուրեմն, խժրժանք՝ Պլեխանովի կողմից՝ ա՛յն ժառանգի։

Որ պատմական այդպիսի վայրկեաններում, մի սզգութեան ծոցի մէջ գտնուող բոլոր տարրերը, բոլոր դասակարգերը կը համագործակցեն, որպէս իրաւունք և պարտականութիւն, — դա էլ բնական է, և այսօրուայ Պլեխանովն էլ



ընդունում է, որ ա՛յդ այդպէս է:

Բայց երբ երէկ, ինչպէս և այսօր, այդ միևնոյնը մե՛նք էինք անուամբ, ինչո՛ւ, ուրեմն, «ազգայնականներ», «երկու-որականներ», «երկու ամիսի վրայ նստողներ» էինք համարուում: Մենք ինչո՛ւ, ուրեմն, իրաւունք չունէինք մե՛ր ազգի միւս շերտաւորումներից համագործակցութիւն, ընդհանուր պարտականութեան բաժանումն պահանջելու և նրանց հետ, այդ տեսակէտով, համընթաց լինելու կամ, աւելի ուղիղը, նրանց էլ մեր յետևից քաշելու, մեր գծի վրայ կանգնեցնելու. քանի որ սկզբնաւորողը, գործողը, ուղղութիւն տուողը մենք՝ սօցիալ դէմոկրատ Հնչակեաններս էինք եղած:

Զ.— «Փոխառութեան դէմ ձայն տալը՝ ուղղակի դաւաճանութիւն կը լինի (ժողովրդի հանդէպ), իսկ ձայնից հրաժարուիլը՝ վախկոտութիւն: Զայն տուեցէք փոխառութեան օգտին»։ — Բարի՛, Հարցը պարզուեց. բայց տասը, տասն և հինգ տարուց յետոյ:

Եզրակացութիւն:— Պիտանովը, այս նամակով ընդունում է՝ «ռուս երկրի», «ռուս հայրենիքի» գաղափարը:

Այսօր, «ռուս հայրենիքը», «ռուս երկիրը» վտանգաւոր հանգամանքների մէջ է գտնւում:

Նա թելադրում է իր ընկեր սօցիալ դէմոկրատներին՝ իրենց «բոլոր ոյժերը լարել» և միւս դասակարգերի հետ համագործակցել, նրանց համընթաց լինել, «սոսս երկիրը» և «ռուս հայրենիքը» իր «վտանգաւոր» դրութիւնից ազատելու համար:

Եւ այս գաղափարները պաշտպանողը ինքը սօցիալ-դէմոկրատ է և Ռուս Ս. Դ. Բ. Կուսակցութեան տեսաբանը:

Ռուս սօցիալ դէմոկրատներն էլ, իրենց թելադրուածը անելով՝ մնում են սօցիալ-դէմոկրատներ. — ո՛չ «ազգայնական» են դառնում, ո՛չ էլ «երկուորական» կամ «երկաթոռական»:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութիւնը ընդունում է Հայ հայրենիքի գաղափարը:

Հայ երկիրը, Հայ հայրենիքը գտնւում է ո՛չ միայն վտանգաւոր, այլ անուշիկ դրութեան մէջ՝ չատ երկար, մասնաւորապէս 30—40 տարուց ի վեր:

Նա թելադրում է իր սօցիալ-դէմոկրատ ընկերներին՝ իրենց բոլոր ոյժերը լարել և միւս դասակարգերի հետ համագործակցել՝ երկիրը և հայրենիքը իր այդ արիւնաթաթաւ դրութիւնից ազատելու համար:

Այդ գաղափարները պաշտպանողը, ուրեմն, ճշմարիտ սօցիալ-դէմոկրատ Կուսակցութիւն է. — ո՛չ «ազգայնական» է, ո՛չ «երկուորական», ո՛չ էլ «երկաթոռական»:

Նոյն գաղափարները երևում, գործում են երկու միջավայրերի մէջ. — այս վերջին եզրի բաղդատութեան դժբախտ առաւելութիւնը մեր կողմն է:

Հիմա հարցը, իր գլխաւոր և էական գծերի մէջ՝ պարզուեց, սպասուեց և վերջնական ձև ստացաւ:

Մեր Կուսակցութիւնը, այդ գաղափարների տեսակէտով, խժեռողները՝ այսուհետև իրենց տգիտութեան և իմաստակութեան վկայականի հաշուին աշխատած պիտի լինեն:

Իսկ եթէ լինին սօցիալ-դէմոկրատներ, գիտական սօցիալիզմի անունով խօսողներ, որոնք այն թէզը պաշտպանեն թէ Պետութիւն և Ազգութիւն հոմանիշ են, որ պատմականապէս նուաճող ազգերը դադարում են ազգ լինելուց և հայրենիք ունենալուց. — դա արդէն ո՛չ միայն իմաստակութիւն, ո՛չ միայն հակասօցիալիստական գաղափար կը լինէր, այլ թանձրացեալ տգիտութեան մի գլուխ գործոց, որի կողմնակիցները առաջուրնէ քաջութիւն, և խիկարական իմաստութիւն, պիտի ունենային՝ բռնապետութեան, նուաճողականութեան, պատմական ոյժերի անշարժութեան գաղափարը պաշտպանելու, բոլոր կատարուած իրողութիւնները ընդունելու՝ որպէս վերջնական, անշարժ ձև՝ բարձր պատմական բոլոր հոսանքներից. — ինչ որ անհեթեթութեանց անհեթեթութիւնը պիտի լինէր:

Ու սրանից յետոյ, մենք ճակատաբաց՝ այսօրուայ և երէկուայ պատմական եղելութիւնների առաջը կանգնած՝ ասում ենք, որ մեր գրածներից, մեր հրատարակութիւններից, բարեբախտաբար, և ո՛չ մի տող ջնջելու բարոյական պարտաւորութեան տակն ենք գտնւում: Նոր անցքերը մեզ հերքում չը տուեցին: Մեր երկիւղան ասածները այսօր լիակատարապէս արդարացան, որպէս ընդհանուր գաղափարա-



բանութիւն՝ մեր հակառակորդները կողմից էլ.— եթէ դրա պէտքը մնացել էր:

Յուզուած այս խնդիրները առթիւ՝ Ս. Դ. Հնչակեան գրականութիւնը շատ հարուստ է:

Հարցերի աւելի խորը թափ սնցել ուզողներին և մեր կուսակցութեան դիրքն ու գաղափարաբանութիւնը աւելի հիմնապէս ուսումնասիրել ցանկացողներին՝ յանձնարարում ենք կարդալ:

«Երիտասարդ Հայաստան», 1904—1905:

«Հնչակ», 1906, թիւ 1—2, — «Հնչակեան կուսակցութիւնը»:

» » » 3. — «Մի քանի ակամայ խօսքեր»:

» » » 4. — «Լուսանցքում»:

» » » 6. — «Լուել կամ գործել»:

» » » 9—10. — «Գալիքի հանդէպ»։ «Մենք ու մեր քննադատները»:

» » » 12. — «Հին ցաւը»։ «Սօցիալիզմ և Պանարմէնիզմ»:

» 1907 » 1. — «Սօցիալիզմ և Հայկական խնդիր»:

» » » 2. — «Կա՛յ երկուութիւն (դուալիզմ) մեր դաւանած սկզբունքների մէջ»:

» « » 5. — «Եւթադանի թէօրիան»։ «Թիւրքիայի շուրջը»:

» » » 6. — «Սօցիալիզմ և ազգութիւն»:

» » » 7. — «Եւրոպա, Թիւրքիա և Հայկական խնդիր»։ «Միջազգային կեանք»:

» » » 9—10. — «Սկզբունքային խնդիրներ»։ «Միջազգային կեանք»։ Շտուտգարտի կօնդէսը»:

Ուշիմ ընթերցողը հետեւեալ եզրակացութեան պիտի հասնի:

Ա. — Ս. Դ. Հնչակեան կուսակցութիւնը, զիտական սօցիալիզմից բխող, Միջազգայնական սկզբունքներ ունի:

Բ. — Ընդունում է դասակարգային կռիւ, որի բաղաժան արտայայտիչ ազդակն է ինքը:

Դ. — Պաշտպանում է Հայ Ազգի և Հայ Հայրենիքի պատմաւորական գոյութեան իրաւունքը և նրա ազա-

տագրութեան գաղափարը՝ համաձայն իր ծրագրի մօտաւոր և հեռաւոր նպատակներին:

Դ. — Նա կանգնած է սօցիալ-դէմոկրատական հողի վերայ ա՛յն բոլոր վայրերում, ուր ինքը կազմակերպութիւններ ունի:

Ե. — Պարտաւորեցրել է իր բոլոր շրջանների կազմակերպութիւններին՝ սօցիալ-դէմոկրատական գործունէութիւն ունենալ՝ համաձայն իրենց տեղական պայմաններին:

Զ. — Հայ ազգային խնդրի, Հայ Ազատագրութեան գործի, Սկզբունքային հարցերի տեսակէտից՝ այդ բոլոր շրջանները մի ամբողջութիւն են կազմում միանման իրաւունքով և պարտականութեամբ:

Է. — Նա ունի կեդրոնացման սխաւէմ. շրջանային վարչական հաստատութիւնների ինքնավարութեան ձևով:

Միանից յետոյ՝ աւելացնում ենք, որ մեզ հետաքրքրող հարցը լուսաբանուած, փակուած է:



## ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ

Պատմութեան տուիքներին համեմատ՝ որպէս ամբողջա-  
ան մի զրգանիզմ և բարոյական անձնաւորութիւն, որպէս  
պատմական անհատականութիւն և հաւաքական մի մարմին,  
Հայ Ազգը եղել է անհուն կորովի, անսպառ եռանդի մի  
աղբւրս — Դա նրա ազգային յատկանիշն է:

Իր կամքին հակառակ ստեղծուած միջավայրին, խեղդող,  
կաշկանդող պայմաններին՝ նա երբէք չի յարմարուել, չի  
համակերպել վերջնականապէս: Նա միշտ ըմբոստացել է,  
ալեկոծ, վարար կեանք է ունեցել: — Դա նրա առնականու-  
թեան ստորոգելին է:

Նա միշտ ձգտել է, աշխատել է իր համար նոր միջավայր  
ստեղծել. աչքը շարունակ բարձրացրել է դէպի վե՛ր, դէպի  
անհո՛ւն հորիզոններ. և միշտ էլ քայլե՛լ, քայլե՛լ է՝ դէպի  
յառաջ: — Դա նրա իսկապէս հոգու յայտարար նշանն է:

Հայը՝ անջրդի անապատները՝ արգասաբեր դաշտերի է  
վերածել. անհամբոյր բնութեան նուաճող ոյժերից մէկը  
հանդիսացել: Աւերակները շէնցրել, կոծանուածներէր Նո-  
րերը կերտել. և բարօրութիւնը, երջանկութիւնը իր սեպհա-  
կան աշխատանքի, իր ճակատի քրտինքի մէջն է տեսել: —  
Դա նրա շինարար հսկանարի ապացոյցն է:

Հայ Ազգը՝ Ասիական խաւարի մէջ՝ Արեւմտեան քաղա-  
քակրթութեան ջահակիրը, փարոսն է եղել: Նա ընկել, կանգ-  
նել է, անհաւասար կռիւներ շատ է մղել. բայց միշտ էլ,  
լուսոյ կերօնը ձեռքին է մնացել: Դա նրա պատմական միս-  
սիան է:

Թողնենք, որ այդ մեծ Ազգը — Անհատը մեռնի, լուսոյ  
այդ ջահը խաւարի, ստեղծագործող այդ հոգին մարի: — Եր-  
բէ՛ք:

Այն ժամանակ, մարդկութեան մի ազնիւ անդամը կան-  
հետանար:

Յառաջադիմութեան, քաղաքակրթութեան մի զօրաւոր  
ազդակը կը չքանար:

Կը կատարուէր անքաւելի ոճիրը, և խաւարի յաղթա-  
նակը կը տիրէր: — Ո՛չ երբէք:

Հայը պիտի ապրի:


Ու նրա Գոյութիւնը, նրա կեանքը, նրա Ազատագրու-  
թիւնը ապացոյց կը լինի արդարութեան, ճշմարտութեան,  
իրաւունքի, լուսոյ յաղթանակին՝ ընդդէմ բռնութեան, խա-  
ւարի, պատմական մեռնող ոյժերի:

Եւ այդ Մեծ Գործի համար՝ սկսած Պատմական Պայքա-  
րը պիտի շարունակենք՝ անդուլ, անդադար, ազգային ամ-  
բողջ կորովով:


Բոլոր դասակարգերը, ընկերային բոլոր չերտաւորումնե-  
րը, Մայր — Հայրենիքի և Նրանից հեռու գտնուող բոլոր Հա-  
յերը, առանց դասակարգի և սեռի խտրութեան, աշխարհա-  
գրական թնչ լայնութեան, ընկերային թնչ դիրքի մէջ էլ որ  
գտնուեն՝ Հայ ազգային Դատի ֆիզիքական, բարոյական,  
նիւթական ազդակը պիտի հանդիսանան, մէկը միւսին գե-  
րադանցելով:

Հայը կապրի:

Վ Ե Ր Ձ









**Ս. ՍԱՊԱՀ - ԳԻՒԼԵԱՆԻ**  
**ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

---

1. — ԵՐՈՊԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲԵՐԼԻՆԻ  
ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՅ ՅԵՏՈՅ.
2. — ԳՈՐԾԱԽՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ.
3. — ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԸ.
4. — ՍՕՅԻԱԼԻԶՄ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ. Պրակ I
5. — ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻԻՐԲԻԱ.
6. — ՀԱՐՅԱՐԱՆ (հողային).
7. — ՀԵՐԿԵՐ ԵՒ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵԱՅԲՆԵՐԸ.
8. — ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ.

